

ՀԱՅ ԱՐԻԱԿԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

1993 - 2003

Գիրքը նվիրվում է ՀԱՄ կառույցի հիմնադրման 10-ամյակին

«Հայ Արիական Միաբանություն» - 2003թ.,

Գիրքն ավելի քան տաս տարվա գործնական ու գաղափարական պայքարի ծնունդ է, և նրանում արժարժված գաղափարախոսությունն ու տեսակետները արդեն կյանքի իրավունք ունեն: Առավել ևս, որ դրանք Արարչածին են և համահունչ բնությանը, մեր նախնայաց դավանած ՏԻԵՁԵՐԱԿԱՐԳ-ին: Հայ Արիական Միաբանությունը կարևորելով ներկայումս Հայության իր Առաքելության Արահետով այլևս չարժվելու խիստ անհրաժեշտությունը, առաջնորդվելու է բնապաշտական սկզբունքներով և սույն աշխատությունը հայ հանրության մեջ ավետում է Հայ Արիականության գաղափարախոսության հաղթարշավը...

(Երկրորդ հրատարակություն)

* * *

ՀԱՅ - ԱՐԻԱԿԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ (ՀԱՄ)

(Հայ Ցեղային Միություն)

* * *

Հայ Արիական Միաբանության (ՀԱՄ) առաքելությունն է իր կենսաօրենքներով ուղղորդվող Հայ-Արիական Ցեղի Հայ Ազգի1 Ցեղապաշտ ընտանիքների միջոցով արթնացնել Նախնայաց Գեների հիշողությունը, դառնալ Ակունքներին՝ Հայ-Արիական-Ցեղապաշտական (իմա՝ Հայկական-Ցեղապահպանական) կացութաձևին՝ Ազգային Ինքնությունը վերաիմաստավորելու և բնական (Տիեզերական) ներդաշնակ Օրենքով (ՏԻԵՁԵՐԱԿԱՐԳ-ով, որից էլ՝ Հայկականություն2) առաջնորդվելու, ինչպես նաև՝ հզոր Հայկական Միացյալ Պետությունը (Մեծ և Փոքր Հայքեր, Կիլիկյան Հայաստան) վերականգնելու նպատակով...

ՀԱՄ-ը ծրագրում է իր նպատակներն ու խնդիրները լուծել հատկապես Հայության հոգևոր՝ ոգեղեն-գաղափարական զարթոնքի միջոցով, հետևողական, համբերատար աշխատանքով՝ հավատարիմ մնալով Հայկականության* սկզբունքին:

Գիտակցելով, որ հասարակության որոշ շերտերում ՀԱՄ-ի ծրագիրն ու գաղափարախոսությունը ճիշտ չի ընկալվելու և մեկնաբանվելու, ՀԱՄ-ը իր գործունեության ընթացքում հենվելու է Հայ Ազգի Սերուցքի (Ներուժի) վրա՝ ստեղծելով Հայ-Արիական3 ներցեղային օրենքներով ու բարոյականությամբ առաջնորդվող Հայ Ցեղապաշտ (Ցեղահաղորդ) ընտանիքներ, որոնք կնպաստեն Հայ-Արիական-Ցեղապաշտական (իմա՝ Հայկական-Ցեղապահպանական) ապրելակերպի ու մտածողության հաստատմանը, ՀԱՄ-ի Գերագույն Նպատակի իրականացմանը...

ՀԱՄ-ի հիմնադրումից հետո հռչակագիրը, ծրագիրն ու կենսաօրենքները (վարքականոնը) անհրաժեշտաբար լրամշակվել են և այժմ ներկայացվում են ամբողջությամբ:

*Հայկականություն (Հայիզմ) — ՀԱՄԱԿԱՐԳ՝ հիմնված հատկապես հայկական, արիական, շումերական, հնդիրանական, արքադական, ասուրա-բաբելական, հունական, հրեական և այլ հնագույն ազգերի՝ արդեն պեղված պատմական փաստաթղթերի, իրեղեն ապացույցների, ավանդազրույցների, առասպելների և այլ կարգի տեղեկության վրա:

Հայկականությունը որպես Աստվածային Տարածքում՝ Հայքում, Աստծո Ընտրյալ Տեսակի՝ Հայերի՝ Մարդ-Աստվածների, պատմաքաղաքական յուրօրինակ գաղափարախոսություն, նախապես ստեղծվել է 1990-ական թվականների սկզբին: 1993թ. տարեվերջին հստակեցվել են Հայկականության գաղափարական հիմնադրույթներն ու առաջիկա նպատակները, այնուհետև, աստիճանաբար ու հետևողականորեն ընթացել են գաղափարախոսության ամբողջական, համակարգված ձևավորումը, կազմավորումը: 1996--1997թթ. Հայկականությունը՝ որպես ՀԱՄԱԶԳԱՅԻՆ (Համահայկական) ՀԱՄԱԿԱՐԳ (նախապատմություն, գաղափարախոսություն, պետական կարգ և օրենքներ, կենցաղավարություն, քաղաքականություն, տնտեսություն, գիտություն, մշակույթ, կրթություն և այլն), ամրագրվել է որպես ՀԱՄ-ի Ցեղապաշտ ընտանիքների առաքելության իրականացման ուղեցույց...

Հայկականությունը գենետիկային (ժառանգական, ծինաբանական) հիշողության և պատմական անցյալի իմացության համադրության, համատեղության արդյունք է և զարգանում է Գենի՝ օրինաչափ բացահայտումներին ու պատմական շարունակական ուսումնասիրություններին համընթաց: Այդ իսկ պատճառով Հայկականությունը մասամբ դեպի Նախնյաջ Ծննդի Ակունք տանող աննախադեպ պատմություն ու նախազաղափար է, ինչպես նաև՝ Նախնյաջ պաշտամունքի ու հավատքի մեկնաբանության սկզբնաղբյուր...

1. - Հայերին տալով Ցեղ, Ազգ և Ժողովուրդ որակումները՝ սույն աշխատությունում (մեր մեկնաբանություններում) Հայ Ցեղը բնորոշվում է որպես Հայության նախահինք, Գեն և Արյուն՝ Հոգեմարմնական Տեսակ, Հայ Ազգը՝ որպես Տեսակի որակական (հոգևոր, մտավոր ու մարմնական) զարգացման արդյունք, Ազգային Ինքնության բացարձակ ու կազմակերպված դրսևորում, իսկ Հայ Ժողովուրդը՝ որպես Հայության որակական անկման հետևանք՝ բազմաբնույթ ու բազմաշերտ և ոչ միայն Ազգային ավանդույթներով առաջնորդվող հանրություն (հասարակություն):

2. - ՀԱՍԱԿԱՐԳ՝ տես Հայկականություն:

3. - Հայ-Արիական ներցեղային օրենքներն ու բարոյականությունը ձևավորվել են հազարամյակների ընթացքում, որպես անբեկանելի համադրության արդյունք՝ ներառելով ինչպես ընդհանուր Արիական, այնպես էլ զուտ ինքնատիպ Հայկական ավանդական կացութաձևն ու բարոյականը:

Ծանոթագրություն.

— «Արիական» եզրը (տերմինը) սույն աշխատանքում կիրառված է գիտության մեջ ներկայումս առավել ընդունված «Հնդեվրոպական» հասկացության փոխարեն: Նշենք, որ մինչև 2-րդ աշխարհամարտի տարիները գիտության մեջ նույն իմաստով գործածվում էր «Արիական» եզրը, որը գերմանական նացիստների գործունեության հետ զուգադրվելով՝ հանրավի դուրս մղվեց շրջանառությունից և փոխարինվեց աշխարհագրական «Հնդեվրոպական» հասկացությամբ: Մենք, հավատարիմ մնալով պատմագիտական ավանդույթին, նախընտրում ենք «Արիական» եզրը, քանզի մեր դավանած Հայ-Արիական գաղափարախոսությունը որևէ կապ չունի հիտլերյան նացիզմի (ֆաշիզմի) հետ. չմեղանչելու համար Պատմական Արդարության և մեր Առաքելության դեմ՝ մենք չենք մերժում նաև այն արժեքները, որոնք վարկաբեկվել կամ անվանարկվել են հիշյալ այլամերժական գաղափարախոսությունը կրողների կողմից:

— Արիական ազգերն ու ժողովուրդները աշխարհում կազմում են ցեղակից լեզուներով (լեզվաբարբառներով) խոսող ամենամեծ լեզվարնտանիքը: Արիական Մայր Ցեղից տրոհված, ներկայումս ապրում են ավելի քան 150 ցեղակից ազգ ու ժողովուրդ՝ աշխարհի մոտ 200 պետությունում, որոնք քաղաքակրթության հիմնական արժեքների կրողները եղան պատմության բոլոր փուլերում:

— Արիական Մայր Ցեղն ապրում էր Հայկական Լեռնաշխարհում և հարակից տարածքներում: Տրոհումից հետո ցեղակից Արիական ազգերն ու ժողովուրդները տարածվեցին աշխարհով մեկ՝ ստեղծելով իրենց երկիր-պետությունները, իսկ Նախահայրենիքում մնաց և իր քաղաքակրթությունը ստեղծեց Հայ Ցեղը (որի անունով էլ լեռնաշխարհը կոչվեց Հայկական, իսկ երկիրը՝ Հայք-Հայաստան):

— Ժամանակակից լեզվաբանության մեջ «Հայ» անվան առավել հավանական ստուգաբանությամբ այն առաջացել է Արիական «Տեր» արմատից: Նույն արմատից է առաջացել նաև «Հայր» բառը: Շատ ուշագրավ է, որ ըստ Մովսես Խորենացու՝ Հայկ Նահապետը մեր Բարձրավանդակի Կենտրոնը կոչեց Հայք՝ Հայրերի երկիր: Կա մի այլ տեսակետ էլ, ըստ որի՝ մեր անունը կապվում է Հայա Աստծո հետ, որի որդին էր Հայկ Նահապետը: Իսկ մեզ տրված մեկ այլ անուն՝ Ար(ի)մենը, առնչվում է Ար Աստծո (Արամ, Արման, Արմեն) հետ:

— Ըստ արիական, շումերական, արքադական, բաբելոնյան, ուգարիթյան, միջագետքյան, ինչպես նաև աստվածաշնչյան ու այլ աղբյուրների՝ Հայկական Լեռնաշխարհը Աստվածային, Սրբազան Տարածք է, որի բնակիչները՝ Հայերը, հատուկ ունակություններ ունեն և օժտված են Աստվածային որակներով: Ուստի Հայերին ու իրենց ժառանգներին մենք կարող ենք անվանել Մարդ-Աստվածներ:

— Հնագույն Ազգերի, հատկապես շումերների պատմական աղբյուրներում, Արատտայի (Հայաստանի հին անվանումներից) բնակիչները կոչվել են Բնության ու Ջարթոնքի Աստծո Ընտրյալ Ժողովուրդ (Ժողովուրդն Արատտայի, որը տարբերվել է մյուս ժողովուրդներից...): Հայաստանը Աստվածային Սրբազան երկիր է արձանագրված բազմաթիվ պատմական փաստաթղթերում (հիմնականում՝ ոչ հայկական) և անվիճելի է, որ բնիկներն ունեցել են վեր(գեր)մարդկային՝ Աստվածային (Արադչական) Որակներ: Այսպիսով, ոչ թե մենք, այլ օտարներն են մեզ և մեր հայրենիքին «Աստվածային», «Ընտրյալ» որակումները տվել:

Հայ Արիական Միաբանության (ՀԱՍ)
Ստեղծման Համառոտ Պատմություն

1989թ. Արցախյան շարժմանը զուգահեռ ընթանում էր նաև Հայաստանի (Հայկական ԽՍՀ) անկախացման շարժումը (հետագայում՝ ազգային-ազատագրական պայքարը) և ադրբեջանական զինված կազմավորումներին բախվելուց բացի առկա էր նաև խորհրդային բանակի հետ ընդհարվելու վտանգը ...

Մինչ այդ, պատմական անխուսափելի և օրինաչափ անցուդարձի ընթացքում, ապազգային (հակազգային) ուժերը գրեթե անթերի կազմակերպված պառակտիչ գործունեություն էին ծավալել, և իրար հաջորդելով՝ մասնատվում էին քաղաքական խմբավորումներն ու ուժ մերկայացնող կազմակերպությունները, որի հետևանքով թուլանում է և՛ Արցախյան շարժումը, և՛ Անկախության համար մղվող պայքարը...

Պառակտման ալիքը ցնցեց նաև պայքարի բովում իր տեղը գտած Հայաստանի Ազգային Անկախություն Կուսակցության (ՀԱԱԿ) հիմքերը և այն բաժանեց երկու մասի: Միավորվելու բանակցություններն արդյունք չտվեցին: Եվ որոշ բանակցություններից հետո որոշվեց ստեղծել «Հայ Ցեղակրոնների Ուխտ» (ՀՑՈՒ) կիսաքաղաքական-կիսավրիժառուական (պաշտպանական) կազմակերպությունը՝ քաղաքականությամբ զբաղվելուց բացի, նաև՝ սպասվող ամենատարբեր ուժային գործողություններին դիմակայելու նպատակով: Կազմակերպության ծրագիրն ու կանոնագիրը հիմնականում պատրաստ էին և Աբովյան քաղաքում պետք է տեղի ունենար ՀՑՈՒ հռչակումը (նախատեսված էր 1989թ. նոյեմբերի 30-դեկտեմբերի 1), սակայն դա տեղի չունեցավ, և մասնատված ՀԱԱԿ-ի թեկնածուները, Հայ Ազգային Կուսակցության (ՀԱԿ) հիմնադրման ժամանակ, առաջարկվեց ստեղծվող կուսակցությունն անվանել Հայ Ցեղակրոնների Կուսակցություն (ՀՑԿ, պաշտոնաթերթը՝ «Արյան Կանչ»), բայց առաջարկությունը բավարար աջակցություն չստացավ, և Նժդեհյան Ցեղակրոնությանը դառնալը անորոշ ժամանակով հետաձգվեց...

1990թ. փորձ արվեց Ցեղակրոնությունը հաստատել Հայոց Ազգա- յին Բանակի (ՀԱԲ) գաղափարախոսության հիմք, իսկ Նժդեհականությունը՝ հայ զորականի հոգեմարմնական կերպարը բնութագրող ուսմունք: Այդ ուղղությամբ արդեն կատարվում էր նպատակային աշխատանք, նույնիսկ կար տեսանելի արդյունք, սակայն, ՀԱԲ-ի լուծարումը կասեցրեց Նժդեհյան Ցեղակրոնության առաջընթացը...

Այնուամենայնիվ, Հայաստանում օրինաչափորեն ստեղծվեցին Ցեղակրոն ուսմունքով առաջնորդվող կազմակերպություններ ու խմբավորումներ և նրանցից մեկի՝ Հայ Արիական-Ցեղապաշտական Կուսակցության (ՀԱՑԿ) հիմնադրումը տեղի ունեցավ Աբովյան քաղաքում, 1993թ. դեկտեմբերի 15-ին (ՀԱՄ հիմնադրելու նպատակով): Սակայն դաշնակցական, ռամկավարական, համայնավարական, հիշական և այլ կուսակցական ու անկուսակցական մի շարք (մոտ 10) թերթերին ուղարկված հռչակագրի և ծրագրային հիմնադրույթների շարադրանքը չտպվեց: Միայն 1995թ. հուլիսի 21-ին, Աբովյանի շրջանային «Կոտայք» թերթում (թիվ 8 (6079)) ՀԱՑԿ-ի (մինչ այդ ՀԱՑԿ-ն Դաշինքի էր վերածվել) ներկայացուցիչների ջանքերով տպագրվեցին ՀԱՑԿ-ի հռչակագիրը և հիմնարար հատվածներ ծրագրից...

Շուտով անվանափոխված ՀԱՑԿ-ն՝ Հայ Արիական-Ցեղապաշտական Դաշինքը (հռչակագրում, ծրագրում և կենսաօրենքներում որոշ լրացումներ կատարելուց հետո) համալրվեց, և 1996թ. փետրվարի 12-ին մի քանի ընտանիք կազմավորեց ՀԱՑԿ-ի Գերագույն Խորհուրդը (ԳԽ), որն էլ արագորեն սկսեց զբաղվել նպատակային գործունեությամբ...

Մինչև 1996թ. ՀԱՑԿ-ում կար մեկ Ցեղապաշտ ընտանիք, որը գործում էր բազմաթիվ համակիրների օժանդակությամբ: 1995թ. համագործակցելով, իսկ 1996թ. համալրելով ՀԱՑԿ-ն՝ այդ ընտանիքները նույն թվականին կազմավորեցին ՀԱՑԿ-ի Աբովյան քաղաքի և Կոտայքի շրջանի, հետագայում՝ Կոտայքի մարզի համայնքը...

1996-1997թթ. ՀԱՑԿ-ն ներգրավվեց ինչպես Աբովյանի, այնպես էլ Հայաստանի հասարակական-քաղաքական կյանքի զանազան ոլորտներում և նպատակաուղղված հարաբերություններ սկսեց ամենատարբեր քաղաքական, հատկապես՝ հայ ազգայնական, արիական, նաև այլ ուղղվածությամբ գործուն ուժերի հետ: Սերտորեն համագործակցելով մի քանի ազգային-ազգայնական և այլ խմբավորումների ու կազմակերպությունների հետ, Երևանում ՀԱՑԿ-ն մասնակցեց (Աբովյանում նախաձեռնեց) Հայոց պատմության ուսումնասիրման և ազգային միասնական Հայկական գաղափարախոսության մշակման աշխատանքին՝ «Արարչական Դաշտ» (Հայ-Արիական գաղափարախոսության ուսումնասիրում), «Ազգային Դաշտ» (Ցեղակրոն ուսմունքի ուսումնասիրում) միավորումներում, և այլ կառույցներում (Տարոնականության, Հայկական ծագումնաբանության, հեթանոսական վարդապետության, տոհմաբանության... ուսումնասիրում):

1994-1996թթ. մի քանի անգամ (այս դիմումներն առիասարակ անպատասխան մնացին), իսկ 1997թ. հունվարից սկսած՝ ՀԱՑԿ-ն յոթ անգամ դիմեց ՀՀ Արդարադատության նախարարություն՝ պետական գրանցում ստանալու համար, և միայն տարեվերջին գրանցվեց որպես հասարակական կազմակերպություն: Իսկ 1998թ. մարտին գրանցվեց նաև Հայ Արիական-Ցեղապաշտական Կուսակցություն (ՀԱՑԿ) հասարակական-քաղաքական կազմակերպությունը, որի հիմնադիրը ՀԱՑԿ հասարակական կազմակերպության անդամներն էին: ՀԱՑԿ-ն, թեև ուներ իր կանոնադրությունը,

որպես գաղափարախոսական հիմք ընդունեց ՀԱՅԴ-ի գաղափարական հիմնադրույթները, նպատակներն ու խնդիրները:

1998թ. առաջին կեսին ՀՀ Արդարադատության նախարարությունում գրանցվեց նաև ՀԱՅԴ հասարակական և ՀԱՅԿ հասարակական-քաղաքական կազմակերպությունների համատեղ պաշտոնաթերթը՝ «Հայ-Արիա» շաբաթաթերթը:

...1998թ. ապրիլին, Երևանում ՀԱՅԴ-ն մասնակցեց Հայ Ազգայնական Դաշինքի (ՀԱԴ) ձևավորմանն ու հիմնադրմանը, որին այնուհետև (քաղաքական խնդիրներում) միացավ ՀԱՅԿ-ն: ՀԱԴ-ն իր տեսակի մեջ եղավ Հայ ազգայնականներին համախմբած (միևնույն գաղափարական հիմնադրույթների, նպատակների և կանոնագրի շուրջ) առաջին միավորումը և այս հաջողված փորձը ՀԱԴ-ի հետ համագործակցելու լուրջ հիմք տվեց տարբեր ազգային-ազգայնական ուժերին, ինչպես առանձին կազմակերպություններին, այնպես էլ՝ անհատներին: Միևնույն ժամանակ Արվյանում (Կոտայքի մարզում բանակցությունները որոշ ժամանակով ձգձգվեցին) ՀԱՅԴ-ն, ապա նաև ՀԱՅԿ-ն, նախաձեռնեցին և մասնակցեցին Ազգային Ռեզերվի Միացյալ Դաշինքի (ԱՌՄԴ) հիմնադրմանը, որը կարճ ժամանակում համախմբեց քաղաքում գործող մոտ 20 հասարակական և քաղաքական կազմակերպությունների: ԱՌՄԴ-ն եռանդուն ու նպատակային գործունեություն ծավալեց Արվյանում՝ կարողանալով ազդել ինչպես հասարակական, այնպես էլ քաղաքական ու այլ իրադարձությունների վրա:

Այնուհետև, 1998թ. կեսերին ՀԱՅԿ-ի նախաձեռնությամբ Արվյանում կայացավ Միասնական Պայքարի ճակատի (ՄՊՃ), իսկ 1999թ. հունվարին՝ Երևանում՝ Հայ Արիական (Արիների) Բռունցքի (ՀԱԲ) հռչակումը, որոնք էլ իրենց դերակատարումն ունեցան հանրապետության հասարակական ու քաղաքական կյանքում: ՄՊՃ-ն Արվյանում մինչև տարեվերջ ղեկավարեց սոցիալ-տնտեսական, իրավական-քաղաքական բարեփոխումների շարժումը՝ այդ ընթացքում քաղաքում անցկացնելով հանրահավաքներ, ուղիղ հեռուստաեթեր ու այլ միջոցառումներ, իսկ ՀԱԲ-ը, նախկին Հայոց Ազգային Բանակի հիմքի վրա, կազմակերպեց Ցեղակրոն և Արիական մի շարք ուժերի համախմբումը... ՀԱԲ, նույնպես քաղաքական-գաղափարախոսական միավորում, որի հիմնադիրներն էին ՀԱՅԿ-ն և նախկինում՝ 1989-1990թթ. Հայաստանում գործող (Հայաստանի անկախացմանը մեծապես նպաստած, տարածքային ամբողջականությունը պաշտպանած) Հայոց Ազգային Բանակ (ՀԱԲ) ռազմական կազմավորման հրամանատարական կազմը: Շատ արագ այս դաշինքին միացան մի քանի կազմակերպություններ (հիմնականում՝ Արցախյան պատերազմում զոհված և վիրավորված ազատամարտիկների ընտանիքների խնդիրներով զբաղվող): 2000թ.-ին ստեղծվեց նաև Հայ Արիական Միաբանությունը (ՀԱՄ), քանզի ՀԱՅԴ-ՀԱՅԿ-ն ակնկալում էին հետագայում ՀԱԴ-ի, ՀԱԲ-ի և ՀԱՄ-ի միավորմամբ Հայաստանում ստեղծել ազգայնական հզոր քաղաքական-գաղափարական ուժ: ՀԱՅԴ-ՀԱՅԿ-ն առաջնորդվում են Հայկականության և Արիականության (Համաարիականության) գաղափարախոսությամբ և համագործակցում են ինչպես հայ, այնպես էլ այլազգի տարբեր ուժերի հետ, որոնց դիրքորոշումներն ու նպատակները չեն հակասում Հայաստանի ու հայության շահերին: 2000թ. սեպտեմբերի 15-ին ՀԱՅԴ-ն և «Երթուն» Ազգային Իմաստության Տաճարը համախոհների հետ հայտնեցին Հայաստանում Ազգային Ոգեղեն-Գաղափարական Զարթոնք նախաձեռնելու մասին, որը պիտի վերածվեր Հայոց Վերածնունդն իրականացնող շարժման: 1999թ. ՀԱՅԴ-ՀԱՅԿ-ն մասնակցեցին ՀՀ Ազգային Ժողովի, տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին՝ առաջադրելով Աժ պատգամավորի, Արվյանի քաղաքապետի, ավագանու անդամների, և մի քանի մարզերում գյուղապետերի ու ավագանու անդամների թեկնածուներ, իսկ 2000թ.՝ Արվյանի ԱՌՄԴ-ի հետ՝ ՀՀ նախագահի ընտրություններին: 2002-2003թթ.-ին անցկացվող ընտրություններին մասնակցեց արդեն ձևավորված ՀԱՄ կառույցը՝ առաջադրելով, պաշտպանելով համայնքի ղեկավար (քաղաքապետ, գյուղապետ), ավագանու անդամ, ՀՀ նախագահի և Աժ պատգամավորի թեկնածուներ:

2000-2002թթ. ՀԱՅԿ-ն իր գործունեությամբ հաստատուն և ուրույն տեղ գրավեց Հայաստանի հասարակական-քաղաքական դաշտում՝ որպես ազգայնական գործուն կառույց, և «Ազգայնական ակունք»-ի, «Նժդեհյան Ցեղակրոն» կուսակցության ու «Հայ Դատ» կազմակերպության հետ որոշակիացրեց Հայաստանի դասական ազգայնական դաշտը: Սերտ համագործակցություն ծավալվեց նաև ՀՀ «Հայ-Արիներ» Հայկազունների ազգային (սկաուտական) միության, «Արորդաց Ուխտ» համայնքի, Հայաստանի ժողովրդային շարժման (ՀԱՀԳԲ-ի (ASALA) հասարակական-քաղաքական թև), «Մաշտոց միավորման» հետ՝ Հայաստանի հանրակրթական ու այլ ուսումնական հաստատություններին, հայագիտության և լեզվաքաղաքականության ոլորտին առնչվող հարցերում: Ամենատարբեր կազմակերպությունների հետ մասնակցեց ՀՀ կյանքի տարաբնույթ անցուղարձին (հանրահավաքներ, երթեր, ցույցեր, իրավական և սոցիալական պաշտպանության հարցեր, տոնակատարություններ, գիտաժողովներ, ասուլիսներ և այլ միջոցառումներ, որոնցից նշանակալիցը՝ հազարամյակներ հետո Արագածից բերված Նավասարդյան խաղերի կրակն էր և Հայաստանի Արիական ուժերի գիտապատմաշակութային համաժողովը): Առավել աշխույժ գործունեություն ծավալվեց նաև ՀՀ-ում օտարերկրյա դիվանագիտական ներկայացուցչության և սփյուռքահայ շրջանակների հետ:

ՀԱՅԴ-ՀԱՅԿ-ն համակիր և օժանդակ անդամների մեծ շրջանակ ունեն Երևան, Արվյան, Հրազդան, Զարենցավան, Եղվարդ, Նոր-Հաճըն, Բյուրեղավան, Վանաձոր, Ստեփանավան, Աշտարակ, Ապարան, Գյումրի, Ամասիա, Գորիս և այլ քաղաքներում ու գյուղերում, Կոտայքի, Շիրակի, Սյունիքի, Լոռու և այլ մարզերում, նաև Արցախում (Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն, Քաշաթաղի մարզ) և

սփյուռքահայության մեջ (ԱՄՆ, Ռուսաստանի Դաշնություն, Ուկրաինա, Կանադա, Ֆրանսիա, Հունաստան, Կիպրոս, Մեծ Բրիտանիա, Գերմանիա, Շվեդիա, Իրան, Լիբանան, Սիրիա, Վրաստան (Ջավախք) և այլն): Ներկայումս այս բոլոր կառույցները մտել են Հայ Արիական Միաբանության մեջ: ՀԱՄ-ի կառույցը հիմնադրվել է 2000թ.-ին, շուրջ յոթ տարվա գործունեության արդյունքում, սակայն, վերջնականապես ձևավորվել ու կազմակերպվել է 2002թ. հունվարին: Մինչ այդ, 1999թ. սկզբներին հռչակված Հայ Արիական Բռունցքը նույնպես նպաստեց ՀԱՄ-ի ստեղծմանը: ՀԱՄ-ն ընդգծված Հայկականությանը և Համաարիականությանը առաջնորդվող Հայկական Արմատական-Ազգայնական կառույց է, որն առավելապես հայ անիշխանական (ամարիստական) կեցվածք և ուղղվածություն ունի:

ՀԱՄ-ը որդեգրել է զուտ Հայկական Ավանդական Ազգայնական գաղափարներն ու ուսմունքները, հատկապես՝ Նժդեհյան Ցեղակրոնությունը. ՀԱՄ-ը քաղաքականապես պաշտպանում է Հայ Դասական Ազգայնականության շահերը: 2002 թ. փետրվարից ՀԱՄ-ը որպես իր պարբերական հրատարակում է «Հայ-Արիներ» ամսաթերթը, իսկ մարտից՝ նրա եռամսյա հավելված «Հայեր»-ը, որոնք մեծապես նպաստեցին հայ ազգայնական գաղափարների տարածմանը:

ՀԱՄ-ի կառույցում ընդգրկված են.

1. Հայ Արիական-Ցեղապաշտական Կուսակցությունը (ՀԱՑԿ).
2. Հայ Արիական-Ցեղապաշտական Դաշինք հասարակական կազմակերպությունը (ՀԱՏԴ).
3. Հայ Արիական Կենտրոնը՝ իր մարտարվեստների, մարմնակրթական, ստեղծագործական խմբերով.
4. «Հայ-Արի» շաբաթաթերթը (ՀԱՑԿ և ՀԱՏԴ համատեղ պաշտոնաթերթ).
5. «Հայ-Արիներ» ամսաթերթը.
6. «Հայ-Արիներ»-ի «Հայեր» եռամսյա հավելվածը.
7. Հայ-Արիական ուսանողական ակումբը.
8. Հայ-Արիներ երիտասարդական ակումբը.
9. Հայ-Արորդիներ մանկապատանեկան ակումբը.
10. ՀԱՑԿ - ՀԱՏԴ-ի Արցախյան պատերազմի մասնակիցների խորհուրդը.
11. «Արիական Արահետ» արտադրա-տնտեսական կազմակերպությունը.

ՀԱՄ-ը ունի նաև անհատ միաբան անդամներ, համակիր և օժանդակ լայն շրջանակներ:

Երբ վերջանում է ամեն ինչ, այն մտնում է Անեզրություն... Ասել է թե՛ Սկիզբ...

...Անսկիզբ և Անվերջ է Անեզրությունը (Ոչինչը, Մեծ Դատարկությունը) և Անմեկնելի՛ իր Եությանը: Նա Սկիզբն է բոլոր Սկիզբների, ինչպես նաև Վերջը՝ բոլոր Վերջերի:

Անեզրությունը Մարմինն ու Հոգին, Ոգին ու Բացարձակ Կատարելությունն է: Սպիտակն է և սևը հավասարապես և դրանցից բխող բոլոր գույները. այն Ամենայնի Սերմն է ու երբեք ունայնություն չէ, և Օրրանն է Հավիտենական Կյանքի՝ անծնունդ ու անմահ, այն մշտապես լի է Լույսով Անսպառ-Ուժով Կենարար: Անեզրությունը Տունն է Արարչի և Ամենայն Արարման, այն Հավերժի Մարմնավորումն է, սակայն հեռու՝ որևէ պատկերացումից ու բնութագրումից, կամ նույնն է թե՛ ի Սկզբանե Բանն էր, որն Ինքնաստեղծ էր և Աներևույթ...

Ամեն ինչ Անեզրության մեջ, ահա, Իմաստասիրությունն Ամենայն Ստեղծի ...

...Եվ Արարիչը՝ Սիրտն Անեզրության, Արարումների «Արքայից-Արքան» դարձավ Ակունքը ամեն Արարման: Եվ Արարումն Առաջին որ կատարվեց, Ինքնաբեղմնավորումն էր Արարչի, որ պիտի կոչվեր Մեծ Պայթյուն՝ Ծնունդն Առաջին Տիեզերքի: Եվ Առաջին Սերմը Կենաց Սկզբունքն էր, որ ընդունեց ամեն մի մարմին. ու այդպես է ցարդ և առ միշտ: Մեծ Պայթյունը ձևափոխեց Արարչի Մարմինը՝ տալով նրան անկազմակերպ ձև, և աննախադեպ տրոհումից խաչվեցին մտքերը բոլոր, ուժերը բոլոր, չափումները բոլոր ու ժամանակները, ձևերը բոլոր, գույները բոլոր և ամեն, ամեն բան՝ Արարչի Մարմնում: Ու այդժամ տիրեց Քաոսը (Անկազմակերպվածությունը) ամենուր, որ դեռ կրում էր Ցավը Երկունքի՝ Առաջին Ցավը Տիեզերածնության: Այսպես Ծնվեց Տիեզերքն Արարչի մեջ՝ կրելով Արարչի Մտքի Ձևը. այն է՝ Արարող Ուղեղի Ձևը, որը դեռ այդպես էր Պտուղ վիճակում, և վերջ դրվեց Քաոսին ու Արարիչը եղավ Տիեզերք (Կոսմոս, Կազմակերպվածություն)՝ Մեծ Եզերք: Առաջին Տիեզերքը միայն Առաջնեկ Արդյունքն էր Արարչագործության և Արարումների շարունակական Երկունքներից Ծնվեցին նոր Տիեզերքներ՝ Արարչադիր Սկզբունքներով և Օրինաչափություններով, ու այդպես է ցարդ և առ միշտ:

Եվ ընդարձակվում է ամեն անգամ Մեծ Եզերքը կամ Տիրոջ Մարմինը, ավելանալով ևս մեկ Տիեզերաչափով՝ մշտապես պահպանելով իր արտաքին Ձևն ու ներքին Եությունը: Եվ բոլոր Տիեզերքներն ու նրանցում ներառված ամենատարբեր չափերի ու ձևերի անթիվ մարմիններն ունեն փոխադարձ կապ և ազդեցություն այնպես, ինչպես մարդ արարածի (ինչպես նաև՝ բոլոր կենդանական ու բուսական աշխարհների) մարմնի ներքին օրգանները և դրանք միմյանց կապող ցանց-համակարգը: Այդպիսով Մարդն էլ Արարիչն ու Տերն է իր Եզերքի. ու այդպես է ցարդ և առ միշտ:

Եվ արդ, սիրի՛ր ու պահպանի՛ր մարմինդ այնպես, ինչպես Արարիչն է սիրում ու պահպանում իր Մարմինը: Կան մարմիններ (իմա՝ օրգաններ), որոնք հիվանդանում, մեռնում և փոխարինվում են նոր ծնվածներով, սակայն ահավասիկ, կան նաև մարմիններ, որոնց մահը Տիեզերքի (իմա՝ մարդու եզերքի) անխուսափելի ոչնչացման պատճառ է դառնում և մեռնում է Տիեզերքը (իմա՝ մարդը): Եվ այդժամ, սնվելով Անեզրության Լույսից Անսպառ-Ուժից Կենարար՝ կազդուրվում և նոր Առաքելություն է ստանում Արարչի Մարմինն այնպես, ինչպես մեռած մարդու Հոգին է դրանք ստանում Արարչից, ու այդպես է ցարդ և առ միշտ:

Եվ ստեղծվեց Տիեզերքն Առաջին, ստեղծվեցին Տիեզերքներ հաջորդիվ, ու նրանցից մեկն էլ եղավ մեր Տիեզերքը: Եվ յուրաքանչյուր մարմին ձևավորվեց Մեծ Պայթյունից (Մեծ Հրից ու Ջերմությունից) հետո՝ տրոհման ընթացքի գազաթնակետին հասած պահին, անկանոն տարածվող, եռացող, հրե-հեղուկ նյութերից, որոնք ուներ Արարիչը, և դրանք տարբեր քանակությամբ բաշխվեցին այդ մարմինների մեջ՝ նրանց տալով տարբեր Բնույթ ու Ձև. այն է՝ հիմնականում գնդաձև, որը Հավերժական Պտույտի հետևանք է, և դա է Տիեզերական Մարմնի Կատարյալ Ձևը, ու այդպես է ցարդ և առ միշտ:

Եվ երբ դադարեց եռքը, բոլոր մարմիններում սկսեց աստիճանա- բար ընթանալ համակարգումը, արտաքին ու ներքին ձևավորումը, և շուտով բաբախեց կյանքը՝ միջավայրի բնական պայմաններին համապատասխան արարածներով ու բուսածածկույթով հանդերձ, ու այդպես է ցարդ և առ միշտ...

...Բաբախեց կյանքը նաև մեր Տիեզերքի մեջ և այն մարմինների մեջ, որոնց եռքն ու հիմնարար ձևավորումը հանդարտվեց հետզհետե: Եվ մեր Երկիր Մոլորակը հրե գնդից վերածվեց բազմաշերտ ու բազմաբնույթ Կենաց Մարմնի և այնտեղ նույնպես երևակվեց կյանքը՝ ավետելով սկիզբը Երկրային Արարչության...

...Եվ Աստվածները՝ մեր Տիեզերքի Ոգեմարմնական Արարածները՝ որպես Արարչի «միտքը կրողներ ու կատարողներ», Տիեզերքի մեջ ամեն մի մարմնի ու երևույթի Պահպանը դարձան: Ու Աստվածներից այդ Արարչաբնույթ՝ հանգրվանեցին մարմիններում այն, որոնք ընդունել էին Ձևը Կատարյալ Տիեզերական: Իսկ Երկիրը մեր՝ որպես այդպիսին, իր ձևավորման օրից եղավ առաջին հանգրվանն այն Աստվածների, որոնք պիտի դառնային Պահպանը մեր Մոլորակի ու գիտակցաբար պիտի զրկվեին հրաշագործ շնորհներից Աստվածային, քանզի Մոլորակը մեր նորածին արդեն իսկ դառնում էր Օթևանը Նրանց:

...Եվ Աստվածները՝ արդեն Հոգեմարմնական Եակներն այդ՝ հանգրվանեցին Արարատի (Հայկական) Լեռնաշխարհի վրա՝ Սրբացնելով այն, որով և Տարածքն այդ Բարձրավանդակի դարձավ Բնօրրան՝ Տարածք Աստվածային, Արարումների Ակունք Երկրային: Եվ արդ, Աստվածներն այդ՝ որպես Կիսաստվածներ կամ Մարդ-Աստվածներ, սկիզբ դրեցին Առաքելությանն այն, որն այնուհետև դրվելու էր նրանց բոլոր Սերունդների առջև. այն է՝ Երկրագնդի վրա ամենուր կատարել փրկիչ-վերականգնիչ

գործ-մեծագործություններ, կանխելով կենդանական ու բուսական աշխարհների կործանումը՝ Տիեզերքի՝ պարբերաբար վերածնալորման արարիչ-ավերիչ ազդեցություններից և բնական այլ աղետներից ու «պատիժներից»... ու այդպես է ցարդ և առ միշտ...

...եվ Բնօրրանն այդ կոչվեց ՀԱՅՔ, քանզի Մարդ-Աստվածները Բարձրյալ Տերերն էին (ՀԱՅ(ՀԱՅՐ)-ՏԵՐ (Հայ-Արիական լեզվամեկնություն)) Արարչատուր Տարածքի, և ՀԱՅԵՐԸ ((Հ)ԱՅԱՆԵՐԸ (Արիական)) հետագայում դարձան Առաջնորդ և Հովանավոր այն բոլոր չորս Ցեղերի, որոնք «առաջացան» Երկիր Մոլորակի վրա ... ու այդպես է ցարդ և առ միշտ...

1. ՀԱՅ ՑԵՂ

Աստծո և Մարդու Հավիտենական Ռիստի Երկրում՝ Սրբազան Արարատ Լեռան հովանու ներքո բնակվող «Ընտրյալ Ազգն Հայոց»՝ որպես Բնության (Տիեզերքի) մեջ Տիեզերական Օրենքերի պահպանիչ-կարգավորիչ (պահպան կրող) Էակներ, արարվել է Աստվածային Առաքելությանը ու Երկիր Մոլորակի վրա բնակվում է նրա Արարման օրվանից: Արարչագործության սկզբից ևեթ Հայ Ցեղին շնորհվել է Ցեղային յուրահատուկ Հոգեմարմնական գծեր, ինչպես նաև Հավիտենական Արարչական Բնօրրան: Հող, Ջուր, Հուր, Օդ հայտնի տարրերից բացի, որոնք տարբեր հարաբերակցությամբ բաշխված են երկրաբնակ Ցեղերի մեջ, Հայերն ունեն նաև հինգերորդ՝ եթեր տարրը, որը բնականորեն Աստվածային հատկություն է տվել նրանց՝ դարձնելով Մարդ-Աստվածներ՝ Կիսաստվածային Էակներ ...

Լինելով «Ընտրյալ Ազգն Հայոց», ճանաչելով Համատիեզերական Օրինաչափություններն ու Իրականությունը, ինչպես նաև տիրապետելով տարածության և ժամանակի մեջ մտովի տեղաշարժվելու իմաստությամբ՝ Հայերը ձևավորել են ճշմարիտ ու հիմնավորված Գիտական (Բնական) Միտք, որի վրա հենվելով՝ ստեղծել են Ամենայն Ստեղծի Պատմությունն ու Իմաստասիրությունը (Փիլիսոփայություն)՝ տալով ճշգրիտ պատկերացումներ Արարչի, Աստվածների, Տիեզերքների՝ ստեղծման, Հոգու և Ոգու ու Ամենայն Արարման մասին...

Հայ Ցեղը արարման սկզբում բնակվել է Հայկական Բարձրավանդակի որոշակի հատվածում, հետո տարածվել է Հայերի Լեռնաշխարհում («Աստվածային Տարածք» կամ ինչպես վկայել են շուներները, աքքաղները, բաբելոնցիները, ասուրացիները, հրեաները և այլք՝ «Աստվածների ժողովի Երկիր», «Աստվածների Կաճառ», «Աստվածային Սուրբ Օրինաց Երկիր», «Ամնահների Երկիր», ինչպես նաև՝ Դրախտ, Ջրհեղեղից Փրկության Երկիր, Աստծո և Մարդկության Հավիտենական Ռիստի Երկիր, Մեծ Աստծո Բնակության Երկիր և այլն) և Երկրի համար կատարել է փրկիչ-վերականգնիչ գործողություններ՝ կանխելով կենդանական և բուսական աշխարհի կործանումը՝ Տիեզերքի՝ պարբերաբար վերածնավորման արարիչ-ավերիչ ազդեցությունից՝ պահպանելով Արարչադիր Օրենքները: Որպես Կիսաստվածային Էակներ՝ Հայերը, կիսով չափ կապված են Երկնքին, կիսով չափ՝ Երկրին, և որևէ մեկի կործանումը (հոգևոր հեռացումը) անտարակույս վտանգում է նրանց հետագա գոյատևումը, առաքելության իրականացումը... Եվ արդ, նրանք՝ որպես Բնության (Տիեզերքի) արարիչ-ավերիչ ազդեցությունը ներդաշնակող ուժ, մշտապես պայքարել և պայքարելու են Երկրագնդի վրա «Աստվածային Սուրբ Օրենքների» պահպանման ու գոյատևման համար, այդպես միայն ապահովելով Մոլորակի, ուրեմն և՛ Մարդկության հարատև կյանքը...

Փրկիչ-վերականգնիչ գործողությունների ընթացքում, աղետյալ գոտիներում երկար ժամանակ մնալով տեղաբնակների հետ, Հայերից շատերը հարաբերվեցին երկրաբնակ Ցեղերի հետ՝ տալով այլ տեսակի սերունդ՝ առանց Աստվածային բնույթի, իսկ Էությամբ՝ ոչ լիարժեք երկրացի: Այլասերունդից առաջացած նոր տեսակի ցեղերը (ցեղապիղծ զանգվածները), չունենալով որևէ հաստատուն կապ Երկրագնդի հետ, ինչպես նաև՝ արարման հնարավորություն, գոյատևում էին ավերելով: Ժառանգաբար (գենետիկորեն) ստանալով Հայերի մտավոր և Մարմնական Ուժը՝ նրանք հզոր էին (հսկաներ, տիտաններ) և կարողանում էին հիմնահատակ ավերել ու ոչնչացնել քաղաքակրթություններ՝ ստեղծված երկրաբնակ Ցեղերի կողմից: Սրանք երկարատև պատերազմ մղեցին նաև Հայերի դեմ և դարերի ընթացքում ավերեցին, ապականեցին Մոլորակի Բնությունն ու Երկնլուրտը՝ ստիպելով Հայ Ցեղին ավելի հաճախ պայքարել Երկինքն ու Երկիրը (և ուրեմն՝ Հայ Ցեղը) ոչնչացումից փրկելու համար...

Այսպես Մարդ-Աստվածները հայտնվեցին դժվարին կացության մեջ, իսկ երկրաբնակ Ցեղերը ցեղապիղծ զանգվածների դեմ քայքայիչ պատերազմներից ու այլասերունդից պառակտվեցին, թուլացան, և աստիճանաբար Մոլորակի կյանքը շեղվեց Բնականոն ընթացքից ու զարգացումից, իսկ պատմության հարատև ընթացող անիվը սկսեց պտտվել ի վնաս Երկրագնդի և Մարդկության...

Սակայն, Հայ Ցեղի պայքարը Երկիր Մոլորակի փրկության, Բնության մաքրագործման, վերականգնման, ինչպես նաև Ներցեղային ներդաշնակ Օրենքների ու Բարոյականության վերահաստատման համար շարունակվում է, և միայն դրանց վերջնական վերաարժեքավորման-վերականգնման պարագայում կշարունակի պտտվել Մեր Մոլորակը՝ բնական ընթացքով ...

2. ԱՐԻԱԿԱՆ ՑԵՂ

Արիական Ցեղը (Արիացիները, Արիաները) երկրաբնակ Ցեղատիպերից մեկն է, և Նրանք (Արևագույնները) Մարդ-Աստվածների կողմից Ընտրյալ Տեսակ են, քանզի նրանց է իրավունք տրվել բնակվելու Աստվածային Տարածքում: Արիացիները Հայերի Գենի (արդեն՝ ՀայԱրիական) միակ ժառանգորդն են Մարդկային բոլոր ցեղերի մեջ ...

Արիական Ցեղը, պարբերաբար տարածվելով իր Նախահայրենի- քից, դարերի ընթացքում բնակվել է ներկայիս Եվրասիա մայրցամաքի մի ընդարձակ տարածքում, որի մի մասն այսօր անվանում են Կենաց (Կյանքի) Գոտի: Այդ տարածքը պատմության ընթացքում ենթարկվել է որոշակի ձևափոխության Բնության արարիչ-ավերիչ ազդեցությունից, սակայն, ՀայԱրիական բացառիկ Գենի Միջուկ-Բնօրրանը միշտ մնացել է գրեթե նույնը՝ մասնակի տարածքակառուցվածքային վերածնակվորմամբ...

Առհասարակ Բոլոր երկրաբնակ ցեղատիպերի, հատկապես՝ Սպիտակամաշկերի Ցեղատիպի Արիական Ցեղի հովանավորներն են Աստծո Ընտրյալները՝ Մարդ-Աստվածները, որոնք բնակվել են Հայկական Բարձրավանդակում՝ Արիական Ցեղի Նախահայրենիքում, և եղել են երկրաբնակ Ցեղատիպերին, առավելապես՝ Արիացիներին Աստվածներին կապող միջանկյալ Հոգեմարմնական օղակը...

Ընտրյալ Արիական Ցեղն իր բացարձակ կարողությունների շնորհիվ կարողացել է ճանաչել Համատիեզերական իրականությունը՝ ստեղծելով ճշմարիտ պատկերացումներ Ամենայն Ստեղծի վերաբերյալ, որը խթանել է տարբեր գիտությունների ու իմաստությունների բացարձակ զարգացումը, նաև՝ Արիական անկրկնելի, ինքնատիպ մշակույթի արարումը: Դրա վկայությունն են երկրագնդի վրա մարդկությանը հայտնի բազմաթիվ քաղաքակրթությունները, որոնք կործանվել, ավերակների են վերածվել ցեղապիղծ զանգվածների ավերիչ ոտնձգություններից, այլասերումից՝ հակացեղային կործանարար դրսևորումներից և ներքին անհաշտությունից ...

Հզոր քաղաքակրթություններ են ստեղծվել Երկիր Մոլորակի բազմաթիվ տարածաշրջաններում, քանի որ Արիացիները, սերնդե սերունդ աճելով ու բազմանալով, ստիպված են եղել հեռանալ իրենց մշտական բնակավայրերից այլ տարածքներ (եղել են նաև վտարումներ ու այլ դրդապատճառներ), որտեղ և օգտագործելով իրենց գիտելիքն ու բազմաշնորհությունը՝ ստեղծել են Արիացիներին բնորոշ արվեստի, մշակույթի, գիտության յուրօրինակ արժեքներ, տալով տեղաբնակներին զարգացած քաղաքակրթություն: Սակայն, այդ առաջադիմական քաղաքակրթություններն ավելի շուտ են անկում ապրել, քանի որ բացի օտար-արտաքին միջամտություններից, ժամանակի ընթացքում կտրվել են նաև իրենց Ակունք-Արմատներից, ենթարկվել ցեղապիղծության, որոնց պատճառով էլ առաջընթաց տեղի չի ունեցել, ավելին՝ հաճախ հետընթաց է եղել...

Արիացիների և նրանց՝ խորհրդավոր, գաղտնածեսերով հարուստ պատմության՝ մինչև այսօր նախապաշարումներով պարուրված էջերը դեռևս լուրջ բացահայտումների կարիք ունեն, և դրանց իրական ճանաչողությունն է բացելու Մարդկության նոր «Ոսկե» դարաշրջանը...

Հին Արիացիներն առաջնորդվել են Ներցեղային Օրենքներով և Բարոյականությամբ, որոնք, Բնությանը ներդաշնակ, ձևավորել են Արիական-Ցեղապաշտական (իմա՝ Հայկական-Ցեղապահպանական) ապրելակերպը, ՀայԱրիական մտածելակերպն ու հոգեբանությունը, որոնք Արիացուն դարձրել են հավատարիմ իր բնույթին, Արարչին, իր Աստվածներին և Ցեղին, ու ձևավորել Արիացու Առաքինի՝ քաջարի, անհողողող, ազնիվ ու ազատատենչ Ոգին ...

3. ՀԱՅ ԱԶԳ

Հայ Ցեղը իր Նախահայրենիքում՝ Աստվածային Տարածքում, հետզհետե հզորանալով, զարգացրեց իր որակներն ու առանձնահատկությունները՝ ձևավորելով ինքնատիպ ազգային կացութաձև՝ դարձավ ազգ, և կոչվեց Հայ Ազգ: Իսկ հզոր Արիական Ցեղը ցեղապիղծ զանգվածների շարունակական պատերազմներից, հետզհետե ուժգնացող ներքին պառակտումից և անհաշտությունից մասնատվեց և վարածվեց բազմաթիվ ազգերի (ազգությունների, ազգակիցների)՝ տրվելով ինքնապաշտպանական բնազդին: Այդ ամբողջ ժամանակաշրջանը (Արիական Ցեղի մասնատումը տարբեր ազգերի) հետագայում պատմության մեջ որակվեց հեթանոսական (էթնոս, ներազգային), և դարերի փորձությունների ընթացքում Արիական Սրբազան ու Ոգեղեն պաշտամունքն աննախադեպ շեղումներ ունեցավ և հետզհետե վերածվեց կռապաշտության՝ անտեսելով իրական ազգային-հեթանոսական հավատալիքները...

Գոյատևման խնդիր հետապնդող Հայ Ազգը հենվելով ինչպես ներազգային ինքնատիպ ավանդույթների, այնպես էլ ՀայԱրիական ներդաշնակ Ներցեղային Օրենքների վրա, կարողացավ պահպանել ներքին համերաշխությունն ու միասնությունը, որը թույլ տվեց ոչ միայն գոյատևել, այլև՝ հազարամյակների վայրիվերումների մեջ պահպանել Հայ Ցեղի Գենը և պատմական հիշողությունը...

Հայ Ազգը Հայ Ցեղի շառավիղն է և մշտապես ապրելով Հայքում՝ Արարչաստեղծ Բնօրրանում, իր մեջ հաստատականորեն կրեց Հայերի Ոգին և ժառանգաբար փոխանցված Հայ Ցեղի Գենը, որոնց հզորությունն ու բացառիկությունը բազմիցս ապացուցվեցին համամարդկային պատմության ընթացքում: Իսկ հեռացածներն էլ ձևավորեցին Արիական շառավիղը: Հայ Ցեղից (նաև՝ ՀայԱրիական Ցեղատիպից) սերած ազգերից Մարդ-Աստվածների Գենի միակ ժառանգորդը Հայ Ազգն է: Իսկ Արիական Ցեղի տրոհումից սերած ազգերն անվանվեցին իրենց ազգակից նախնիների-նահապետների կամ համապատասխան բնատարածքի պատմական անվանումներով՝ իրենց մեջ պահպանելով ՀայԱրիական Ցեղի Գենը...

Հայ Ազգը, բնակվելով Աստվածային Բնօրրանում, Մարդ-Աստվածների Գենի բացարձակության շնորհիվ ծաղկեց, հզորացավ ու ստեղծեց զարգացած քաղաքակրթություն ու հզոր պետություններ: Այդ ընթացքում Հայ Ազգը պահպանելով իր նախնիներից փոխանցված ճշմարիտ Գիտական Միտքն ու Ամենայն Ստեղծի Իմաստասիրությունը, կարողացավ հասնել գրեթե կատարելիության: Սակայն, այստեղ էլ արտաքին միջամտություններն ու ներքին խժժությունները, Արյան Մաքրության Օրենքը չկատարելը ավերիչ ազդեցություն գործեց, և հզորության հասած Հայ Ազգն ու Հայք-Հայաստանը աստիճանաբար թուլացան: Եվ Հայաստանը մասնատվեց մանր պետությունների՝ տարբեր անվանումներով, և տվյալ «Երկրի» բնիկ Հայերին հաճախ անվանում էին այդ տարածքի անվանը (նաև այլալեզու հնչողությամբ) համապատասխան: Օրինակ՝ Արատտա, Սուբիր, Սուբարտու, Արմանի,

Արամ, Արմի, Արմենիա, Արմինիա, Արմեն-Շուբրիա, Արմատանա, Ռբրմե, Նաիրի, Վանի թագավորություն (Բիայնա, Ուրարտու), Արարադ, Չայասա... ինչպես նաև՝ Կուտիական, Խախուն, Միտանիի, Թոգարամա (Թորգոմա Երկիր), Կիլիկիայի թագավորություններ և այլն, որոնք հաճախ գոյատևում էին միմյանցից անկախ, առանց շփման եզրերի՝ որն էլ իր հերթին Ազգի մասնատման (հետագայում որակի կորստի) պատճառ եղավ, և Չայ Ազգը որոշ տարածքներում վերածվեց գորշ, անդեմ ժողովուրդ-զանգվածի ու սկսեց գոյատևել որպես Չայ ժողովուրդ: Դա էր պատճառը, որ մի քանի տասնյակ Չայկական մանր անկախ պետություններ (տարբեր ժամանակաշրջաններում) միասնության ու հզորության չհասան, կործանվեցին, իսկ նրանց բնակիչները բնաջնջվեցին, դարձան գաղթականներ, ծուլվեցին: Սակայն, նախնիների հզոր Գենը զգաստացրեց ու մղեց Չայ Ազգի մասնատված հատվածներին՝ իրենց մեջ ուժ գտնելու, ձգտելու ազատության, միասնության, ազգային անկախ պետականության ու բացառիկ Չոգեմարմնական Տեսակի վերականգնման...

4. ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴ

Չայ Տեղի ժառանգների որակական մաքրմանը զուգընթաց, նրա սփռված հատվածների գտնվելու վայրից և բարոյահոգեբանական վիճակից կախված, տեղի է ունենում նաև անկման գործընթաց: Սա ինչպես արտաքին քայքայիչ միջամտությունների ու բռնությունների, այնպես էլ ներագոյաին պառակտումների ու մասնատումների հետևանք էր, որի պատճառով Չայ Ազգի մի մասը տկարացավ, թուլացավ ու աստիճանաբար հեռացավ իր Արմատներից, ազգային ավանդույթներից ու սովորույթներից, բարոյագրվեց, կորցրեց ազատատենչ Ոգին և վերածվեց ստրկամիտ, անարժանապատիվ, օտարամոլ ու անդեմ ժողովուրդ-զանգվածի, որն սկսեց դրսևորել գրեթե ամբողջին բնորոշ վարքուբարք...

Չայկական Սրբազան ու Ոգեղեն՝ Տիեզերական պաշտամունքն անհավանական շեղումներ ունեցավ ինչպես ՉայԱրիական, այնպես էլ ոչ-արիական ժողովուրդների մեջ, որը որոշ տեղերում վերածվեց կռապաշտության: Քայքայման այդ ամբողջ ժամանակաշրջանը պատմության մեջ ամրագրվեց մեկ բառով՝ հեթանոսական, և որակվեց հետադիմություն, որը բացարձակ սխալ բնորոշում է...

Չայ ժողովրդի մեջ ազգասիրությունն ու ավանդապաշտությունը համարվեց կամ հրամցվեց որպես ազգայնամոլություն, բարոյականությունը՝ հետամնացություն, ազգային հնագույն արժեքները՝ հեթանոսական (նկատի ունենալով հետադիմական, ոչ քաղաքակիրթ), և հատկապես հակաքրիստոնեական մշակույթ: Ազգային որակներից ու բարոյականությունից զուրկ զանգվածի մեջ աստիճանաբար ծաղկում ապրեց օտարամոլությունը, օտար բարքն ու բարոյականությունը դարձան նրա հիմնական կացութաձևը: Նորի, ժամանակակցի, ավելի առաջադեմի անվան տակ օտարի լեզուն, մշակույթը, ավանդույթներն ու սովորույթները մուտք գործեցին ընտանիք, մանկամասուր-մանկապարտեզ, դպրոց, բոլոր բնագավառներն ու ոլորտները և դարձան ժողովրդական (հասարակական) ճնշման միջոց՝ ազգայինի նկատմամբ:

Չայ ժողովուրդը, ընդդիմանալով ազգայինին, պարարտ հող ստեղծեց ապազգային դրսևորումների և գործունեության համար, օտար գաղափարախոսություններն ու կրոնները աղավաղեցին ու խեղեցին հասարակական գրեթե բոլոր խավերի, ինչպես նաև մանուկ սերնդի բարոյահոգեբանական չափանիշները: Տեղապղծությունը (այլասերումը), ազգադավությունը, հայրենալքությունը, ընտանեկան և ազգային ավանդական դրվածքի անտեսումը հանգեցրին ժողովուրդ-զանգվածի գոյատևմանը՝ առանց պատմական հիշողության ու հեռանկարի: Հպանցիկ և այսօրեական տրամադրությամբ, նորաձևությունների ճոխ մատուցումների թմրեցուցիչ ազդեցությամբ Չայ ժողովուրդն է՛լ ավելի հեռացավ իր Արմատներից և գրեթե զրկվեց բնատուր անհատականությունից...

Սակայն, Չայ ժողովրդի մեջ այնուամենայնիվ պահպանվել են ինչպես Մարդ-Աստվածների Գենը, այնպես էլ՝ Չայ Ազգի Ինքնատիպ ու Բացառիկ Որակները, և Չայոց պետության ու իշխանությունների կողմից տարվող ազգային ու բարոյական քաղաքականության պարագայում նիրհած Գենն անպայման կարթնանա, ու Չայը վերստին տեղը կլինի իր Ինքնության ու Էության: Այլապես, շարունակելով ընթանալ ապազգային (հակազգային) կործանարար ու ճահճոտ ճանապարհով, Չայ ժողովուրդն աստիճանաբար կվերածվի մի խառնամբոխի, ցեղի տականքի, որը հրապուրվելով համաշխարհային ժողովուրդ ստեղծելու զառանցանքով, կուրանա իր ծագումն ու անվանումը (ՀԱՅ) և կգոյատևի անդեմ կամ հազարադեմ կերպարանքով՝ վերջնականապես կորցնելով նախնյաց Արարչական Գենը...

ՀԱՅ ՍՐԻԱԿԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ (ՀԱՍ)
Հ Ռ Չ Ա Կ Ա Գ Ի Ր

Հսկաների Ցեղը՝ Մարդ-Աստվածները՝ Հայերը, բնակվել են Հայքում՝ Արարչական Աստվածային Տարածքում, ու Սրբազան Արարատ Լեռան հովանավորության ներքո...

«Աստվածային Սուրբ Օրինաց Երկրում» Հայերը որպես Արարչադիր Օրենքները պահպանողի-կրողի առաքելություն ունեցող եակներ, տեղյակ են եղել Տիեզերքում տեղի ունեցող գործընթացներին ու մշտապես պայքարել են Մոլորակի ու Մարդկության գոյատևման համար...

Ճանաչելով Համատիեզերական օրինաչափություններն ու տիրապետելով տարածության և ժամանակի մեջ մտովի տեղաշարժվելու իմաստությամբ՝ նրանք անընդհատ միջոցներ են ձեռնարկել՝ կանխելու կենդանական ու բուսական աշխարհի հնարավոր կործանումը՝ Տիեզերքի՝ պարբերաբար վերածնավորման արարիչ-ավերիչ ազդեցությունից...

Երկրագնդի բոլոր անկյուններում կատարելով փրկիչ-վերականգնիչ գործողություններ, երկար ժամանակ մնալով աղետյալ գոտիներում՝ նրանցից շատերը հարաբերվեցին երկրաբնակ բոլոր չորս Ցեղերի հետ՝ տալով նոր տեսակի ցեղատիպեր՝ առանց Աստվածության, իսկ Եւթյամբ՝ ոչ լիարժեք երկրացի: Եվ այս տեսակները, զրկվելով Աստվածությունից և չունենալով երկրացու Եւթյուն, դարձան թշնամի ամենայն արարման՝ երկրագնդի վրա...

Դարերի ընթացքում նորաստեղծ, բայց Հզոր Գեների սերած ցեղերի՝ ավերիչ պատերազմները բոլոր երկրաբնակ Ցեղերի մեջ (այդ թվում՝ նաև Արիական) առաջացրին ներքին պառակտումներ, որոնք էլ բոլոր Ցեղերի համերաշխության խարխլման ու ցեղապղծության դրսևորումների հաջորդական տարածման պատճառ դարձան: Թուլացավ նաև հզոր Հայկրիական Ցեղատիպը, որը հնարավորություն տվեց ցեղապիղծ գանգաձեռներին խեղելու Արիական-Ցեղապաշտական (իմա՝ Հայկական-Ցեղապահպանական) ապրելակերպն ու մտածողությունը, որն էլ զգալիորեն հեռացրեց Հային և Արիացուն Բնությունից և իրենց՝ Եւթյունից՝ վտանգելով նաև Հայքի սահմանները...

Մեր նախնիների հզորության անկումը շարունակվեց Հայկական Բարձրավանդակի տարածքում պարբերաբար տեղի ունեցող արտաքին միջամտություններին ու երկարատև ավերիչ պատերազմներին զուգահեռ, որի հետևանքով Հայկրիացիները թույնի պես ներգործող ներքին պառակտումների ու տարածայնությունների հորձանուտում չկարողացան կենտրոնացնել ու նպատակամղել Ցեղի շարժիչ ուժը՝ էլ ավելի հեռանալով իրենց Արմատներից՝ զրկվելով Աստվածային Տարածքի հովանավորությունից...

Թեև շարունակական անկմանը, մեր նախնիները պարբերաբար ստեղծում էին պետական կազմավորումներ ու քաղաքակրթություններ, որոնք, սակայն, գազանաբար ոչնչացվում էին քոչվոր ու բարբարոս ցեղախմբերի՝ կողմից (դրանք, լինելով այլամերժ և չունենալով արարման կարողություն, ներխուժելով Հայկական Բարձրավանդակ, գոյատևում էին ավերելու միջոցով): Սրանք էին, որ շուտով հրաժարվեցին իրենց ծագումից ու ծննդավայրից, հորինեցին հայամերժ և ցեղամերժ գաղափարախոսություններ, կրոններ...

Ավերումներն ու մասնատումները, ներքին պառակտումներն ու անհաշտությունները Հայկրիացիներին օրինաչափորեն մղեցին առավել համախմբվելու և ինքնությունը պահպանելու: Ու Հինավուրց Ցեղը հզորանալով ձեռք բերեց նոր որակ, որը ձևավորվեց ինչպես ինքնատիպ ներազգային ավանդույթներով, այնպես էլ նախնիների ներցեղային օրենքներով՝ նպաստելով Հայ Ազգի կազմակերպմանն ու սրընթաց առաջընթացին...

Սակայն այդ որակական գարգացմանը զուգընթաց, պատմական որոշ տարածքներում տեղի էր ունենում Հայ Ցեղի մի հատվածի բարոյական անկում՝ հոգեմարմնական այլասերում: Այդ դարավոր փորձությունների ընթացքում ձևավորվեց նաև Հայության մի այլ գանգաձե՝ Հայ Ժողովուրդ, որը, այնուամենայնիվ, կարողացավ իր մեջ պահպանել Հայ Ցեղի բացառիկ Գեներ և նրա անջնջելի հիշողությունը...

Վերջին հարյուրամյակներում, չունենալով որևէ պետական կազմավորում և պարբերաբար ենթարկվելով կոտորածների և ցեղասպանության, Հայ Ժողովուրդը գրեթե դատապարտվել էր վերածվելու խառնամբոխի, որն Եւթյամբ ապագային ու ցեղամերժ լինելով, պիտի ինքնասպառնամը ոչնչացներ Հայկրիների Գենը...

Ինչպես դարեր առաջ... ասուրա-բաբելական, հռոմեական, բյուզանդական, մոնղոլ-թաթարական... և այլ երկրների ու ազգերի վայրագ և ավերիչ միջամտություններից է տուժել Հայ Ազգը, այնպես էլ վերջին ժամանակներս թուրքական ու ռուսական գավթողական, նենգ ու դավադիր միջամտություններից և արևմուտքի պետությունների այլասերված դիվանագիտությունից են տառապել Հայությունն ու Հայաստանը...

Այս երկու կայսրությունների մեծապետական ձգտումների և արևմտյան պետությունների ծավալապաշտական դիվանագիտական խաղերի հետևանքն էր նաև 1918-1921թթ. նորաստեղծ առաջին ՀՀ կործանումը, որից հետո Հայաստանը կրկին բաժանվեց Թուրքիայի և Ռուսաստանի միջև: Հայ Ազգի համար սկսվեց հալածանքի, տառապանքի ու մասնատման դժվարին ժամանակաշրջան, երբ բարոյահոգեբանական ոչ պակաս վտանգավոր էր տեսակի անհետացման վտանգը՝ թուրքացմամբ ու խորհրդային ժողովուրդ-ամբոխի կերտմամբ...

Եվ այսօր, մեր Արյան ու գերագույն ճիգերի զնով ստեղծվել է նոր Հայկական Պետություն, իսկ Հայ Ազգն իր ազատատենչ ու ռազմաշունչ Ոգով հնարավորություն է ձեռք բերել ոչ միայն զոյատևելու, այլև իրականացնելու իր Գերագույն Նպատակը՝ վերատիրելու Ազատ, Անկախ ու Միացյալ Հայաստանին: Վաստակել է նաև ազգային ու բարոյական նկարագրին, ներազգային ավանդույթներին ու արժեքներին տեր լինելու իրավունք, իրականություն դարձնելով «մեկ Ազգ՝ մեկ Հայրենիք» գաղափարը, որը կնպաստի ՀայԱրիական ներցեղային օրենքների և Արիական-Ցեղապաշտական (իմա՝ Հայկական-Ցեղապահպանական) կացութաձևի վերականգնմանը և Հայ Ցեղի վերահաստատմանը իր Արարչական Բնօրրանում Հայքում...

Հայաստանում ստեղծված և գործող ազգային կուսակցությունները, միություններն ու այլ կազմակերպությունները փորձում են համախմբել Հայությանը և կազմակերպված ծառայել Ազգին ու Հայրենիքին: Սակայն, համախմբել անտարբեր, օտարասեր ու ստրկամիտ ժողովուրդ-զանգվածին Ցեղի և Ազգի սերուցքի շուրջ, ներկայումս աննպատակահարմար է. դա հնարավոր է միայն Ազգային Ոգու արթնացմամբ: Իսկ արդ, Ազգի ու Հայրենիքի համար իրեն զոհաբերողը չի կարող համակերպվել Ազգն ու Հայրենիքը դավաճանողի կամ լքողի հետ:

Այս պատմական իրականությունից և ՀայԱրիական մտածողությունից թելադրված՝ անհրաժեշտություն ծագեց կազմավորելու Հայ Արիական Միաբանությունը (ՀԱՄ):

ՀԱՄ-ի նպատակն է իր շուրջը համախմբել Ցեղապաշտին հատուկ գաղափարներով առաջնորդվող և Ամբողջական Հայաստանի վերատիրման համար անձնվիրաբար պայքարող Հայ Ազգի նվիրյալներին, որոնք իրենց համարում են Հայ Ցեղի սերունդ, ՀայԱրիական Ոգու կրող, չեն հանդուրժում ոչ մի այլ ազգի ու պետության դավանանք ու հանդուրժում, պաշտում են Հայրենիքի գաղափարը և իրենց գործունեությամբ հենվում են Ազգի Ներուժի վրա: ՀԱՄ-ը համագործակցում է բոլոր ազգանվեր ուժերի հետ, որոնք առաջնորդվում են դարերի ընթացքում ձևավորված սեփական ազգային գաղափարախոսությամբ ու մտածողությամբ, կացութաձևով, ՀայԱրիացուն հատուկ էությամբ ու Ձորությամբ: ՀԱՄ-ի, որպես արդեն միասնական ու ձևավորված կառույցի հռչակումը տեղի է ունեցել 2000թ. հունիսի 26-ին, ՀՀ Կոտայքի մարզի Աբովյան քաղաքի Հայ Արիական Կենտրոնում:

**ՀԱՅ ԱՐԻԱԿԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ (ՀԱՍ)
Ծ Ր Ա Գ Ի Ր**

ՀԱՍ-Ի ՆՇԱՆԱԲԱՆՆ Է

Հայ Ազգի յուրաքանչյուր ներկայացուցիչ սկզբունքային է համարում իր Ազգի միասնությունն ու Արյան մաքրությունը, բուն Հայ-Արիական Ակունք-Արմատներին վերադառնալու անհրաժեշտությունը, Հայրենիքի ազատությունն ու անկախությունը, ամբողջականությունն ու հզորությունը և բոլոր ուժերով ու միջոցներով պայքարում է հանուն այս Սուրբ Նպատակների իրականացման:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Պատմականորեն անխուսափելի արցախյան շարժման հզոր ալիքը Հայ Ազգի նոր զարթոնքի, ալեկոծման սկիզբը եղավ: Բուռն պոռթկումը Հայ Ազգի մեջ արթնացրեց Հայ Ցեղի բացառիկ Գեներ և ՀայԱրիացիների քաջարի (արի), ազատատենչ Ոգին...

Արցախյան ազատամարտը Հայ Ազգի հայրենասիրական զգացմունքները վերափոխեց հայրենապաշտականի ու հայրենատիրականի, և Հայ ազգային ազատագրական պայքարը թևակոխեց նոր փուլ, որն ավարտվեց Հայաստանի (ճակ Արցախի) անկախացմամբ:

Անկախության ձեռք բերումից հետո, պահանջվեց ուժերի գերագույն լարում և առավել կազմակերպվածություն ու կարգապահություն մեր հիմնական նպատակներին հասնելու համար: Անցած հազարամյակների ու ներկա պայքարի փորձը, Հայաստանում առկա իրադրությունը հանգեցրել են Ազգի ինքնահաստատմանը և Հայ Տեսակի արարող արմատներին վերադառնալու գաղափարին: Առաջացել են բարդ ու տարաբնույթ խնդիրներ, որոնցից յուրաքանչյուրը Հայ Ազգի գոյատևման, ազատ, անկախ զարգացման, Հայրենիքի միասնության համար կարևոր են ու սկզբունքային...

Այսօր պետք է կերտվի այն Հայը, որի ամուր ձեռքերում է լինելու Ազգի ու Հայրենիքի ապագան: Այդ Հայը պետք է դառնա իր Ակունքներին և բազմադարյան իմաստությամբ ու հզորությամբ վերատիրի Ամբողջական Հայաստանին՝ կազմակերպելով Հայ Ազգի համախմբումը հզոր Միացյալ Հայրենիքում:

Ազատ, Անկախ ու Միացյալ Հայաստանի վերակերտումը, Հայերի Բնօրրանի վերատիրումը (Արցախի (Լեռնային և Դաշտային), Նախիջևան, Ջավախք, Արևմտյան Հայաստան, Կիլիկիա...) պետք է իրականացվի փուլ առ փուլ՝ հաշվի առնելով տվյալ ժամանակաշրջանում պատմական պահի, Հայաստանի դիրքն ու կարողությունները, և քաղաքական-տնտեսական, կրոնական-գաղափարախոսական ոլորտներում ճակ միջազգային շահերի նպաստավոր լինելու հանգամանքը...

ՀԱՍ-ը աջակցություն է ցույց տալիս այն բոլոր կազմակերպություններին և անհատներին, որոնք գործում են բացառապես Ազգի ու Հայրենիքի շահերից ելնելով, և առաջնորդվում են անցյալի պատմական հիշողությամբ ու չեն անտեսում ազգային ավանդույթներն ու արժեքները, չեն աղճատում Հայի ազգային ու բարոյական նկարագիրը:

ՀԱՍ-ը կողմնակից է բազմակուսակցականությանն ու բազմակարծությանը (սակայն, ոչ երբեք հակաազգային ու հակապետական քարոզչությանը) և որպես քաղաքական ուժ և ուղղություն առաջնորդվում է ազգային-ազգայնական գաղափարախոսությամբ:

ՀԱՍ-Ը ՀԻՄՆՎՈՒՄ ԵՎ ԳՈՐԾՈՒՄ Է

Ներքին հանգստությունն ու անկողմնակալ մտածողությունը երաշխավորում են ազգի շարունակական օրինաչափ առաջընթացը, ապահովում հաղթանակը, իսկ հանդարտությունն ու քաղաքական իրատեսությունը՝ երկրի զարգացումը::

Իրականությունը պետք է ընկալել այնպես, ինչպես կա, այլ ոչ թե այնպես, ինչպես ցանկալի է:

Գլխավորը երկրորդականից տարբերելու գիտակցությունն ու կարողությունը անհրաժեշտ են իրադարձություններից մշտապես առնվազն մեկ քայլ առաջ գտնվելու համար:

Տարբեր տեսակետներից դժվարությունները տեսնելը և դրանց հաղթահարման հնարավորությունը ստեղծելը՝ հաջողության հասնելու կայուն մախապայման են:

Իրադարձությունների վրա ազդելու կարողությունը առավելություն է, անփոխարինելի գերհզոր գեներ:

Պատրաստվածությունը՝ դիմագրավելու հնարավոր անսպասելի կամ կանխատեսելի

իրադարձություններին, կանխում կամ նվազագույնի է հասցնում անցանկալի

պատահականությունները:

Դժվարին իրավիճակները հաղթահարելու ձգտումը իմաստավորում է կյանքը:

Դիտողականությունը անսխալ վերլուծելու և իրատեսորեն գործելու երաշխիք է:

Հեռատեսությունը նպատակների և խնդիրների իրականացման աներևույթ, սակայն անպահով արահետ է:

Նախազգացողությունն ու ընկալունակությունը նպաստավոր պայման են՝ իրադարձությունների հետագա ընթացքի վրա արագորեն ներգործելու համար:

Ամենատարբեր իրադարձություններից դրականփորձի ձեռքբերման ունակությունը հզորացնում և իմաստավորում է :

Ուրիշ լսելու, հասկանալու և օգնելու ձգտումը ուժեղի կեցվածք է: Այն երկխոսության, փոխըմբռնման և հարաբերությունների կարգավորման լավագույն միջոց է:

ՀԱՄ-Ը ԱՌԱՋՆՈՐԴՎՈՒՄ Է

Հայ Ազգն Ընտրյալ է, Մարդ-Աստվածային որակով օժտված, Արարչաստեղծ Հայ Ցեղի Գեների և Ինքնության միակ ժառանգական կրողն է:

Հայ Ազգն ինքն է իր ճակատագրի ու Հայրենիքի տերը:

Հայ Ազգն առաջնորդվում է Հայրենիքի ազատության, անկախության, սեփական ազգային գաղափարախոսության, ազգային սեփականության՝ որպես տնտեսական հիմքի, ազգային հոգևոր կերտվածքի և Հայ Ազգի Ընտրյալ լինելու իրավունքի ու գիտակցության վրա:

Հայ Ազգը դատապարտում է ցեղապղծությունը, արմատապղծությունը, ազգաղավաղությունը, հայրենալքությունը:

Հայ Ազգը խստագույնս դատապարտում է հնազանդության ու ստրկացման ցանկացած քարոզ, դրսևորում և առաջնորդվում է Ցեղապաշտին հատուկ հոգեբանությամբ:

Հայ Ազգն իր հոգևոր, մտավոր, տնտեսական և այլ կարողությունները ուղղում է Ազգի ու Հայրենիքի բարօրությանն ու հզորությանը:

Հայ Ազգի գոյատևումը, առաջադիմությունը հնարավոր է միայն ազատ, անկախ զարգացման պայմաններում:

Հայ Ազգը մերժում է օտար գաղափարախոսությունների և կրոնների մուտքը Հայաստան:

Հայ Ազգը դատապարտում է ու չի ճանաչում իրեն պարտադրվող և Ազգի ու Հայրենիքի շահերը նսեմացնող կամ վնասող ցանկացած որոշում կամ փաստաթուղթ:

Հայ Ազգը չի ընդունում որևէ ազգի կամ պետության գերիշխանությունը և պատրաստ է համագործակցության հավասարի կարգավիճակով:

Հայ Ազգը պայքարում է իր նկատմամբ իրականացված ցեղասպանության ճանաչման ու դատապարտման համար, պահանջատեր է իր մասնատված Հայրենիքի բոլոր տարածքների վերադարձման խնդրում և պատրաստ է պայքարի ու արդար վրիժառության:

Հայ Ազգն ընդունում է պայքարի այն բոլոր ձևերը, որոնք անհրաժեշտ և օգտակար են Ազգի ու Հայրենիքի շահերը պաշտպանելու համար:

Յուրաքանչյուր ազգ ունի պատմական հիշողություն, այդ հիշողությամբ առաջնորդվելու իրավունք և տերն է իր պատմական անցյալի:

Հայ Ազգը չունի մշտական բարեկամներ և մշտական թշնամիներ, սակայն, առաջնորդվում է պատմական փորձառությամբ:

Ազգի կամքի անտեսումը՝ բռնություն է:

Միայն ազգային անկախ պետականությունն է ազգերի հարատևման գրավականը:

Յուրաքանչյուր ազգ ինքն է տերն իր Պատմական Հայրենիքի՝ Բնօրրանի, ու պետք է ապրի իր Պատմական Հայրենիքում:

Յուրաքանչյուր ազգ ունի ինքնորոշման իրավունք իր Պատմական Հայրենիքի տարածքի վրա:

ՀԱՄ-Ի ԿԵՆՍԱԳՐՈՒՅԹՆԵՐԸ

ա / Չվնասելու

Մի՛ վնասիր խոսքով, գործով, մտքով և մի՛ թող, որ քեզ վնասեն:

Մի՛ արա այլոց այն, ինչ չես կամենում որ անեն քեզ:

Եղի՛ր քո մղումների, կրքերի, ցանկությունների, զգացումների, խռովքների, հույզերի, տրամադրությունների և հակումների տիրակալը:

Բարեկամիդ, ընկերոջդ, զավակիդ որակներն ամրապնդիր խրախուսանքով, բայց մի՛ բթացրու գովասանքով:

Ինչպես դատես ուրիշին, այնպես կդատապարտես ինքդ քեզ:

Չարի հանդեպ մի համակվիր սնոտի տազնապով, վախով, սարսափով և մերժիր դիվային դրսևորումները, որոնք հիմնականում երեքն են՝ ազահությունը, ցասումն ու տառփանքը:

Մի՛ վերածիր փառքդ՝ սնափառության, հպարտությունդ՝ գոռոզության, բարկությունդ՝ կատաղության, ուրախությունդ՝ կեր ու խումի, հակակրանքդ՝ ատելության, ենթադրությունդ՝ կասկածի...

Մի՛ առաջնորդվիր ցանկալին իրողություն է, անցանկալին՝ պատրանք մտայնությամբ:

Ձատի՛ր թացն ու չորը և համատեղ մի՛ այրիր, զի թացը դեռևս վառելիք չէ և կրակի համար պղծություն է: Թացի տեղը կրակի կողքին չորանալն է:

Մեղանչողի նկատմամբ ներողամիտ եղիր, բայց միայն պատժելուց հետո:

Մեղանչողի հանդեպ եղի՛ր վեհանձն, բայց պատժի մեջ մի՛ թերացիր ու չափը մի՛ անցիր:

Մի՛ շփոթվիր, երբ պահանջում են ճշմարտության ապացույցներ:

Անմաքուր մարմնով մի՛ խոսիր, մի՛ գործիր, մի՛ սնվիր:

Ուտելու ժամանակ եղի՛ր հանգիստ և մի՛ շտապիր:

Նրբացրու սնունդդ և բարելաված կլինես առողջությունդ, տնտեսած՝ ժամանակդ և բոլոր ուժերին տիրապետելու կարողություն կունենաս:

Առողջարար է այն սնունդը, որն առավելագույնս է փոխակերպվում կենսաուժի:

Մի՛ թող որ սնունդդ սնվի և զբաղնունքդ զբաղվի քեզանով:

Նա՛, ով իրեն շրջապատում է արատներով, ինքն է դառնում արատավոր և հիմարանալով՝ տառապում է: Մշտապես անարատ պահիր՝ արյունդ.

ա/Արյունապղծություն է այն ամենը, ինչ բացասաբար է անդրադառնում արյան մաքրության և որակի վրա:

բ/Տհաճ երևույթը, ծայնը, հոտը, համը, միտքը, ինչպես նաև՝ տազնապը, վախը, սարսափը, հնացած սնունդը ազդում են արյան վրա և թուլացնում Գենը:

Մի՛ տկարացրու մարմինդ և հոգիդ՝ տարաբնույթ նյութական ու հոգևոր թմրեցուցիչներով:

Ճանաչիր, բայց մի՛ փորձիր հասկանալ ու արդարացնել տականքին, ինքդ կհայտնվես նրա վիճակում: Ոչ մի դեպքում տականքին մտերիմ ու մերձավոր մի՛ դարձիր, որպեսզի չպարտավորվես սիրել և պաշտպանել նրան այնպես, ինչպես ինքդ քեզ:

Ձանազանի՛ր հարուստին ունևորից, աղքատին՝ չքավորից:

Ո՛վ մարդ, զգուշացիր հակաբնական դառնալուց, զի այս վտանգը բոլոր արարածների մեջ միայն քեզ է սպառնում:

Մի՛շտ խնամիր Կենաց (Գեների) ծառը և երբեք այլ տեսակով մի՛ պատվաստիր, իսկ չորացած ուտերն անհապաղ էտիր և այրիր:

Սերունդ տու՛ր՝ ընտանիք կազմելով հայի հետ:

բ / Ներդաշնակելու

Մի՛ առաջնորդվիր կասկածանքով, ենթադրությամբ, հակակրանքով և ատելությամբ:

Մի՛ եղիր կաշառող և կաշառվող:

Եղի՛ր ուղղամիտ, արդարացի և բարեպաշտ:

Առաջնորդվիր անձող կարևորելու սկզբունքով:

Խոսիր ճիշտ և կարճ, լսիր ուշադիր և զանազանի՛ր անհրաժեշտը:

Մի՛ խնդրիր և մի՛ թող որ քեզ խնդրեն:

Երբեք անհիմն մի՛ նեղացրու և արիություն ունեցիր ընդունելու և ուղղելու սխալներդ:

Եղի՛ր հաստատուն, հանդուրժող, զուսպ, հանդարտ և խոհեմ:

Ցուցանու՛լ մի՛ եղիր, երեսպաշտություն մի՛ արա, կեղծ կեցվածք մի՛ ընդունիր: Ինչպիսին տանն ես, այնպիսին էլ դրսում եղիր:

Սակավակերությունն ու շատակերությունը, անսեռունակությունն ու վավաշտությունը, ալարկոտությունն ու հապճեպությունը, նախանձն ու անտարբերությունը ... հոգեկան խանգարումներ են:

Եղի՛ր սեռահաս և ապա նոր սեռահաղորդ:

Ձանազանի՛ր սեռային մերձեցումը կենակցումից (կենակցել՝ Գենը կցել կարող են մեկ այր և մեկ կին):

Մերձեցումը բնորոշում է սեռային բազմազանություն (ընդհուպ մինչև համասեռային և չորքոտանիների հետ տառփանքային հաղորդակցություն), որը հանգեցնում է մարմնի պղծության:

Ոչ մի ձևով, չափով, ժամանակով մի՛ պակասեցրու սթափությունդ:

Մշտապես՝ զարգացրու՛ ընկալունակությունդ և կճանաչես բարին ու չարը:

Ընկալումները լինում են՝

*Ուղղակի,

*Ներզգայական,

*Ավանդական-սովորութական,

*Տրամաբանական,

*Համեմատական,

*Հավանական-անհավանական,

*Գիտական,

Արդար լինելու համար բոլորի և ամեն ինչի մեջ նախ փնտրիր դրական հատկանիշներ:

Ընդունելի են այն ծայրահեղությունները, որոնց բնորոշ են ճշմարտությունը, սերը, արիությունը և բարությունը: Մնացած ծայրահեղություններն ավերիչ են:

43. Կոփիր մարմինդ, միտքդ, Ոգիդ և դրանց ներդաշնակ զարգացմամբ կհասնես մարմնական զորության ու հոգևոր իմաստության:

44. Անկողնուցդ շու՛տ վեր կաց և առաջին գործդ թո՛ղ լինի մարմինդ ու միտքդ մաքրելը, գեղեցկացնելը, զորեղացնելը:

45. Ո՛վ կին, ոչ մի ձևով, չափով ու ժամանակով մի՛ պակասեցրու գեղեցկությունդ և նվիրվածությունդ, այլապես ամուսինդ դրանք կփնտրի այլոց մեջ:

46. Ո՛վ այր, ուշադիր և հոգատար եղի՛ր կնոջդ նկատմամբ, այլապես այդ կանեն այլոք:

գ / Գործունեության

47. Խոսքը արժեվորի՞ր գործով:
48. Բոլոր տեսակի նվիրաբերումներն ու զոհողությունները կատարի՞ր առանց հատուցման ակնկալիքի:
49. Ապրի՞ր այնպես, որ կարեկցանքի, սփոփանքի, մխիթարության, քծնանքի և շողոքորթության կարիք չունենաս:
50. Տու՞ր, ինչ կարող ես, ստացի՞ր, ինչ կարող եմ տալ:
51. Տու՞ր ինչպես Արևը, որ Արիները դրանից զորանան, չարիները՝ մոխրանան:
52. Գող է՞ նա, ով կարողացածը չի տալիս:
53. Երբ անհրաժեշտ է կայացնել որոշում. մի՞ խուսափիր, քանզի դա միևնույնն է կայանալու է:
54. Որտեղ անգոր է գիտակցությունդ, ապավինի՞ր սրտիդ:
55. Լսի՞ր ինքդ քեզ, վստահի՞ր ներքին ձայնիդ: Դա հիմքն է, որից կարող է ծնվել ցանկացած հայտնագործություն:
56. Զգայարաններդ բանեցրու՞՛ զգալու և ո՛չ ցանկանալու համար:
57. Մշտապես մարզի՞ր զգայարաններդ, որ լիարժեք հաղորդվես Գերագույն էությանը:
 - Մարզման ենթակա զգայարաններն են՝
 - *Տեսողությունը,
 - *Լսողությունը,
 - *Հոտառությունը,
 - *Համի զգացողությունը,
 - *Շոշափելիքը,
 - *Ներզգացողությունը,
 - *Հիշողությունը:
58. Քայլի՞ր քո՞ արահետով, եթե մյուսը նույնիսկ թագավորական ճանապարհ է: Քայլի՞ր առանց կասկածելու, շրջվելու և վախենալու:
59. Փնտրի՞ր և ականատես կլինես «հրաշքների»:
60. Զանազանի՞ր պատրանքը իրականությունից:
61. Մաքուր պահի՞ր բերանդ ամեն նզովքից և անեծքից: Դրանք կվանեն բարեկամիդ, կզվարճացնեն՝ թշնամուդ:
62. Հայիոյանք տալը թուլության, անզորության դրսևորում է:
63. Գնահատի՞ր պարտականություններդ՝ ավելի, քան իրավունքներդ:
64. Մարմնիդ, Մտքիդ և Ոգուդ զորության շտեմարանը մի՞ տրամադրի՞ր անառակներին և տխմարներին:
65. Ազգի բարօրության համար տեղդ գիջի՞ր առավել ունակներին:
66. Ազգային խնդիրներին նվիրաբերվի՞ր կամավոր և գիտակցաբար:
67. Գործադրի՞ր բոլոր կարողություններդ՝ մարդ կոչվելու և արժանի մարդկանց համար աշխարհ կառուցելու նպատակով:
68. Միայն ազգի որակը կրողը պետք է առաջնորդ ու նաև՝ պետական այր լինի:
69. Առանց ազգային ապրելակերպի՝ ազգային գաղափարախոսությունն ու քաղաքականությունը դեռևս ազգային որակներ չեն:
70. Բնական համակարգը զուտ ազգային-ազգայնական կենսակերպ է, սակայն ներկայումս կան արհեստածին համակարգեր (օրինակ՝ ներկայումս կեղծ ժողովրդավարությունը): Իրական ժողովրդավարությունն էլ հարատև չէ և անպայման վերածվելու է ամբոխավարության, որը ծայրահեղություն է: Նման ճակատագրի են արժանանալու բոլոր անբնական համակարգերը:
71. Խոստումներիդ կատարման մեջ եղի՞ր հետևողական և նույնիսկ թշնամուդ տված խոստումդ մի՞ դրժիր:
72. Վստահի՞ր բոլոր նրանց, ովքեր աներեր են իրենց խոստումների մեջ: Վստահի՞ր այնքան, որքան որ մարդն արժանի է վստահության:
73. Հարգել կարողանալու համար նախ հարգիր ինքդ քեզ, խուսափելով եսամուլական անհատական և հավաքական դրսևորումներից:
74. Ճշմարտությունը ուժեղների մենաշնորհն է:
75. Ազատվի՞ր մահվան երկյուղից ու կլինես իսկապես՝ ազատ և անպարտ:
76. Մահը տրված է մարդուն՝ այն հաղթահարելու, ոչ՝ նրան սպասելու և տրվելու համար:
77. Վաղվա գործդ արա՛ այսօր, հաջորդ կյանքին նախապատրաստվի՞ր այս կյանքում: Դրանից կշահեն և՛ ընտանիքդ, և՛ Ազգդ, և՛ Մոլորակդ, և՛ Տիեզերքդ:
78. Եթե ձգտում ես «Երկնային արքայության», ապա ապրի՞ր արքայավայել՝ ինչպես բարեպաշտ և իմաստուն արքաները, և ո՛չ որպես տգետ ստրուկ, քանզի՝ ինչ ցանես, այն էլ կինձես:
79. Ո՛վ մարդ արարած, ճակատիդ երկու գիր ունես. «Ես եմ, որ եմ» և «Առաքելություն»: Առաջինը լրացուցիչ ճիգ ու ջանք չի պահանջում և հասցնում է մակերեսային ու վաղանցիկ երջանկության, երկրորդը պահանջում է զրկանք ու զոհողություն և հասցնում է հարատև երջանկության: Ընտրությունը քոնն է:

80. Միշտ ձգտիր՝ երջանկության: Երջանկությունը վաղանցիկ ոգեմտացնծության վիճակ է՝ պայմանավորված գոյիմաստական հաղթանակներով: Որքան բազում և հարաճուճ են հաղթանակները, այնքան տևական է երջանկության զգացումը: Դու՝ ես քո դժբախտության պատճառը և երջանկության երաշխավորը:

81. Քո երջանկությունը տե՛ս Ազգիդ հզորացման և Հայաստանի բնական սահմանների վերականգնման մեջ, ամեն ինչ զոհաբերի՛ր հանուն Հայրենիքի: Արարչի կողմից մեզ տրված Հայրենիքը՝ Հայկական Բարձրավանդակն է, որ միայն Հայերինս է:

դ / Դպրության

82. Իմաստավորի՛ր շարժումդ, միտքդ, ժամանակդ: Եթե նման են բոլոր շարժումներդ, մտքերդ և վայրկյաններդ, կնշանակի՝ անդամալույծ ես, անիմաստ և ընդամենը վայրկյան է կյանքդ:

83. Ձգտիր՝ ապագային և կավելացնես ներուժդ:

84. Ուսանի՛ր, պահպանելով Ազգին և Հայրենիքին առավել արդյունավետ ծառայելու խորհուրդը:

85. Հարգիր նրանց, ովքեր սիրում են իրենց Ազգն ու Հայրենիքը, նույնիսկ եթե թշնամիդ են:

86. Նվիրվի՛ր Ազգիդ և Հայրենիքիդ սրով ու գրչով: Առաջնահերթությունը կթելադրի իրավիճակը:

87. Ծառայի՛ր Ազգիդ և Հայրենիքիդ ամեն ինչով, բայց՝ ոչ՝ ստորությամբ:

88. Հայրենիքը ստրկատեր չէ, իսկ նրան ծառայելն էլ՝ ստրկություն: Հայրենիքին ծառայելը՝

պաշտպանելն ու հզորացնելը, սեփական անձի և ազգի հարատևման ու առաքելության իրականացման երաշխիքն է:

89. Ե՛վ գիտակցաբար, և՛ բնազդաբար ունեցիր Ազգի հավիտենության համար կռվելու ու մեռնելու պատրաստակամություն:

90. Կռվի՛ր հաղթելու, մեռիր անմահանալու համար:

91. Մահը թշնամի չէ՛, այն մարտահրավեր է, արժանի հակառակորդ:

92. Մեռի՛ր այնպես, որ մահդ էլ ծառայի Ազգիդ ու Հայրենիքիդ:

93. Տեր եղի՛ր Հայրենիքիդ, այլպես օտարը բռնությամբ կորդեզրվի քո նախնիներին:

94. Ամենօրյա մանրուքներում անգամ զարգացրու՝ կամքդ:

95. Տղամարդ ասելով հասկացիր վերարական, և կին ասելով՝ վերիզական հոգեվիճակ և որակ:

96. Մի՛ շփոթիր Արիությունը արու լինելու հետ:

97. Առաքինուց սովորի՛ր՝ ինչպիսին կարելի է լինել, իսկ տականքից՝ ինչպիսին չի՛ կարելի:

98. Ազատվիր՝ նախապաշարունմերից և կվերականգնես Ցեղային լիարժեքության

գիտակցությունդ, կատարելագործիր՝ անձդ և կպաշտպանես քո անհատականությունը:

99. Երբ մարդիկ չար և դաժան են իրավիճակի թելադրանքով, դեռ ամեն ինչ չէ՛ որ կորած է:

100. Խստապահանջ եղի՛ր մարդ որակի նկատմամբ, որպեսզի կարողանաս ստեղծել և զնահատել իսկական համամարդկային արժեքներ:

101. Մարդը անքակտելի երրորդություն է՝ բաղկացած Մարմնից, Բանականությունից և Ոգուց-Հոգուց:

102. Ստքի և Ոգու ուժերը զորեղանում են այնտեղ, որտեղ լավ են կրթում և կրթվում:

103. Ծնողների գերագույն պարտքը զավակներին կրթություն տալն է: Անկիրթ զավակներ ունեցող ծնողները պատվի արժան չեն:

104. Միայն նա՛՝ կարող է համարվել լիարժեք մարդ, ով վաղ հասակից մշտապես մարզվել է և ստացել ազգային կրթություն:

105. Ծշմարիտ ուսուցիչը նա՛ է, ով սովորեցնում է հարց տալուց զատ՝ գտնել նաև այդ հարցի պատասխանը:

106. Որտեղ նահանջում է ոգեղենությունը, այնտեղ իմաստագրվում է բանականությունը: Որտեղ իմաստագրվում է բանականությունը, այնտեղ տկարանում է մարմինը:

Երրորդություն-մարդ որակը նախապայման է Գերագույն Էության ընկալման:

107. Ծանաչի՛ր հակառակորդիդ աշխարհընկալումը, գործի՛ր համարձակ ու արագ՝ կանգնեցնելով նրան կատարված փաստի առաջ: Թող հակառակորդի դիմադրությունը խթան լինի, բայց ոչ՝ արգելք:

108. Ծանաչի՛ր ճշմարիտ գեղեցկությունը: Դա այն գեղեցկությունն է, որը

համապատասխանում է բոլոր զգայարանների պահանջներին:

109. Գեղեցիկի ընկալումն ունեն բոլորը՝ և՛ առաքինիները, և՛ տականքները, սակայն, տարբեր են գեղեցիկը վայելելու ձևերը: Առաջիններն այն զգում, խնամում և հիանում են, երկրորդները՝ կամեցնում, տիրում ու բռնանում են:

110. Քաղաքականությունը պայքար է՝ հանուն հավաքական իրավունքի: Իրավունքը ծնունդն է ուժի և արդարության: Ուժը և արդարությունը մաքրությամբ և ճշմարտությամբ ոգեմարմնական մարզվածությունն է: Մաքրությամբ և ճշմարտությամբ ոգեմարմնական մարզվածությունը նախապայման է Գերագույն Էության իմաստավորման և իմաստության: Գերագույն Իմաստությունը կայացած (իրականացված) Ոգու բաղձալի նպատակն է:

111. Իմաստուն Ոգով առաջնորդված քաղաքականությունն արդար է և հաղթական:

112. Ծանաչի՛ր քո մեծագույն թշնամուն, որը՝ ունայնությունը՝ սինն է: Կիսակույր ես, եթե չունես դրա ճանաչման ներհայեցողություն, բայց սինը կարող ես գտնել ուրիշի մեջ:

113. Ուրիշի սինը քեզ համար վտանգավոր չէ, եթե հաղթահարված է քո սինը:

114. Ո՛վ Հայ ռազմիկ, որքան շա՛տ քրտինք թափես, այնքան քիչ արյուն կկորցնես մարտադաշտում:

115. Ապագային հատկանիշներով առաջնորդվող ժողովուրդը վերածվում է ամբոխի և անբարո է դառնում հասարակությունը, բժիշկը երազում է շատ հիվանդ ունենալ, ինչպես ոստիկանը՝ հանցագործ, հրշեջը՝ հրդեհ, քահանան՝ առատածեռն խաչհամբուրող, դագաղագործը՝ մեռել...

116. Խոսի՛ր, մտածի՛ր, գործի՛ր, արարի՛ր Հայերեն ու Հայաստանի համար:

117. Գիտցի՛ր քո գերագույն ծնողը Ազգն է, ապա միայն անմիջական ծնողներդ:

ե / Իմաստության

118. Ձանազանի խելացիին գրագետից, կիրթ մարդուն ուսյալից, իմաստունին՝ գիտունից, հանճարին՝ տաղանդավորից:

119. Հավատա՛ և գործի՛ր՝ մշտապես ունենալով քո լրացուցիչ տարբերակը:

120. Տիեզերքն անփոփված է մտքի մեջ, միտքը սփռված է Տեզերքով մեկ: Տիրապետի՛ր մտքիդ:

121. Հետևի՛ր մտքիդ ընթացքին, այլապես նա կպատժի քեզ, քանզի ով իշխում է մտքին՝ նա նրա բարեկամն է, ով չի իշխում՝ միտքը դառնում է նրա մեծագույն թշնամին:

122. Ապրի՛ր հավատով և ոչ՝ հույսով: Հավատա՛ Ազգիդ ուժին, կարողություններին:

123. Պայքարը կյանք է. նա ներդաշնակորեն պետք է ներառի ինչպես ուժ և վճռականություն, այնպես էլ՝ սեր և քնքշանք:

124. Հիշի՛ր, որ կարողանա ապրել և ապրի այնպես, որ քեզ հիշեն:

125. Եղի՛ր բնական. բնական է այն, ինչը մաքուր և արարչական է:

126. Որտեղ վերջանում է առաքինությունը, այնտեղ դադարում է արարումը: Որտեղ դադարում է արարումը, այնտեղ սկսվում է ավերումը: Որտեղ սկսվում է ավերումը, այնտեղ իշխում է կիրքը: Որտեղ իշխում է կիրքը, այնտեղ ձևավորվում է տգիտությունը: Որտեղ ձևավորվում է տգիտությունը, այնտեղ վերջանում է առաքելությունը: Որտեղ վերջանում է առաքելությունը, այնտեղ մեռնում և կանգ է առնում ամեն ԲԱՆ: Եվ ուրեմն՝ առաքինությունը նախապայման է առաքելության լինելիության:

127. Գերագույն Եության նյութական կերպավորումները անթիվ են՝ սկսյալ բյուրեղից և բույսերից, շարունակյալ՝ միջատներով, ծովաբնակներով ու թռչուններով և ավարտյալ՝ չորքտանի և երկտանի արարածներով, բայց նրա բնույթի կրողը մեկն է՝ Աստվածային Եությամբ օժտված մարդը՝ Սարդ-Աստվածը՝ Հայը:

128. Հայի Գենը դեռևս Հայ չէ: Հայը՝ Գենից ծնված բարեպաշտության և լինելիության մարմնավորումն է՝ ամրապնդված հաստատական զորությամբ և իմաստությամբ:

129. Հայ լինելու համար շնչի՛ր, տես, խոսի՛ր, շոշափի՛ր, պահի՛ր, կե՛ր՝ միայն անարատը:

130. Ճանաչի՛ր Ազգիդ պատմությունն ու մշակույթը, պաշտպանի՛ր նրա լեզուն ու բարոյական օրենքները, եղի՛ր հպարտ՝ Հայ լինելուդ համար:

131. Բոլոր արարածներն Աստծո ստեղծածն են, բայց Աստված բոլորին չէ ընտրյալ ստեղծել և բոլորը չէ որ ընկալում են Աստվածայինը:

132. Մի՛ նվաստացի՛ր՝ անգամ քո Աստծո առաջ:

133. Մի՛ մոլորվի՛ր Աստծո երևակայական դրսևորումներով, այլ գիտակցի՛ր Աստվածայինի արտահայտամիջոցները. ջրի մեջ՝ մաքրագործությունը, հողի մեջ՝ բերրիությունը, օդի մեջ՝ թթվածինը, հրի մեջ՝ ջերմությունը, եթերի մեջ՝ լույսի անապառությունը, արարածի մեջ՝ առաքելությունը, պսակի մեջ՝ ընտանիքը, սեռայինի մեջ՝ ուշիմ երեխաներ ունենալը, կյանքի մեջ՝ երջանկությունը, հյուրընկալության մեջ՝ օթևանը, ցերեկվա մեջ՝ արարումը, գիշերվա մեջ՝ քունը, գաղտնիքի մեջ՝ լռությունը...

134. Եղի՛ր ինքնաճանաչ, որ ճանաչես Եությունդ: Եղի՛ր Էաճանաչ, որ ճանաչես Բնությունդ: Եղի՛ր բնաճանաչ, որ ճանաչես Ցեղդ: Եղի՛ր ցեղաճանաչ, որ ճանաչես Տիեզերքը: Եղի՛ր տիեզերաճանաչ, որ ճանաչես Գերագույն Եությունը: Ճանաչելով Գերագույն Եությունը՝ բացարձակ կդառնաս տարածության և ժամանակի մեջ:

135. Կյանքը ինչպես արարման, այնպես էլ քայքայման դանդաղ գործընթաց է ծննդի և մահվան միջև: Ինչ որ այդ պահին անում ես, հնարավոր է՝ քո վերջին արարքն է:

136. Կյանքը գործունեության ասպարեզ է: Այն տրված է սահմանափակ ժամանակով: Ընտրի՛ր ինչ որ բան և այն անվանի՛ր սկիզբ, այնուհետև գիտակցի՛ր հետագա յուրաքանչյուր գործողությունդ:

137. Միշտ ոգեղեն պահի՛ր հպարտությունդ և համեստությունդ՝ այն ամբարտավանության և մեծամտության չվերածելու համար:

138. Ոգուդ զարգացումը ներդաշնակի՛ր Ցեղիդ հավիտենության ապահովման հետ և կհասնես Բացարձակին ու Հավերժին, կներձենաս Արարչին. դա է մեր Ցեղի Առաքելությունը:

139. Անցյալը, ներկան և ապագան մի ամբողջությունն է, Ոգու դրսևորման ու կատարելագործման հարատև ընթացք:

140. Դժոխքը մարդու՝ նյութական և պատրանքային սահմանազանց վայելքների այլաբանական մարմնավորումն է, որը Ոգու տառապանքի արտացոլումն է:

141. Դրախտը մարդու՝ ճանաչողության և արդարադատության այլաբանական մարմնավորումն է, որը Ոգու կատարելության արտացոլանքն է:

142. Բացի Հայրենիք-Բնօրրանից՝ ունեցի՞ր քո հոգևոր Հայրենիքը:
143. Հիշի՞ր, որ քո մարմինն էլ Տիեզերք է. իր մեջ ունի բազմաթիվ կյանքեր ու մարմիններ: Դու՛ ես նրանց Արարիչն և սիրի՞ր այդ Մարմին-Տիեզերքը, ինչպես քո Արարիչն է սիրում քեզ և քո Տիեզերքը:
144. Ինքդ եղի՞ր քո ընդդիմախոսն ու հակառակորդը, որպեսզի հստակեցնես միտքդ ու ներաշխարհդ:
145. Կամենալը հարկադրանք չէ, այլապես դու կլինես քո թշնամին. կըվտանգես մարմինդ, ծուղակը կզցես՝ հոգիդ:
146. Ինչպես մտնը լույս չի տալիս առանց այրվելու, այնպես էլ մարմինն անշարժ է առանց Կենսաց սկզբունքի: Մարմնում եղած Կենսաց սկզբունքը ոչ մի ձևով ենթակա չէ ոչնչացման:
147. Մարմինը Կենսաց սկզբունքի և Ոգու Առաքելության իրականացմանն նախապայման է:
148. Նյութեղեն է այն, ինչ զգայական է (ընդհուպ մինչև գենետիկ հիշողության երևակումները):
149. Տիեզերքը նյութ է և լողում է Գերիմաստության հոգևոր անեզրության մեջ:
- Գերիմաստության հոգևոր անեզրությունն անսկիզբ է և անվերջ, այն հավերժ է: Հավերժը Գերիմաստության Առաքելությունն է:
150. Ոչինչ պատահական չէ՝ և անհետևանք չի՝ ավարտվում...

ՀԱՄ-Ի ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ՀԱՄ-ի Գերագույն Նպատակներն են Ազատ, Անկախ ու Միացյալ Հայաստանի՝ Հայքի վերականգնումը, Հայ Ազգի համախմբումը իր Հայրենիք-Բնօրրանում և Արիական-Ցեղապաշտական (որն է՝ Հայկական-Ցեղապահպանական) ապրելակերպի առաջընթացը, որը կնպաստի Աստվածայինի՝ Տիեզերավարձի վերահաստատմանը:

Դրանք իրականացնելու համար ՀԱՄ-ը հետևողականորեն՝

1. Նպաստում է Հայաստանում Ազգային պետականության կայացմանն ու ամրապնդմանը, տնտեսության հզորացմանը:
2. Մասնակցում է Հայ Ազգի միասնությանն ու համախմբմանը, ՀայԱրիական մտածողության ձևավորմանը և Արիական-Ցեղապաշտական, նույնն է՝ Հայկական-Ցեղապահպանական ապրելակերպի աստիճանական վերահաստատմանը:
3. Ձգտում է Հայոց արժեքային համակարգի՝ հավիտենարժեք սրբությունների և ազգային ու բարոյական գաղափարախոսությունների պետական քաղաքականության հիմք դառնալուն:
4. Մասնակցում է ավանդական, ազգային, մշակութային՝ հոգևոր արժեքների, պատմական հուշարձանների և այլ շինությունների վերականգնմանը և վերաարժեքավորմանը:
5. Ձգտում է ազգային կրթական, մարզական և առողջապահական բնագավառների անվճար սպասարկման, ինչպես նաև՝ Հայ Ազգի սոցիալական և իրավական պաշտպանվածության հաստատմանը:
6. Նպաստում է Հայոց պետության և Հայ Ազգի պաշտպանությանն ու անվտանգության ապահովմանը:
7. Ձգտում է հոգևոր, մտավոր ու գիտական արժեքները ազգային հարստություն համարելուն:

ՀԱՄ-ը այս խնդիրների իրականացումը կարևոր և անհրաժեշտ է համարում՝ Գերագույն Նպատակներին հասնելու նպաստավոր պայմաններ ստեղծելու համար:

ՀԱՄ-ը նաև չի բացառում միջազգային կամ մերազգային քաղաքականության մեջ անսպասելի, կտրուկ շրջադարձների հնարավորությունը, որի ժամանակ կարող են ծագել այլ նպատակներ ու խնդիրներ, որոնք այդ պահին կհամարվեն ավելի կենսական:

ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՐ

Յուրաքանչյուր ազգ կամ պետություն հարատևում ու զարգանում է, երբ անխոցելի և հակազդող է նրա անվտանգության համակարգը: Այս համակարգը ամենառազմավարականն է բոլոր ազգային ու պետական համակարգերի մեջ, ուստի մեր նախնիները մշտապես կատարելագործել ու հզորացրել են այն, հասնելով կատարելության, որն էլ հազարամյակներ շարունակ նպաստել է հզորագույն Հայկական պետությունների գոյատևմանը: Այս համակարգում կիրառվել (այժմ էլ կիրառվում) են հոգևոր-գաղափարական, ռազմապաշտպանական, լեզվակրթական, բնապահպանական-առողջապահական, բարոյա-հոգեբանական, գիտական-մշակութային, արտաքին ու ներքին քաղաքական և այլ հայեցակարգեր, սակայն, ամենազորավորը Ոգեղեն-Տիեզերական Ջորություններն են եղել, որոնք այսօր թաքնագիտական (գաղտնագիտական) շղարշով են պարուրված և կիրառվում են սովորական աչքի համար անտեսանելի ձևերով: Այս իմաստությամբ կարելի է տկարացնել (նաև՝ տխմարացնել) ազգերի ու քանդել պետություններ, շատ հարցեր լուծելով առանց զինված կամ այլ ձևերի բացահայտ ընդհարման: Ցավոք, այս զորությունից մենք դեռևս նպատակային կերպով չենք օգտվում, որի հնարավորություններն ունենք գենետիկորեն և Արարչական է մեր այդ Ջորությունը...

ՀՀ ներկայիս անվտանգության համակարգը շատ հեռու է կատար- յալ լինելուց, ուստի մեր պետության և Համայն Հայության գերխնդիրն է կառուցել ու շարունակաբար արդիականացնել Հայոց Անվտանգության Համակարգը, ինքնատիպորեն զարգացնելով վերը նշված ոլորտներից յուրաքանչյուրը:

ՀՈԳԵՎՈՐ-ԿՐՈՆԱՊԱՇՏԱՄՈՒՆՔԱՅԻՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Հսկաների Ցեղը՝ Հայերը, լինելով Մարդ-Աստվածներ, ճանաչելով Համատիեզերական օրինաչափություններն ու իրականությունը, ունեցել են ճշմարիտ պատկերացումներ Արարչի, Աստվածների, Նյութի ու ներուժի (էներգիայի), ինչպես նաև՝ մարմնի ու հոգու (Ոգու) փոխադարձ կապի, ամենատարբեր Բնական՝ Տիեզերական երևույթների և այլնի մասին...

Հայերի Գիտական Միտքն ու Իմաստասիրությունը կառուցվել է Համատիեզերական ճշմարտությունների հիմքի վրա: Այդ ճշմարիտ Գիտական Միտքն ու Ամենայն Ստեղծի Իմաստասիրությունը պարզաբանվել և տրվել է նաև երկրաբանակ չորս Ցեղերին: Եվ այս Ցեղերը, ճանաչելով Ամենայն ճշմարտությունը, ունեցել են Արարչի, Աստվածների, Մարդ-Աստվածների (Աստծո Որդիների կամ Ընտրյալների), Ամենայն Արարման և դրա հետ կապված սրբությունների վերաբերյալ իրենց հավատքի ու պաշտամունքի բացատրելի դրսևորումները, որից և ծնվել են Ցեղապաշտությունը, Ծնողապաշտությունը, Հայրենի Հողի, Սրբազան Արարատ Լեռան, Հայկրիական Խաչի (Խաչապաշտություն, ինչպես հավասարաթև խաչ, այնպես էլ կեռխաչ-սվաստիկա), Նախնյաց և այլ պաշտամունքներ...

Սակայն, դարերի ընթացքում ցեղապիղծ զանգվածների ձևավորվելուց հետո, աստիճանաբար աղավաղվեցին և խեղաթյուրվեցին Հայերի ճշմարիտ Գիտական Միտքն ու Ամենայն Ստեղծի Իմաստասիրությունը, իսկ դրանք ուսուցանողները՝ Մարդ-Աստվածները՝ Հայերը, առանձնացվեցին որպես անհատ սրբություններ՝ Աստծո Որդիներ, մարգարեներ, միակ ու անկրկնելի կատարյալներ... Ավելին, հազարամյակներ շարունակ ստեղծվեցին տարբեր իմաստասիրություններ ու գաղափարախոսություններ՝ կրոններ, հավատքներ, պաշտամունքներ և այլն, որտեղ Մարդ-Աստվածներին սկսեցին ոչ միայն հակադրել միմյանց, այլ՝ գրեթե թշնամացնել՝ իբրև «հիմնավորելով» տվյալ կրոնի բացարձակությունը...

Յուրաքանչյուր նորահայտ «մարգարե» Մարդ-Աստվածների՝ Հայերի, ճշմարիտ Գիտական Մտքի և Ամենայն Ստեղծի Իմաստասիրության արդեն աղավաղված և խեղաթյուրված ներկայացնող նորաստեղծ կրոնական գաղափարախոսությունները սկսեց մեկնաբանել արդեն իր մտքի թռչչի տրամաբանության հնարավորության սահմաններում, և, այսպես, կրոններն էլ իրենց հերթին մասնատվեցին բազմաթիվ աղանդներ: Աղանդավորներն արդեն առանձնացրին ոչ միայն Մարդ-Աստվածներին, այլև՝ նրանց կյանքի տարբեր ժամանակահատվածներն ու գործունեության ոլորտները: Այսպիսով, Հայերի ճշմարիտ Գիտական Միտքն ու Ամենայն Ստեղծի Իմաստասիրությունը գրեթե ոչնչացվեց, իսկ փոխարենը ստեղծվեցին Մարդ-Աստվածների վերաբերյալ առանձին կրոններ, Տիեզերքների, երկրագնդի և այլնի արարման ուրույն պատկերացումներ, իսկ աղանդների ի հայտ գալով՝ պաշտելի դարձան նույնիսկ որևէ Մարդ-Աստվածի, Աստծո Որդու անցկացրած կյանքի մի քանի օրերը...

Աղավաղումներն ու խեղաթյուրումները մարդկությանը հեռացրին իրականությունից, իսկ Հայերին (նաև՝ Արիացիներին)՝ իրենց Բնությունից և Էությունից: Սակայն, արդեն անհրաժեշտ է վերջնականապես ըզզալ ու կողմնորոշվել, որ ներկա կրոնների միմյանց հակադրումն անհիմաստ է, քանզի ոչ մեկը մյուսի նկատմամբ չի կարող ունենալ որակական առավելություն, ավելին՝ տարածում գտած կրոնների հիմնադրյալները ոչ թե հեռու չեն իրարից, այլ սնունը կատարվել է բացարձակապես նույն Ակունքից...

Այն կրոնները, որոնք շատ թե քիչ կառուցվել են Հայ Ցեղի ճշմարիտ Գիտական Մտքի և Ամենայն Ստեղծի Իմաստասիրության հիմքի վրա, ունեն բացահայտ մանություններ ու մեկնաբանություններ, և սա թույլ է տալիս գրեթե հստակորեն գծագրել ընդհանուր ճշմարտության, իրականության պատկերը: Այս գծագրման գործընթացը օրինաչափորեն պետք է լինի հատկապես միմյանց դեմ մարտնչող կրոնների համախմբման այն պահը, որից հետո կարելի կլինի հավաքել, ընդհանրացնել և անհրաժեշտաբար վերադառնալ Մարդ-Աստվածների ճշմարիտ Գիտական Մտքին և Ամենայն Ստեղծի Իմաստասիրությանը, Հայակրոնությանը, որտեղ էլ թաքնված է Արարչի և Ամենայն Արարման գաղտնիքների բացման բանալին՝ Տիեզերական Հավերժական Խորհմաստ Խորհուրդները...

ՈԱԶՄԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Հայ Ազգը, լինելով Հայ Ցեղի բացարձակ ու հզոր Գեների ժառանգական կրողը, օգտագործելով ավանդաբար փոխանցված գիտությունների իմացությունն ու բազմափորձ իմաստությունը, հազարամյակներ շարունակ ստեղծել է ազդեցիկ պետություններ, ունեցել է զորեղ ռազմական օրենքներ և ուժ, ու մշտապես անխոցելի է եղել այլազգիների համար...

Հզոր Հայաստանի օգնությանն ու ապավինությանն են դիմել բազմաթիվ երկրներ ու ազգեր, որոնք ցանկացել են թոթափել օտարների լուծը: Հայ բարեպաշտ արքաները հզոր բանակներով հսկել են «անժայրածիր տարածքներ», հաստատել օրենքներ և կրել «Արքայից Արքա», «Աշխարհի չորս կողմերի Արքա» և այլ հինգեղ տիտղոսներ: Փառավոր է Հայոց Պատմությունը և հարատև Հայոց անկոտրում Ոգին...

Հեռանալով իր նախնիների արմատներից, Հայկրիական ներցեղային ներդաշնակ ապրելակերպից, ինչպես նաև, կորցնելով Հայրենիք-Բնօրրանի հիմնական մասը, Հայ Ազգը, պարբերաբար

ենթարկվելով հալածանքի ու այլասերման, տկարացավ և կորցրեց նախկին գորությունը: Թվում էր, թե վիճակն անհույս է այլևս, սակայն ինքնապաշտպանության աներևույթ բնազդն արթնացրեց նիրհած հզոր Գեներ և խոսեց նահատակների հանդեպ ոգեղեն պարտականությունը («Իր նահատակների դեմ մեղանչող ժողովուրդը՝ մեղանչում է իր ապագայի դեմ...») և Հայ Ազգը գերագույն ճիգերի գնով վերականգնեց իր անկախ պետականությունը: Եվ արդ, դրա պաշտպանությունը Հայ Ազգի ապագայի ու զարգացման երաշխիքն է...

Ազգի և Հայրենիքի հուսալի պաշտպանվածությունը որպես հարատևման ռազմավարական գործոն մշտապես լինելու է Համահայկական առաջնային և անբեկանելի գերխնդիր: Ցանկացած քայլ (ու՜մ կողմից էլ այն ձեռնարկվի), որը կթթացնի կամ կթուլացնի զգոնությունը նշյալ «աքսիոմայի» նկատմամբ, և ավելին՝ կենթադրի դավադիր (հակառակ) հիմնավորում, անխուսափելիորեն պետք է համարվի դավաճանություն: Հայության և Հայաստանի դեմ, և նախաձեռնողը պետք է հրապարակայնորեն անհապաղ մեկուսացվի՝ պատժվի, իսկ ծայրահեղ անհրաժեշտության դեպքում՝ նաև վերացվի:

«Անբարոյականանում են անմարտունակ ազգերը...» և ՀայԱրիական ազատատենչ ու ռազմաշունչ Ոգին պետք է մշտապես խլրտա յուրաքանչյուր Հայի հոգում: Հայրենապաշտության, Հայրենատիրության (Ազատ, Անկախ և Միացյալ Հայաստանի վերակերտում) և հանուն Ազգի զոհաբերության գաղափարներն են լինելու Հայ ռազմիկի ձևավորման նախահիմքը: «Հայրենիքն ապրում է հայրենասիրությամբ, կործանվում՝ դրա պակասից...», «Միայն արին, քաջը, միայն հերոսը կարող է զոհաբերել: Անընդունակ է թույլը ինչպես սիրո, նույնպես և զոհաբերության: Արգասավոր չէ թույլի սերը: Մի ժողովուրդ, որն ընդունակ չէ այս երկու առաքինության (սեր և զոհաբերություն)՝ դիպվածների կպարտի իր գոյությունը: Մենք առնվազն կարող և հզոր պիտի լինենք, որպեսզի կարողանանք սիրել և զոհաբերել ...»: Անհատապես զոհաբերման պատրաստ հերոսների համախմբումը միայն կարող է ստեղծել անպարտելի բանակ՝ ունակ աննախադեպ սխրագործությունների...

«Իր հողի վրա պարտվելը կրկնակի աններելի պարտություն է: Իր հողի վրա պարտվողը ազատ Հայրենիքի իրավունք չունի...»: ՀայԱրիական ռազմի օրենքներն ու վեհանձնությունը, Նժդեհյան Ցեղակրոնությունը, — ահա, — անպարտելիության «հոգևոր սնունդը»: Արիական-Ցեղապաշտական (Հայկական-Ցեղապահպանական) կացութաձևը, ներցեղային օրենքներն ու բարոյականությունը, — ահա, — միջավայրը՝ անպարտելիության «մարմնական ծնունդի»...

Ազգի և Հայրենիքի ինքնապաշտպանությունն իրականացնում է Հայոց Ազգային բանակը: Ինչպես բանակի ստեղծումը, այնպես էլ ծառայության կազմակերպումը կարգավորվում է զինվորական հատուկ օրենսդրությամբ: Մինչև ազգային հիմնախնդիրների վերջնական լուծումը ծառայությունը բանակում պարտադիր է բոլոր Հայորդիների համար: Հայ տիարք և տիկնայք պետք է տիրապետեն ամենատարբեր մարտարվեստների, ինչպես նաև ընդհանուր զինվորական գործին («Առյուծն առյուծ է՝ եզ լինի, թե՛ ործ»): Տարիքային և այլ անհրաժեշտ ժամանակավոր կամ հիմնական սահմանափակումներն ընդհանուր օրենքի մեջ կարող են փոփոխման ենթարկվել՝ ըստ իրադրության (պատերազմական, արտակարգ և այլ իրավիճակներ) և Ազգի ինքնապաշտպանության ապահովման առաջնահերթության տեսանկյունից...

Հայոց Ազգային բանակը երբեք չի կարող օգտագործվել Հայ Ազգի դեմ, այդպիսի շահագործումն անհերքելի դավաճանություն է, և յուրաքանչյուր Հայ զինվորականի սուրբ պարտականությունն է հստակորեն գիտակցել սա և լինել Ազգի հետ, բայց ոչ երբեք՝ նրա դեմ:

Հայ Ազգին բանակ ունենալու իրավունքից, իսկ բանակին Ազգի և Հայրենիքի շահերը պաշտպանելու պարտականությունից զրկելը հանցագործություն է, ազգահալած քաղաքականության դրսևորում, որը նույնպես դավաճանություն է:

...«Զի թույլատրվում սպանել. ընկածին, ներքինուն, խաչված ձեռքերով գթություն աղերսողին, հերարծակ փախչողին, նստածին, «ես քոնն եմ» հավաստողին, քնածին, զենք ու զրահ չկապածին, մերկին, անզենին, չկռվողին՝ սոսկ դիտողին, ուրիշի դեմ մարտնչողին, դժվարին կացության մեջ հայտնվածին, որն անգոր է կռվելու, վշտից խոցվածին, ծանր վիրավորին, ահաբեկվածին, նահանջողին՝ միշտ հիշելով ռազմիկի առաքինության մասին պատվիրանը...» — այս և նմանատիպ Արիական ռազմական օրենքները պետք է ամրագրվեն Հայ զինվորականի սրտում: Հարկ է նաև սահմանել, որ Հայ ռազմիկի ձեռքը երբեք չպիտի դողա մահ և ավեր սփռող թշնամուն ու նաև դավաճանին գլխատելուց...

Բացի Հայոց Ազգային կանոնավոր բանակից, անհրաժեշտ է նաև ստեղծել Համահայկական Միացյալ բանակ (Ազգ-բանակ, Համաժողովրդական բանակ), որի կազմում իր տեղն ու դերը կունենա յուրաքանչյուր Հայ՝ անկախ բնակության վայրից: Այդ բանակը ներառելով ամբողջ Հայությանը, կառաջնորդվի առանձնահատուկ օրենսդրությամբ և կունենա ճկուն կառուցվածք: Համահայկական Միացյալ բանակում զորահավաք կկազմակերպվի Հայ Ազգի և Հայաստանի համար ամենավտանգավոր հանգամանքներում...

Զինվորականները մշտապես պետք է գտնվեն Հայաստանի իշխանությունների ուշադրության կենտրոնում, իսկ համապատասխան օրենքները պետք է արտոնություններ ու առավելություններ շնորհեն Ազգի պահապաններին, հատկապես՝ զոհված և վիրավոր ռազմիկների ընտանիքներին, որն անզնահատելի խթան կլինի նաև կամավորական (ֆիդայական) ինքնապաշտպանական-

ազատագրական շարժումների և Հայրենիքի մշտադրույն մվիրյալների (աշխարհագրորային, ազատամարտիկ, երկրապահ...) կազմակերպման համար:

Ազգի և Հայրենիքի պաշտպանվածության ու անվտանգության կազմակերպման աշխատանքներն ավելի ուժեղացնելու նպատակով բանակից բացի անհրաժեշտ է նաև հասարակական կարգ ու կանոնի պահպանության (ազգային ոստիկանություն) և ազգային-պետական անվտանգության ապահովության ուժերի մշտական առկայությունը: Այդ ուժերը կունենան կառույցներ և ծառայություններ, կառաջնորդվեն համապատասխան օրենքներով, որոնք հստակորեն կտարաբաժանեն պաշտպանության ու անվտանգության ոլորտները, և կիրականացնեն ազգապահպան գործունեություն: Հասարակական կարգ ու կանոնի պահպանության և ազգային-պետական անվտանգության ապահովության ուժերի օգտագործումը Հայ Ազգի և Հայաստանի դեմ — պետական հանցագործություն է՝ ենթակա ամենախիստ դատապարտման:

Ռազմապաշտպանական ուժերի և ազգային բոլոր կառույցների ներդաշնակ գործունեությունն է երաշխիքը այն ցանկալի կայունության, որը թույլ կտա հիմնավորապես կարգավորել ներազգային խնդիրները և բոլոր ուժերը օգտագործել միջազգային թատերաբեմում՝ ի պաշտպանություն ազգային նպատակների և խնդիրների...

ԼԵԶՎԱՔԱՂԱՔԱՎԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Հայոց Լեզուն հին է այնքան, որքան Հայ Ցեղը, և որպես Ամենահնագույն Լեզու՝ Նախալեզուն է՝ Մայր-Լեզուն մարդկային բոլոր լեզուների: Հայերենն իր մեջ կրում է հարյուր հազարամյակների պատմական հիշողություն, միևնույն ժամանակ մեր Լեզուն գենետիկ հիշողության արտահայտչամիջոցն է, ուստի Լեզվապահպանությունը համազգային գերխնդիր է: Մեր ազգային նկարագիրն ու արժեքները պահպանող համակարգի ամենագրեղ գործոնը Լեզուն է: Եթե ազգային գաղափարախոսությունն իր հիմքում հստակորեն ամրագրում է ազգի ծագման, զարգացման, հարատևման ու առաքելության, նաև՝ Բնօրրան-Հայրենիքում ինքնատիպ կենսակերպով ապրելու սկզբունքներ, ապա դրա ենթաբաժիններից ազգային անվտանգության հայեցակարգը կառուցվում է Ազգի ու Հայրենիքի՝ արտաքին վտանգի դեմ պաշտպանական համակարգի և ներազգային անվտանգության (գենետիկ ինքնապաշտպանության, նախևառաջ՝ Արյան ու Լեզվի անաղարտության) պարտադիր առկայությամբ: Սրանք անհրաժեշտ ինքնապահպանության այն գործոններն են, որոնք ՄԱՐԴ-ը պետք է զգա և՛ գիտակցաբար, և՛ բնազդաբար: Պետք է գիտակցել ոչ միայն անհատապես, այլև՝ պետականորեն: Պետություն ստեղծելը, ունենալն ու հզորացնելը բոլոր ազգերի կենսակերպի ուղղորդիչ տարրն է: Ազգային հանրության կյանքի առանձնահատկությունները բացառելը ի վերջո կհասցնի ուժացման, տարրալուծման, և ազգը կվերա: Մարդկության պատմությունը սովորեցնում է, որ պետությունն ազգին դարձնում է հզոր ու ապահովում հարատևումը: Սակայն, որպեսզի պետությունը չայլակերպվի և թշնամի չդառնա սեփական ազգին, անհրաժեշտ պայման է պետության բնույթի ներդաշնակությունը պետություն ստեղծած ազգի շահերին: Այսինքն՝ հայոց պետության բնույթը հայկականությունը պետք է լինի: Պետության բնույթն էլ պայմանավորված է մշակութային քաղաքականությամբ: Մշակութային քաղաքականությունն է որոշում՝ ազգը, իր արժեքային համակարգով, կապրի՞, թե՞ կկորչի, կանհետանա: Լեզվաքաղաքականությունը պետության Լեզվի անմրցակից գործառնությամբ, լուծում է ազգային անվտանգության, ազգապահպանության խնդիրները և առանց սեփական Լեզվաքաղաքականության Հայոց պետությունը ազգայնորեն չի զարգանա: Լեզվաքաղաքականությունն այն միջնաբերդն է, որի հանձնելուց հետո իր հաղ- թարշավն է սկսում ապազգայնացումը:

...Արյան պղծումը վերջնահաշվում հանգեցնում է ժառանգական (գենետիկ-ծինաբանական) շեղումների՝ հիվանդագին երկվության, իսկ այլալեզու կրթությունը, ամբողջապես քանդում է հայեցի Լեզվամտածողությունը, որն էլ ուղղակիորեն խեղում է անձի՝ հայ անհատի բարոյահոգեբանական կերտվածքը: Իսկ ազգափոխությունը էականորեն շեղում է մարդու առաքելությունը՝ տանելով նրան հոգեպես և էապես ինքնառջնջացման, որը համարժեք է մարդու մեջ առկա Տիեզերական Հավերժական Ոգուց ինքնահրաժարումին, քանզի Տիեզերական Համակարգում՝ ՏԻԵԶԵՐԱԿԱՆՈՒՄ, Ազգը Հոգի է, Բնօրրանը՝ Մարմին, նրա Առաքելության իրականացման համար...

Անդրադառնալով հատկապես հայերենի դերին ու մշանակությանը՝ նշենք, որ պետականորեն՝ Հայերենի իրավական պաշտպանը ՀՀ Սահմանադրությունն է, ի դեմս ՀՀ նախագահի: Իսկ նպատակաուղղված Լեզվաքաղաքականություն իրականացնողը՝ ՀՀ կառավարությունն է՝ Լեզվի պետական տեսչությամբ, որն այսօր գրեթե մեկուսացված է և գրկված Լեզվապաշտպանական լիազորություններից: Ճիշտը՝ Լեզվի, կամ ավելի ընդգրկուն՝ Հայապահպանության նախարարության ստեղծումն է: Ապազգային ղեկավարների լուռ համաձայնությամբ ու հանցավոր գործունեությամբ անուղղակիորեն (արտաքին միջամտությամբ՝ նաև նպատակայնորեն) ոչնչացման է դատապարտվել Ոսկեդենիկ, Արարչածին Հայոց Լեզուն: Այսպես օտար զավթիչներն էլ են փորձել ոչնչացման դատապարտել մեր Լեզուն, քանզի Լեզվի մահը Ազգի մահն է: Իսկ իշխանությունների կողմից Հայերենը այնքան թույլ է պաշտպանվում, որ պետության Լեզուն հայտնվել է երկրորդականի կարգավիճակում՝ ռուսերենի ու անգլերենի մրցակցության (շատ հաճախ՝ բռնի ներխուժման) պայմաններում: ԵրկԼեզվության խորհրդային վտանգը վերածվել է «եռալեզվություն» կոչվող չարիքի, այս պայմաններում այն կարող է դառնալ «բազմալեզվություն», իսկ Հայերենին կմնա միայն բարևելու և կենցաղում մի կերպ գոյատևելու հեռանկար... Լեզուն վիթխարի ուժ է, որոշում է ազգերի

ճակատագիրը: Մարդկային պատմությունը վկայում է, որ կորցնելով միավորվելու, հարատևելու կռվանը՝ լեզուն, քայքայվել, ուծացել են երբեմնի հզոր պետություն ունեցող ազգերը, զրկվելով նաև իրենց առաքելությունից:

Մեր պետական այրերից շատերը, օտար կրթության իրենց կարոտաբաղձությամբ, նաև՝ իբր գիտատեխնիկական հայալեզու գրականության բացակայությունը շեշտելով, ամուր են պահում ռուսերենի դիրքերը, իսկ համակարգիչների ներմուծման պատրվակով՝ ուղղակի անփոխարինելի դարձնում անգլերենը: Այս վիճակը տարեց տարի խորանում է և նման դավադիր միտումը պետք է անհապաղ կասեցվի:

Լեզվապահպանությունը ինչպես ազգային, այնպես էլ պետական լուրջ հիմնահարց է, բայց դուրս է մնացել կարևորագույն համարվողների շարքից: Խնդիրը լուծելու համար հիմնարար, համակարգային փոփոխություն է պետք, և անհրաժեշտաբար ստեղծվելիք Հայապահպանության նախարարությունը ի թիվս այլ հիմնախնդիրների, կզբաղվի լեզապահպանության և լեզվաքաղաքականության հարցերով...

Հայոց Լեզուն, Հայոց Այբուբենը Հայ Արյամբ զրկվելով է փոխանցվել սերունդ սերունդ ու պաշտպանվել նույնիսկ գաղթի ճանապարհներին, իսկ այժմ այն բացարձակապես անպաշտպան է հատկապես հանրակրթական դպրոցներում: Ազգային պետության լեզվի շահերը օտար լեզուներին ստորադասելը հանցագործություն է, ազգադավություն: Այլալեզու դարձած «հայը» պատրաստի թեկնածու է այլ երկրների լրտեսական գործակալությունների համար, իսկ սա արդեն լուրջ և անհետաձգելի պատժամիջոցներ է ակնկալում: Եթե կա ցանկություն երեխաներին կամ յուր անձը «դարձնել» այլազգի, ապա այդ տխմարությունը կարելի է անել միայն մի պայմանով, որ պիտի փոխվի նաև տվյալ դավաճանի «հայրենիքը»՝ չվտանգելու համար մեզ և Հայության իրավունքները, Հայոց Պետականությունը: Ձեռքբերովի, անտրամաբանական, անառողջ ազատությունից հղկացած մարդու «իրավունքները» չեն կարող պարտադրվել ազգային (ներքեղային) բարոյականին ու հայրենակերտ պետական մտածողությանը: Ազգի իրավունքը միշտ վեր է լինելու անհատի իրավունքից, որն այսօր հասցվել է բառիս բուն իմաստով սանձարձակության, ընդհուպ անասնական բնազդի մակարդակի:

Կրթության և դաստիարակության լեզվի ընտրության հարցը պետության ու ազգի անվտանգությունը շոշափող խնդիր է և այն պիտի լինի հայանպաստ:

Մշակութային ներխուժման, լեզվափոխության պարագայում որևէ զենք կամ զորք անհրաժեշտ չէ Հայաստանը գրավելու, հայությանը ոչնչացնելու համար: Ազգն ու պետությունը կքայքայվեն ներսից՝ ինքնառնչազուրկ:

Հայոց Լեզուն ՀԱՅ ԳԵՆԻ ինքնաարտահայտման միջոցն է, ասել է թե հենց ԳԵՆՆ է, ուստի Մայրենիի (Հայրենիի) իմացությունը պարտադիր է բոլորի, հատկապես ղեկավար, պետական պատասխանատու այրերի համար: Սակայն, միայն թղթ օրենքներով լեզուն հնարավոր չէ պաշտպանել. անհրաժեշտ է պաշտպանել գործնականում, բոլոր ոլորտներում: Այսպիսով՝ հայոց լեզվի պաշտպանությունը մեր ազգային ինքնության ու հարատևության երաշխիքն է, եւ ամուր պետականության հիմքը, քանզի Լեզուն ԳԵՆԻ ինքնաարտահայտման միջոցն է, իսկ ԳԵՆԸ՝ հենց ԱԶԳՆ է:

Լեզվաքաղաքական առանձնահատուկ խնդիր է պատմահամեմատական ստուգաբանությունը: Լեզուն սերունդների համար պատմություն է ամբարում, և այդ հարստությունից օգտվելու համար բառի էության ընկալումը պետք է լինի ոչ միայն գիտության առարկա, այլև՝ Հայերենի ուսուցման սկզբունք: Սա մի հզոր լծակ է, որ մենք չենք գործադրել հայագիտության աղավաղումները բացահայտելու, մեր արժեքները յուրացնողներին խեղճացնելու համար: Լեզուն ներազգային հաղորդակցման դեպքում դրսևորում է ազգի երկան որակը և գործում ազգային խորհրդանիշների համակարգի ծրագրով, իսկ արտաքին՝ ազգամիջյան հաղորդակցման դեպքում՝ բառերի պայմանական համակարգից ավելին լինել չի կարող: Ազգային լեզուն ազգի ներկայացուցիչ-անհատը ժառանգում է լեզվահիշողությամբ. մայրենիի ուսուցումն էլ, ոչ այլ ինչ է, եթե ոչ, լեզվական կարողության բացահայտում՝ անցում ենթագիտակցականից գիտակցական մակարդակի: Իսկ օտար լեզուն յուրացվում է լեզվի ոչ խորքային՝ առարկայական հատկանիշի հիմքով՝ որպես ներմուծվող կարողություն:

Միայն ազգային լեզվի խորհրդանիշների, զգացողության միջոցով է ազգը կապ հաստատում իր ծագման, իր էության, իր բնօրրանի հետ: Հայերենը զրկվելով ոգուց, դարձնելով լոկ հաղորդակցման միջոց՝ հնարավորություն ենք տվել օտար լեզուներին խցկվել մեր մայրենիի կենսոլորտ ու մրցակցել նրա հետ: Լեզվի խորհրդանիշների որակագրկման ակնբախ օրինակ է Արարատ գաղափարագիրը: Այսօր մեր լեզվում Արարատ-ի իմաստը երկատված է. ի՞նչ ենք հասկանում Արարատ ասելով՝ և՛ Մասիս լեռը, և՛ Հայկական լեռնաշխարհը: Որպեսզի վերաիմաստավորենք լեզվի այս խորհրդանիշը, պետք է բառարմատի վերլուծություն կատարվի՝ վեր կանգնելով լեզվաբանության մեջ արդեն արմատավորված կեղծ կաղապարներից:

Ար-ը, մեր կարծիքով, արտահայտում է Աստվածային ծագման, սերման, զորության իմաստ: Հայերենում արմատի կրկնությամբ բառը ստանում է բացարձակի, անհամեմատելի արժեք: Ար-ար կրկնավոր արմատը արարչագործության համակարգի տարր է՝ արարչագործության բաղադրիչներից մեկը. Արար-իչ, արար-ել, արար-ած, արար-ատ: Արարատ-ը խորհրդանշում է արարման տեղը: Մենք դադարել ենք հիշել, որ Արարիչը արարել է Արի ցեղը Արարատում: «Արարատ» խորհրդանիշը բովանդակագրկվել, դարձել է սոսկ լեռան անուն միտումնավոր՝ մեզ՝ հայերիս կամայական ծագում վերագրելու նպատակով:

Օտարներն իրենց ինքնահաստատման ճանապարհին խեղաթյուրում են մեր պատմությունը, իսկ մենք ո՛չ միայն չենք ընդդիմանում, այլև հետևում ենք նրանց օրինակին՝ արժեզրկում ենք լեզուն անփույթ վարվելով բառիմաստի հետ:

Հայի սուրբ պարտականությունն է նախևառաջ ուսում ստանալ, կրթվել հայերենով, մտածել ու խոսել հայերեն, արարել հայերեն: Ահա՛, այս դեպքում երկփեղկվելու վտանգ չկա, և մյուս լեզուների իմացությունը դառնում է պարզապես հոգևոր հարստություն, իսկ ազգային նկարագիր ունեցող, բանիմաց մարդն ինքնին արժեք է: Միայն այս սկզբունքով հանրակրթություն իրականացնելով պաշտպանված կլինենք ինչպես ներքին, այնպես էլ արտաքին թշնամուց, իսկ Ազգն ու Հայրենիքը կստանան ապահովության լուրջ երաշխիքներ: **ԲԱՐՈՅԱՅՈՒԹԵՐԱՆԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ**

Առաջնորդվելով Համառոտագրական օրենքներով և ներդաշնակվելով Բնությանը՝ Հայերը ստեղծել են ուժի և արդարության վրա հիմնված հաստատուն բարոյահոգեբանական սկզբունքներ ու մտածելակերպ: Սակայն, հեռանալով արմատներից, կորցնելով ռազմատենչ և ազատատենչ բնաներդաշնակ Ոգին, շրջանցելով Հայկրիական ներցեղային օրենքներն ու բարոյականությունը, զրկվելով հզոր Հայրենիք-Բնօրրանից՝ դարերի ընթացքում ձևախեղվել և աղճատվել է Հայ Ազգի բարոյականությունը, հոգեբանությունը, մտածելակերպը:

Տարբեր ժամանակաշրջաններում զավթիչները բռնացել են Հայ Ազգի կամքի ազատ դրսևորման վրա, անտեսել Հայի և օտարի ազգային առանձնահատկությունները, ավանդույթներն ու զարգացման տարբեր մակարդակները: Բոլորին հավասարապես, անխտիր պարտադրվել է սահմանափակ, ինչպես նաև ապագային և օտարասիրական մտածելակերպ, վախի, ստրկամտության, էսամոլության բութ ու խավարամիտ հոգեբանություն, նաև պարբերաբար բռնադատվել են Հայ Ազգի բարոյական հասկացություններն ու սրբությունները...

Բոլոր զավթիչ բռնակալները ձգտել են Հայ Ազգի ծուլմանը, վերածմանը գորշ ու անդեմ զանգվածի, նրանք դարեր շարունակ, հետևողականորեն փորձել են ձևավորել բռնապետությունների ոգուն հարագատ նոր բարոյականություն, հոգեբանություն ու մտածելակերպ, որոնք թույլ կտային հեշտությամբ իրագործել հարմարվող ժողովուրդ-զանգվածի ձևավորումը: Դա մասամբ հաջողվեց, և Հայ Ազգի մեջ դարերի ընթացքում կազմավորվեց ամբոխին բնորոշ վարքուբարքով մի խառնամբոխ (ցեղապիղծ զանգված): Բարոյագրկվեց մարդկային մի հսկայական զանգված, և բարոյահոգեբանական անկումը աստիճանաբար դարձավ նրանց կենսակերպի կողմնորոշիչը...

Այս իրականության մեջ առաջացավ մեծագույն վտանգ՝ Հայ Ազգի կործանման, ծուլման հեռանկարով: Եվ առանց ազգային անկախ պետականության վտանգվեց Հայ Ցեղի Գեների գոյատևումը: Ցեղապղծությունը, ազգադավությունը ու հայրենալքությունը հասան այնպիսի չափերի, որ մոռացվեցին Արյան մաքրություն և Հայրենի Հող հասկացությունները...

Հայերի ազգային և բարոյական նկարագիրն ու հոգևոր կերտվածքը խեղաթյուրվեց ու խարխվեց ձեռքբերովի արատներից, գեներտիկ փոփոխություններ կրեց, բարոյագրկվեց և արմատավորվեց Հայ ժողովուրդ (*տես Հայ ժողովուրդ բաժինը) կոչվող զանգվածի մեջ...

Բարոյագրկումն ու հոգևոր ստրկացումը խիստ վտանգավոր փուլ է, որին հետևում է ազգի մարմնական անհետացումը, և միայն նախնիներից փոխանցված ողջախոհությունն ու անկոտրում կամքը հնարավորություն ընձեռեցին Հայ Ազգին իր մեջ ուժ գտնելու, ազատվելու շուրջ բոլորը պատած գորշությունից, ձգտելու ազատության, անկախության և՛ ազգային պետականություն վերականգնել...

Հայ Ազգի բարոյական նկարագիրը վերագտնելու հիմնական ոլորտը՝ կրթական ազգային համակարգը՝ ազգային դպրոցն է: Ազգային դպրոցը պետք է լինի անվճար, պարտադիր ու պետք է ծառայի մեր սերունդների Հայեցի կրթությանը, Հայոց լեզվի իմացությանը, ձևավորի Հայեցի մտածողության, էության, ազգային ավանդույթների ու սովորույթների, բարոյական նկարագրի, հոգևոր կերտվածքի հիմքով ամրապնդի հայրենասիրական-հայրենապաշտական գաղափարներ:

Հայոց ազգային դպրոցը մեր նորահաս սերնդի էությունից պետք է դուրս մղի օտար բարքերը, բարոյականությունը, հոգեբանությունն ու մտածելակերպը: Այդ պատճառով առաջնային է դառնում ազգային, բարոյահոգեբանական, ավանդական ու մշակութային արժեքների, պատմական հուշարձանների և այլ հարստությունների վերաարժեքավորման, վերահաստատման ու վերականգնման գործը:

Ազգի բարոյահոգեբանական կերտվածքը, վստահ ու համարձակ մտածելակերպը հավասարակշիռ պահելու նախապայմաններից է՝ անվճար ու պարտադիր մարմնամարզական կրթությունը՝ «առողջ մարմնում՝ առողջ հոգի» գաղափարն իրականացնելու, Հայ Ցեղի ինքնատիպ Հոգեմարմնական գծերն անթերի ու համակարգված վերականգնելու համար...

Հայոց ազգային դպրոցը պետք է ապահովի Հայ Ազգի դարձը դեպի իր Ակունքները, արթնացնի Հայ Ցեղի Գենը և ամրագրի Ամբողջական Հայաստանի վերատիրման ու Հայկականության (նաև Համաարիականության) գաղափարները:

Միայն այս պայմաններում կվերականգնվի Հայ Ազգի բարոյահոգեբանական նկարագիրն ու կերտվածքը, որը կդառնա Հայի Առաքելության իրականացման նախապայման...

ԴԱՏԱԻՐԱՎԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Առաջնորդվելով Տիեզերական օրինաչափություններով և բնությանը համահունչ Հայկրիական ներցեղային օրենքներով ու բարոյականությամբ՝ մեր նախնիները ստեղծել են ցանկացած միջավայրում և հարաբերություններում ներդաշնակ գործող օրենքներ՝ ՏԻԵԶԵՐԱՎԱՐԳ, որը ձևավորել է ուժի և արդարության վրա հիմնված Արիական-Ցեղապաշտական (Հայկական-Ցեղապահպանական) ապրելակերպը...

ՏԻԵԶԵՐԱՎԱՐԳ-ը ներառել է անհատի և հանրության կյանքի, գործունեության բոլոր ոլորտները՝ նշելով դրանց դերն ու նշանակությունը, չչեղվելով «Երկնային Սրբազան Իշխանության (հիերարխիայի) կարգից», որն ինչպես հետագայում նշվել է հին ազգերի վիպերգերում, ավանդազրույցներում, առասպելներում... «Արքայական իշխանությունն իջեցված է երկնքից, իսկ արքաները՝ նշանակված Աստվածների կողմից...»: Ամեն ոք՝ բարձրից ցածր և մեծից փոքր, ունեցել է իրեն ամրագրված համապատասխան իրավունքներն ու պարտականությունները, և առավել իրավունքների արժանացած օրինաչափորեն ավելի շատ պարտականություններ է ունեցել: Իսկ ներցեղային օրենքների և բարոյական սկզբունքների առաջ անխտիր հավասար են եղել բոլորը...

Հին Հայերը, ապավինելով Տիեզերական Սրբազան Իշխանության կարգին և դարերի փորձությամբ թրծված նախնյաց իմաստությանը, շարունակել են առաջնորդվել ներցեղային օրենքներով ու բարոյականությամբ, ինչպես նաև՝ ավանդական կացութաձևով...

Բազմաթիվ իրավաբանական հասկացություններ սերնդե սերունդ փոխանցվել են բանավոր և ժամանակի ընթացքում ենթարկվել են խեղաթյուրումների այդ պատճառով դեռևս լրացուցիչ ուսումնասիրության կարիք կա: Ամենահին պատմական աղբյուրները հավաստում են, որ ավանդական օրենքները նույնիսկ փոքր շեղումների ենթարկվում են հազարամյակների ընթացքում՝ հաճախ գործելով «ընդհատակում»՝ չգրված օրենքների ձևով: Ուրեմն ներկայումս պատմականորեն ամենահինը համարվող դատաիրավական օրենքները կարող են մարդկությանը իրականությունից հետ տանել նույնիսկ մի քանի տասնյակ հազարամյակ...

Պատմությանը հայտնի հնագույն Հայկական պետությունները (...Արատտա, Կուտիական և Նաիրյան «երկրների» դաշինքներ, Հայասա, Ռիրարտու, Բիայնա (Այրարատ), Մեծ և Փոքր Հայքեր, Կիլիկյան Հայաստան և այլն) կամ պետական կազմավորումները շարունակաբար ունեցել են ոչ միայն իրենց պետական կարգը, դատաիրավական օրենքները, այլև՝ իրավաբանական հասկացությունները և, անկախ պետականության ձևից (...Աստվածապետական կամ աշխարհիկ միապետություն, ժառանգական կամ ընտրովի արքաների թագավորություն, իշխանապետություն, մարզպետություն, կյուրապաղատություն, մելիքություն և այլն), պահպանել են Երկնային Սրբազան Իշխանության կարգը:

...Աստվածապետական միապետություններում հոգևոր ու աշխարհիկ իշխանությունը կենտրոնացված էր քուրմ-արքայի ձեռքում: Եվ հոգևոր առաջնորդին էր պատկանում Գերագույն Իշխանությունը, նա ճանաչվում էր որպես Աստծուց նշանակված գերագույն քուրմ («Աստծո փոխարքա», «քրմապետ», «կենդանի Աստված», «Աստծո փոխանորդ» և այլն), որը «Աստծո կամքը» կատարողն էր: Պետական բոլոր գործերով զբաղվում էին հոգևորականները, իսկ կառավարման բարձրագույն մարմինը Ավագների ժողովն էր, որում նախագահում էր արքան և ուներ վճռորոշ ձայնի իրավունք: Ավագների ժողովը լուծում էր արտաքին քաղաքականության, ռազմական ղեկավարման և ռազմավարական նշանակության այլ հարցեր: Մշտական հսկողություն էր սահմանված հասարակական կյանքում, և տարբեր բնագավառներում կային համայնական, տոհմացեղային, առևտրային, անտեսական (մասնավոր սեփականատիրական), հարկային, հողի, ջրային (ջրանցքաշինության), տաճարաշինության ու պետությունը ամրապնդող այլ իրավաբանական սահմանումներ: Ավագների ժողովին զուգահեռ գործել են նաև ժողովրդական ժողովները, որոնք ընտրում էին իշխանավորներին և այդ ընտրությունները համարվում էին Աստծո կամքը («Ձայն բազմաց՝ ձայն Աստծո»)...

Աշխարհիկ միապետություններում արքան հոգևոր բարձրագույն պաշտոնյա (գերագույն քուրմ, քրմապետ, կաթողիկոս...) չէր և հստակորեն սահմանազատված էին արքայի և հոգևոր առաջնորդի իրավասությունները: Նման պետությունը ղեկավարվում էր Հայոց արքունիքի, նրան առընթեր Գերագույն ատյանի (դիվանի), բարձրագույն վարչական մարմինների և գործակալությունների (սպարապետություն, մաղխագություն, մեծ դատավարություն...) միջոցով և անխախտ գործում էին ավանդական օրենքներն ու բարոյահոգեբանական սկզբունքները: Ավագների և ժողովրդական ժողովների նմանությամբ գործում էին Աշխարհաժողովները, Իշխանաց ժողովները, ինչպես նաև՝ քաղաքային ինքնավարությունները (տեղական ինքնակառավարում)...

Կիրառվել է նաև արքաների ընտրության ձևը, որն ունեցել է հստակ ընտրակարգ, թագավորելու որոշակի ժամանակահատված և սահմանված իրավունքներ: Նման ձևը անառարկելիորեն արդարացրել է հատկապես Կուտիական շրջանում՝ բարեպաշտ արքաների աշխարհակալության ընթացքում...

Յուրօրինակ կառավարում և օրենքներ են կիրառվել Նաիրյան «երկրների» դաշինքների ժամանակաշրջանում, երբ գործում էր հոգևոր համադաշնությունը: Պատերազմների ընթացքում իշխաններից մեկն ընտրվում էր ընդհանուր ղեկավար, կենտրոնացվում էին բոլոր կարողություններն ու գործողությունները, իսկ հաղթական ավարտից հետո բոլոր «երկրների» իշխանները շարունակում

էին անփոփոխ պահել իրենց կարգավիճակը, «երկրի» տարածքը, առանձնահատկություններն ու օրենքները...

Իրավաբանական և բարոյահոգեբանական սկզբունքները փոխվել են ըստ պետական կառուցվածքի, կախված՝ պարզ կամ բարդ (համադաշնային), միատարր կամ բազմատարր լինելու հանգամանքից, որն էլ իր կնիքն է դրել փոխադարձ հարաբերությունների սահմանման ու կարգավորման մեջ: Ըստ իրավունքի պատմության բազմաթիվ մեկնաբանների՝ Հայ իրավունքը նաև Արիական է (իսկ ավելի ընդարձակ իմաստով՝ Հայ Արիական), և հետագայում Հայ Ցեղի ազգայնացմամբ (մասնատմամբ՝ ազգերի, ազգակիցների) ստացել է հստակ ազգային բնույթ, պահպանելով ՀայԱրիական սկզբնաղբյուրի հիմնական գծերը: Իրավունքի սկզբնական և ամենահին աղբյուրը սովորույթն է՝ սովորութեան իրավունքը, և ՀայԱրիական իրավաբանական սահմանումները բխում են իրավունքի հենց այդ ակունքից: Այժմ օրենքները «ստեղծում» են «շահագրգռված» մարդիկ, և իրենք էլ վճռում են ամեն բան, նրանց «օրինական» անօրինակություններին հիմնականում հակադրվում է բազմադարյա սովորույթը, որն արդեն ամրագրված է մեր Գեների մեջ և ներհայեցողությամբ ինքնաբերաբար ուղղորդում ու կարգավորում է մարդու ինքնագիտակցությունը, գործունեությունը...

Դարերի ընթացքում, սերնդե սերունդ մեզ են հասել բազմաթիվ օրենքների ժողովածուներ, դատաստանագրքեր, մատենագրական և վիճակագրական վկայություններ, հնագիտական և ազգագրական նյութեր, ինչպես նաև «իրավաբանական պատումներ»՝ բանահյուսության առասպելների (արժեքավոր է հատկապես «Սասնա Փռերը»), հեքիաթների, հայրենիքների, ժողովրդական խաղիկների, առած-ասացվածքների, առակների, աշուղա-գուսանական երգերի... միջոցով, որոնք մանրակրկիտ ուսումնասիրվել են, կազմվել (հաճախ անթույլատրելիորեն հիմնվելով նաև այլ աղբյուրների վրա կամ հարմարեցվել են տիրող բռնակալներին ու զավթիչներին) և շարունակաբար լրացվել ու ձևավորել են Հայ դատաիրավական միտքը:

Հայ իրավունքի որոշ մեկնաբաններ նշում են, որ Հայկական իրավունքն անցել է երկու հիմնական փուլ՝ Հայրիշխանության և Մայրիշխանության, սակայն դա այդպես չէ, և Հայերի ծագումն ու զարգացումը, նույնիսկ՝ երկրի անվանումը (Հարք, Հայրերի երկիր) հերքում են դա՝ չբացառելով իհարկե, մասնակի դրսևորումները, որոնք ձեռքբերովի են ու բնականորեն մերժելի: Բոլոր դեպքերում էլ հստակորեն և անառարկելիորեն իրականացվել են ինչպես իրավունքները, այնպես էլ պարտականությունները, և կատարվել է հսկայական անցում՝ ընդհուպ անեծքից (որում ընդգրկված էին նաև քրեա-իրավական հասկացություններ), մինչև կանոնակարգված օրենքների ու իրավաբանական սահմանումների կիրառումը...

Բոլոր ժամանակներում առանձնապես կարևորվել է ընտանեկան, ամուսնա-ընտանեկան իրավունքը, որի սահմանած ձևը միակնությունն է եղել (իհարկե, այստեղ էլ մասնակիորեն կիրառվել է նաև բազմակնությունը, որը Հայրենիքից դուրս գտնվելու ու նաև՝ օտար ազդեցության հետևանք է): Այդ իրավունքի կիրառումը սերնդատվության շարունակելիության նախապայմանն է եղել: Ամուսնա-ընտանեկան իրավունքը սահմանել է ընտանիք, ընտանիքի կազմ, ընտանիքի գործելակարգ... հասկացությունները, մեկնաբանել և կարգավորել է ամուսինների անձնական և գույքային, ինչպես նաև՝ ծնողների և զավակների փոխհարաբերությունները, ամուսնության դադարեցումը, նշանադրության և պսակադրության (աղջկատես, աղջիկ ուզել՝ խնամախոսություն և այլն) կարգը, ամուսնական չափահասության, արյունակցական և խնամիական չհասության... սահմանումները: Ընտանիքի ստեղծումը և պահպանումը պետական և ազգային ամենօրյա խնդիր է, և օրենքները պետք է մշտապես աջակցեն, (ինչպես իրավական, այնպես էլ սոցիալական առումով) և օժանդակեն ընտանիքի ամուր, համերաշխ և բազմանդամ լինելուն (նահապետական ընտանիքների՝ զերդաստանների վերականգնում): Հատուկ ուշադրության է արժանի նաև կնոջ իրավունքը, այն պետք է հոգատարություն ցուցաբերի և պաշտպանի Հայ կնոջը, մորը: Սա մշտապես ամրագրված է եղել ՀայԱրիական ներցեղային օրենքների մեջ և հետագայում կնոջ ստրկական վիճակը (ինչպես նաև կռապաշտության և այլ մոլությունների առաջացումը) այդ օրենքներից հիմնավորապես շեղվելու հետևանք էր: Ընտանիքի մեծ մոր ունեցած իրավունքները «զիջել են» միայն մեծ հոր ունեցած իրավունքներին և հստակորեն ստորաբաժանված են եղել հայրական ու մայրական «իրավական տիրույթները», որոնք հնարավորություն են ընձեռել ընտանիքի ներդաշնակ և օրինաչափ զարգացման համար: Հայ իրավունքի շատ ուսումնասիրողներ, այդ թվում՝ նաև օտարերկրյա, զարմացել են Հայ կնոջ ունեցած ազատություններից և իրավունքներից, որն անառարկելիորեն տարբերվում է այսպես կոչված «ասիական» (նաև վերջերս ընդունված՝ արևմտյան) իրավական սահմանումներից...

Վերջին հարյուրամյակներում, հատկապես երբ չունեինք պետականություն, ինչպես նաև նաև պետականություն ունեցած ժամանակ, Հայկական իրավունքը ներխուժման է ենթարկվել (Մովսիսական օրենքներ, ասուրա-հռոմեական, հունա-բյուզանդական իրավունքներ և այլ քաղվածական ձեռնարկներ, օրենսդրական մատյաններ...), որոնք խորապես ազդել և ձևափոխել են մեր ավանդական, ազգային-հոգևոր կերտվածքին բնորոշ «դատաիրավական դաշտը»: Այնուամենայնիվ, ստեղծված օրենսգրքերը («Կանոնագիրք Հայոց» և մի քանի դատաստանագրքեր) ներառել են որոշակի ավանդական իրավաբանական սահմանումներ, որոնք կիրառվել են նաև սփյուռքի բազմաթիվ համայնքների կողմից և նպաստել համայնքներում սեփական ազգային օրենսգրքերի (Հնդկաստանի, Լվովի, Աստրախանի...) ստեղծմանը: Իրավունքի պատմության հայ և օտարերկրացի բազմաթիվ մասնագետներ լրջորեն ուսումնասիրել են մեր հին (նաև՝ գաղթօջախների) օրենքները և հավաստել դրանց ինքնատիպությունը (օտարերկրյա ուսումնասիրություններից՝ «Հայ

իրավունքի պատմության ուրվագծերը», «Հայերի իրավունքը», «Հայ իրավունքի օրենքները», «Հայկական օրենքները»... աշխատությունները) և արժեքավոր լինելը: Սակայն, վերջին դարերի օրենսգրքերը ակնհայտորեն կրել են եկեղեցու ազդեցությունը՝ փորձելով ծառայել կղերականությանը, հոգևորական դասի շահերի ամրապնդմանը: Ազգային եկեղեցական, արտաքին տեղական և տիեզերական հոգևոր ժողովներն իրենց հերթին սահմանում էին կանոններ, ստեղծում սահմանումների կարգեր՝ ունեցած իրավասություններն ու քաղաքական ազդեցության կռվաններն ամրացնելու, տիրող կարգի շահերն ապահովելու նպատակով, և շատ բաներ ուղղակի փոխառվում էին հեթանոսությունից (թեև անողորմաբար ավերվեցին նախաքրիստոնեական կառույցներ և ոչնչացվեցին առեւտրի պատմական ու գիտական արժեքներ): Այնուամենայնիվ, չունենալով պետականություն, Հայ Ազգը Հայրենիքում և նրանից դուրս գործածելով այդ ոչ ամբողջական դատաստանագրքերը, այնտեղ սահմանված իրավաբանական հասկացությունները, (պետական և վարչական, քաղաքացիական, ամուսնա-ընտանեական, հողի, ջրային, սեփականատիրական, պարտավորական (առքովաձառք, փոխառություն-փոխատվություն, վարձակալություն, պահատվություն և այլն), ժառանգական, քրեական (հանցագործության տեսակներ, պատժի տեսակներ և այլն), դատական և դատավարական, զինվորական (սպարապետություն, թագակապ ասպետություն, մարդպետություն և այլն)...) իրավունքները), պահպանեց և զարգացրեց Հայ իրավաքաղաքական միտքը (հասարակական-քաղաքական հայացքները), ազգային ավանդույթներն ու սովորույթները՝ հաճախ օրենքներին զուգակցելով նաև Գեների անջնջելի հիշողությունը...

Վերջին տասնամյակներում ընդհանրապես զրկված լինելով Ազգային ամբողջական օրենսգրքից՝ ՀՀ-ում փաստորեն ընթանում է նոր «դատաիրավական դաշտի» ձևավորման աշխատանքը, և անհրաժեշտ է, որ այն միանգամից հիմնվի բացարձակապես ազգային ավանդույթների ու սովորույթների, բարոյահոգեբանական և ազգային-հոգևոր կերտվածքի, ավանդական օրենսգրքերի և գեներտիկ հիշողության վրա, որը նաև կարտացոլվի քրեական, վարչական, քաղաքացիական... օրենքների և Հայոց Սահմանադրության (*տես քաղաքական բնագավառի Սահմանադրության վերաբերյալ մասը) մեջ: Հայկական իրավունքը պետք է վերադառնա իր՝ ուժ և արդարություն տվող Ակունքներին և նպաստի Հայ Ազգի ու Հայաստանի իրավական պաշտպանվածության ամրապնդմանը, հետագա հզորացմանը...

ԳԻՏՈՒԹՅԱՆ, ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԲՆԱԳԱՎԱՌ

Մեր բազմափորձ և իմաստուն նախնիները, ճանաչելով Համատիեզերական օրինաչափություններն ու իրականությունը, կատարելապես տիրապետելով տարածության և ժամանակի մեջ մտովի տեղաշարժվելու սկզբունքներին, ծանոթ են եղել բոլոր գիտություններին և այն առավելագույնս օգտագործելով, պարբերաբար ստեղծել են զարգացած քաղաքակրթություններ, որոնց հետքերը հայտնաբերվում են գիտական շարունակական պեղումների ժամանակ...

Գիտական այդ հզոր ունակությունները նպաստել են Հայկական (նաև՝ Հայկիրական) անկրկնելի և առանձնահատուկ մշակութային արժեքների ստեղծմանը, որոնք այսօր էլ պարտրված են գերբնական ու անբացատրելի բազմաթիվ պաշարումներով...

Մեր տիզերաճանաչ նախնիների հզոր Գիտական Մտքի (մասնավորապես՝ տիեզերագիտության և աստղագիտության, բնագիտության և մարդաբանության, ճարտարապետության և թվաբանության... որոնք օրինաչափորեն նպաստում էին ճշգրիտ հաշվարկի և կողմնորոշման, շինարարության և տնտեսավարության... ինչպես նաև՝ դաստիարակության և ինքնապաշտպանության,

կենցաղավարության և ամենազանազան փոխհարաբերությունների... կազմակերպմանը) մի չնչին մասին ենք մենք այժմ հասու, պատճառները Արմատներից և Ակունքներից կտրվելու ու չսնվելու են, որոնցից բխած անորոշության մեջ, մեր գիտակցությունը լույսի փոխարեն մեզ ուղղորդել է դեպի խավարը, որտեղից և այժմ խարխափելով փորձում ենք դուրս գալ...

Դրա համար մեծ տեղ պիտի հատկացնել հայագիտությանը: Պետք է դադարեցնել օտարի ձեռքով Հայոց Պատմության աղավաղումը և այն պիտի վերաշարադրեն ՏԻԵԶԵՐԱԿԱՐԳ-ն ընկալող Հայորդիները:

Մեր պապերի ու հայրերի ստեղծածն օգտագործելու, ավելացնելու և կատարելագործելու փոխարեն, մենք այն սերնդե սերունդ, հաջորդաբար ավերել ենք, հաճախ՝ հիմնահատակ իբրև ստեղծելով ավելի կատարյալը, նորը՝ մերը: Այսպես, աստիճանաբար կտրվելով անցյալից, մեր Գեների մեջ նրիտել է գիտությունների իմացությունը, որը խոչնդոտել կամ արգելակել է նաև ինքնատիպ մշակույթի զարգացումը...

Հեռանալով Հայոց Արմատներից և ենթարկվելով զավթիչների ավերիչ ոտնձգություններին՝ Հայ Ազգը, հատկապես վերջին հարյուրամյակներում, հիմնականում զրկված է եղել իր Հայրենիքում ուսանելու, արարելու հնարավորությունից, և մեր հնագույն գիտություններն ու մշակույթը մոռացության են մատնվել ու ավերվել, կամ ծառայել օտարին: Այդ ընթացքում գիտություններն ու մշակույթը զարգացել են այնքան, որքան անհրաժեշտ է եղել տիրող բռնակալներին, որպեսզի դրանք ծառայեցնեն բռնատիրության ամրապնդմանը, գոյատևմանը...

Հայ Ազգի մշակույթը դարերի ընթացքում պարբերաբար ենթարկվել է կեղծման, զավթիչների կողմից սեփականացվել են մեր ազգային արժեքներն ու հարստությունները: Ազգահալած քաղաքականության

հետևանքով թեև սառել է Ազգի Գիտական Միտքը, այնուամենայնիվ, Հայ Ազգը տարբեր երկրներում և բոլոր ժամանակաշրջաններում ծնել է աշխարհահռչակ գիտնականներ և արվեստի, մշակույթի խոշորագույն գործիչներ՝ անընդհատ ցուցադրելով իր բնատուր և բեղմնավոր կարողությունները...

Սակայն, աշխարհասփյուռ Հայության կողմից գիտություններն ու մշակույթը սեփական Ազգին ու Հայրենիքին ծառայեցնելու յուրաքանչյուր փորձ հալածվել է այլազգիների (նաև՝ այլասերների) կողմից, ավելին՝ բռնապետությունների և հզոր պետությունների ճիրանները պոկել ու սեփականացրել են Հայ Ազգի երիտասարդ ու խոստումնալից տաղանդներին (դժբախտաբար նաև հանճարներին), նրանց միտքն ու ունակությունները խոչնդոտելով Հայ Ազգի առաջընթացին...

Եվ մեր կրթական քաղաքականության նպատակը տվյալ պետությանը պիտանի քաղաքացիների ձևավորումն է: Ներկայումս կրթության ոլորտում ճնշումներն անցել են բոլոր սահմանները: Քարոզում են, կազմակերպում օտարալեզու, երկլեզու, բազմալեզու կրթություն՝ որպես լեզուներ սովորելու եղանակ՝ միտումնավոր նույնացնելով տարբեր նպատակներ ունեցող, տարբեր խնդիրներ լուծող հասկացությունները:

Օտարալեզու, երկլեզու, բազմալեզու կրթությունը, օտարալեզու կամ երկլեզու դպրոցները, օտար լեզուներ ուսուցանող մանկապարտեզներն իրենց գործունեությամբ աղավաղում է անհատի լեզվամտածողությունը, ազգային նկարագիրը, իսկ հոգեբանական, տարիքային չափանիշները պահպանելով, մայրենիի (ճիշտը՝ հայրենիի) հիմքով օտար լեզուների ուսուցումը զարգացնում է անհատի մտածելակերպը, ապահովում աշխարհաճանաչողության ավելի բարձր մակարդակ: Օտարալեզու դպրոցների հարցի կարգավորումը պիտի իրականացնի կրթության և գիտության նախարարությունը, որն այսօր չի նախատեսում՝ համառորեն շարունակում է հայ երեխաների ռուսացումը, ամերիկանացումը և այլն: Հայերենի բարձրագույն խորհուրդը կրթության և գիտության նախարարության հետ պետք է դիմագրավեն երկլեզու դպրոցների ծավալմանը և բացառեն ուսուցման այդ եղանակը:

Լեզվակրթական քաղաքականության խեղաթյուրման լծակ է նույնիսկ ազգային փոքրամասնությունների կրթության խնդիրը: Օրենսդրորեն նրանց կրթության հարցը չպետք է կարգավորվի հայերենի թուլացման հաշվին: Օտարախոս հայերը կամ այլազգիները կազմելով տարբեր «համայնքներ», միանում, Հայաստան պետությունից այլալեզու կրթություն են պահանջում, որն անթույլատրելի է և պետք է դիտվի հակահայկական դրսևորում: Ընդամենը 3% այլազգի բնակչություն ունեցող մեր երկիրը օտարակիրք քաղաքացիների, ազգային փոքրամասնությունների հետ տարվող սխալ քաղաքականության և օրենքի խախտումների թողտվության հետևանքով զանգվածային օտարախոսության, օտարակրթության խիստ վտանգավոր խնդիր ունի, որն աստիճանաբար բարդանում է կրթահամակարգը քայքայող մի նոր եղանակով՝ դասագրքային՝ դասագրքերի լեզվական և բովանդակային խաթարումների միջոցով մտածողության խառնաշփոթի ստեղծմամբ: Լեզվատրամաբանական, բովանդակային փորձաքննություն չանցնող դասագրքերը մեր երեխաների, մեր ապագայի համար սարքված ծուղակի մի դրվագն են միայն:

Այս աղետը կանխելու, վերաազգայնացման գործընթաց ապահովելու համար անհրաժեշտ է խեղաթյուրումների վերացում՝ լեզվական, կրթական քաղաքականության հայրենապահական, հայապահական գործընթաց, որի համար հարկ է՝

- ա) լեզվաքաղաքական, կրթական, հայրենագիտական կառույցներն աշխատեցնել ազգային անվտանգության պետական պատվերով,
- բ) կադրային քաղաքականության պարտադիր տարր դարձնել պետության լեզվի լիարժեք իմացությունը,
- գ) հանրակրթությունը մաքրել ապազգայնացնող գործոններից, այն է՝ բացառել օտարալեզու, երկլեզու, բազմալեզու կրթությունը,
- դ) առկա զանգվածային օտարախոսության հետևանքները վերացնելու նպատակով կազմակերպել պետական լեզվի ուսուցման և իմացության ստուգման, հավաստագրման կենտրոն,

ե) մշակել կրթահամակարգում օտար լեզուների ուսուցման բարե-լավված, արդյունավետ ծրագիր՝ բացառելով որևէ օտար լեզվի զանգվածային գերակայությունը, օտար լեզուների ուսուցման շեմ սահմանել միջին դպրոցի առաջին տարին՝ 5-րդ դասարանը,

զ) սահմանել ազգային փոքրամասնությունների համայնքների կազմավորման, գրանցման և գործունեության կարգ՝ ազգային պատկանելության սկզբունքով, պետական լեզվի պարտադիր իմացության պահանջով:

Լուրջ և մտահոգիչ է նաև ՋԼՄ-ների միջոցով Հայերենի աղավաղման հարցը, մամուլի էջերում ու եթերից դուրս է մղվում Հայերեն խոսքն ու մտածողությունը: Այս խնդիրը շուտափույթ կարգավորման կարիք ունի:

Բռնապետությունները, խավարամիտ ազգերը միշտ էլ սարսափել են առաջադեմ մշակույթից և ազգերի մտավոր, կրթական զարգացումից, քանզի լույսի ճառագույնը խավարի մահն է: Բուժամիջոցը մեկն է՝ պետության ազգայնականացում՝ հայկականացում:

Հայ Ազգի Գիտական և Կրթական Միտքն ու Հինավուրց Մշակույթը կրկին կարող են զարգանալ միայն ազատ, անկախ, ամուր ազգային պետականության հաստատման և Հայ Ազգի համախմբման պայմաններում, քանզի միայն այդպես է հնարավոր արթնացնել հավաքական պատմական հիշողությունը՝ առաջացնելով Գիտական Մտքի և Հոգևոր Զարթոնքի մեծ պայթյուն, և այդուհետ

սեփական գիտական, կրթական ու մշակութային արժեքները ծառայեցնել Հայ Ազգի և Հայաստանի շահերին, բարգավաճմանն ու հարատևմանը...

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲՆԱԳԱԿԱՌ

ՀՀ-ն Հայերի Բնօրրանի մի չնչին մասն է, որն իր փոքր տարածքով ու թույլ տնտեսությամբ հայտնվել է աշխարհի ուժեղների ընկերակցությունից դուրս, իսկ քաղաքական, տնտեսական, մշակութային առումով՝ ոչ նպաստավոր պայմաններում: Այս իրականության մեջ Հայ Ազգը, որպես Արարչաստեղծ Հայ Ցեղի մի մասնիկ և Գեների կրող, փորձում է վերագտնել իր հիմնական Արարչատուր տեղը Արեգակի և Արարատի հովանու ներքո: Եվ այդ գործընթացի մեջ, միջազգային ու ներազգային խրթին և բազմաբնույթ քաղաքականության խաչմերուկում տեղի է ունենում հզոր պետությունների քաղաքական-տնտեսական, կրոնական-գաղափարախոսական, հոգևոր-մշակութային շահերի բախում, որն ընթանում է Երկրագնդի աշխարհաքաղաքական քարտեզի հերթական վերածանան համար...

Այս հանգամանքներում ծագել է անհրաժեշտություն վերհիշելու մեր անցած, ճշտելու ներկա և հստակեցնելու ապագա ուղիներն ու նպատակները և ըստ այդմ էլ կառուցելու և վարելու հստակ ու վստահ, միահյուսված արտաքին ու ներքին քաղաքականություն:

Հայաստանի իշխանություններն ամեն կերպ պետք է ձգտեն հզոր պետությունների հետ վարել ճկուն, երկկողմանի շահավետ քաղաքականություն՝ ստեղծելով անկախ քաղաքական, տնտեսական, մշակութային, արտաքին ու ներքին քաղաքականությամբ առաջնորդվելու հնարավորություն: Այլապես, դառնալով որևէ հզոր պետության կամ համաշխարհային ապագային ինչ-որ խմբավորման կցորդ, շարունակելու ենք լողալ մեր ստեղծած անհաջողությունների ծովում, մինչև ուժերի վերջնական սպառումը...

Այսօր ուժն է ծնունդ իրավունք. և հզոր Հայաստանի ու Հայ Ազգի ստեղծումը մեր բոլոր սերունդների ամենաառաջնային խնդիրն ու սուրբ պարտականությունն է:

Հայոց Ազգային Պետությունը Պատմական Հայաստանի ամբողջ տարածքի, պատմության ընթացքում ստեղծված բոլոր պետական կազմավորումների միակ իրավաժառանգորդն է:

Հայ Ազգը բազում հազարամյակներ ընթացող Հայոց Պատմության, ավանդական, մշակութային, գիտական, հոգևոր և բոլոր այլ արժեքների ու հարստությունների տերն է և իրավաժառանգորդը:

Հայաստանի ազգային կառավարությունը Պատմական Հայաստանի բոլոր իշխանությունների ու Թագավորական հարստությունների իրավաժառանգորդն է:

Հայաստանը աշխարհասփյուռ Հայության Հայրենիքն է և բոլոր Հայերն ունեն ՀՀ քաղաքացի (բնակիչ) դառնալու իրավունք:

Ազգային պետությունը, Հայրենի իշխանությունները պարտավոր են ապաստան տալ յուրաքանչյուր Հայի, պաշտպանել նրա անվտանգությունը, պատիվն ու արժանապատվությունը:

Բոլոր Հայերը, Երկրագնդի որ հատվածում էլ գտնվեն, ունեն պարտականություններ Հայ Ազգի ու Հայաստանի, իրենց Պատմական Հայրենիքի նկատմամբ, որից հրաժարվելը ազգադավություն է, և խուսափողը պետք է զրկվի Հայրենի պետության ու համայն Հայության հովանավորությունից:

Ազգային անկախ պետության ամրապնդումն ու հզորացումը պայմանավորված է Հայ Ազգի միասնության, սեփական ազգային ու բարոյական գաղափարախոսությունները որպես պետական քաղաքականության հիմքի ընդունմամբ և օտար գաղափարախոսությունների ու կրոնների (աղանդների՝ հավատքների, պաշտամունքների...) մերժմամբ: Եթե քաղաքական, տնտեսական, ոլորտներում պարտությունը հանգեցնում է պետության (Բնօրրանի) մարմնի կործանմանը, ապա մշակութային, կրոնական-գաղափարախոսական ոլորտներում պարտությունը սպանում է Ազգը՝ հոգին...

Հայ Ազգի միասնությունը, նպատակասլացությունը և Սրբազան Հայրենիքի գաղափարը սերունդների մեջ պահպանելու համար Հայկական Հարցը (հետագայում՝ Հայ Դատն ամբողջապես), Հայկական Պահանջատիրությունը պետք է շարունակեն մնալ ազգային ու պետական քաղաքականության հիմքում:

Հայաստանի արտաքին քաղաքականությունը պետք է կառուցվի Հայ Ազգի ու Հայրենիքի շահերը պաշտպանելու, անվտանգությունն ապահովելու և ազգային նպատակներին հասնելու հայեցակարգից:

Միջազգային քաղաքականության մեջ՝ հատկապես Հայոց Պահանջատիրության և Հայոց Մեծ Ցեղասպանության (1915-1923թթ.) նկատմամբ վերաբերմունքով պետք է ճշտվի Հայաստանին բարեկամ պետությունների, կազմակերպությունների և անհատների ցանկը:

Հայաստանում պետք է իշխի Օրենքը՝ Հայոց Սահմանադրությունը, որը կնդունվի ինչպես Հայրենիքում բնակվող, այնպես էլ՝ աշխարհասփյուռ Հայության (*ովքեր ընդունում են իրենց պարտականությունները Հայ Ազգի ու Հայաստանի նկատմամբ) կողմից ընտրված Սահմանադիր Ժողովի (գիտախրավաբանական խորհրդի) որոշմամբ, և կհաստատվի Համահայկական (տես*) Հանրաքվեով: Մեր Սահմանադրությունը պետք է կառուցվի սեփական ազգային, ավանդական ու բարոյական օրենքների հիմքի վրա, որը թույլ կտա աշխարհի բոլոր անկյուններում պահպանել Հայի ազգային ու բարոյական նկարագիրը և պաշտպանել իրավական, սոցիալական ու մյուս շահերը:

Հայ Ազգի և Հայաստանի միասնությունն ու հզորությունը կհարատևի Արիական-Ցեղապաշտական (Հայկական-Ցեղապահպանական) ապրելակերպի վերահաստատմամբ, պատմական արժեքների վերագնահատմամբ և Ազատ, Անկախ ու Միացյալ Հայաստանի վերակերտմամբ:

Անկախ այն հանգամանքից, թե ինչ պետական կառավարման ձև (նախագահական, խորհրդարանական և այլն) կհաստատվի Հայաստանում (ճիշտը՝ Արարչապետությունն է), անհրաժեշտաբար պետք է վերականգնվի Հայկական Միասնական Թագավորական հարստությունը (եվրոպական ու ասիական շատ պետությունների օրինակով)՝ իր բոլոր ավանդույթներով և առանձնահատկություններով: Հայոց Սահմանադրությունը պետք է կարգավորի Հայրենի իշխանությունների և Թագավորական հարստության համագործակցությունը՝ ի շահ Հայ Ազգի և Հայաստանի: Թագավորական հարստությունը պետք է լինի Արիական-Ցեղապաշտական (Հայկական-Ցեղապահպանական), ազգային ու բարոյական ապրելակերպի հովանավորը և պահպանողը, պետք է առաջնորդվի զուտ ազգային գաղափարախոսությամբ ու քաղաքականությամբ և միաժամանակ լինի Արյան մաքրության ու Գեների առաքելության շարունակության պահպանողը: Թագավորական հարստությունը, հասարակարգերի և իշխանությունների փոփոխությունից անկախ, պետք է մնա որպես անաղարտության և առաքինության օրրան...

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆԱԳԱԿԱՌ

Տնտեսական անկախությունն է, որ նպաստում և թույլ է տալիս առաջնորդվել անկախ, ազգային քաղաքականությամբ: Հայաստանի տնտեսությունն այսօր խարխիված է և կարիք ունի արտաքին օժանդակության ու դրամական ներդրումների: Այս հանգամանքը տնտեսական շարունակական անկմանը զուգահեռ էլ ավելի կկաշկանդի Հայաստանի իշխանություններին՝ վարելու անկախ քաղաքական գիծ՝ հստակ և վստահ արտաքին ու ներքին քաղաքականություն: Սա բնորոշ է բոլոր տնտեսապես թույլ զարգացած երկրներին, որոնց իշխանություններն իրենց ազգի ու պետության կարիքները հոգալու համար քաղաքական պարտադրված կախում ունեն հզոր պետություններից և պարբերաբար դառնում են խաղալիք՝ նրանց քաղաքական, դիվանագիտական խաղերում կրելով բազմաբնույթ կորուստներ, հաճախ՝ անդառնալի:

Այս հանգամանքը առավելագույնս պարտադրում է ամենակարճ ժամկետներում կարգավորել ու կայունացնել Հայաստանի տնտեսության անխափան (ռիթմիկ) գործունեությունը՝ ստեղծելով տնտեսական որոշակի հաստատուն հիմք, որի վրա աստիճանաբար հնարավոր կլինի կառուցել տնտեսական հզոր համակարգ՝ արդի գիտության վրա հենված:

Բայց այդպիսի տնտեսական համակարգի ստեղծումը չպետք է արվի հզոր բռնատիրության հաստատմամբ ու բռնությունների և անհեռանկարային տնտեսական ծրագրերի պարտադրմամբ:

Հայաստանում Հայ Ազգի տնտեսական շահագործումը հանցագործություն է:

Հայոց Պետության ամբողջ հարստությունը անվիճելիորեն պետք է ծառայի Հայ Ազգի և Հայաստանի շահերին:

Արդյունաբերական ձեռնարկությունների տեղաբաշխումը, կառուցումն ու շահագործումը պետք է գիտականորեն հիմնավորվեն ու անվերապահորեն պետք է երաշխավորվի նրանց լիարժեք անվտանգությունը: Գիտականորեն չհիմնավորված, կենսաբանական աղետի հանգեցնող քիմիական արդյունաբերության և այլ վտանգավոր ձեռնարկությունների շահագործումը, ինչպես նաև Ազգի առողջության սպառնացող տնտեսական ձեռնարկումները Հայաստանի իշխանությունների վարած ազգահալած քաղաքականության դրսևորումն են:

Հայ Ազգի կենսամակարդակի իրական բարձրացումը և Հայաստանի հետագա հզորացումը հնարավոր է այն դեպքում, երբ ազգային պետությունը՝ հնարավորություն կունենա վարելու ինքնուրույն տնտեսական քաղաքականություն, որը թույլ կտա ստեղծելու ազատ շուկայական տնտեսվարություն և այդ տնտեսվարության նպաստավոր ու շահավետ իրական պայմաններ: Սակայն, ռազմավարական նշանակության արտադրական-տնտեսական միավորները պետք է լինեն Հայոց պետության սեփականությունը, որը թույլ կտա մշտապես, առավել արդյունավետ կարգավորել ծագած սոցիալ-տնտեսական բազմաբնույթ խնդիրները:

Ազատ շուկայական տնտեսվարության պայմաններում Հայաստանում սեփականատիրական հարաբերությունների կազմակերպման հիմնական սկզբունքը՝ սեփականության հարաբերությունների բազմաձևությունն է: Արտադրության միջոցների նկատմամբ սեփականության հիմնական ձևերը պետք է ներառեն պետական, համայնքային, գործակցային և անհատական (մասնավոր) սեփականատիրական հարաբերություններ:

Հայաստանի կառավարությունը պետք է իրականացնի գնագոյացման ինքնուրույն քաղաքականություն՝ նպատակաուղղված Հանրապետության տնտեսության զարգացման աճի արագացմանը և Հայ Ազգի կենսական շահերի պաշտպանությանը: Ներքին շուկայում կգործի գնագոյացման ճկուն գործելակերպ և գների մի մասը, դրանց կայունացման նպատակով, կհաստատեն պետական մարմինները, իսկ գերակշռող մասը կորոշվի արտադրողի և գնողի պայմանավորվածությամբ (պայմանագրային գների): Հայոց կառավարությունը նաև պետք է ապահովի Ազգի սոցիալական (ընկերային) պաշտպանությունը և կարգավորի առաջին անհրաժեշտության սննդի շուկայական գները՝ պետականորեն տրվող նպաստներին ու նվազագույն աշխատավարձին

համարժեք: Կառավարությունը պետք է վարի ինքնուրույն հարկային քաղաքականություն՝ նպաստելով արդյունաբերության և ազատ շուկայական տնտեսվարության համաչափ զարգացմանը:

Հանրապետության դրամամիջոցների (ֆինանսների) նախարարությունը բանկային համակարգի հետ համատեղ պետք է որոշի ամենատարբեր բնույթի բանկերի գործունեության իրավունքի ու նորմատիվների հարցը: Ազգային պետությունը պետք է լինի բանկերում Ազգի կատարած դրամական ներդրումների երաշխավորն ու հովանավորը: Լինի նաև վճարունակ, որը թույլ կտա երկարաժամկետ տրվող վարկերի միջոցով հոգալ Ազգի կարիքները: Ազգային եկամտի աճին համապատասխան պետք է ստեղծել Ապագա Սերնդի Հիմնադրամ, որտեղ ներդրումներ կանեն նաև սփյուռքի Հայերը:

Հայաստանի արդյունաբերության հետագա զարգացման մեջ առաջնային պետք է համարվեն այն ոլորտները, որտեղ արտադրության աճը կապված է երկրի բնական հարստությունների, մարդկային աշխատուժի և տեխնիկական ու մասնագիտական հնարավորությունների հետ, որը թույլ կտա կայուն պահել տնտեսությունը և կատարելագործել ազգային, ավանդական արտադրատեսակները:

Առաջնային պետք է լինեն նաև ժամանակակից գիտությունների ու Հայ Ազգի մտավոր, գիտական կարողությունների անհապաղ օգտագործումը արդյունաբերության, գյուղատնտեսության և այլ բնագավառներում: Հայաստանի գյուղատնտեսության վարման հիմնական ձևերը պետք է լինեն պետական, համայնքային, գործակցային և անհատական տնտեսությունները, որոնց հողօգտագործման կարգը կորոշվի համապատասխան օրենքներով:

Ազգային պետությունը պետք է առավել նպաստի անհատական հող օգտագործման ընդլայնմանը՝ տրամադրելով անհրաժեշտ տեխնիկա և երկարաժամկետ վարկեր:

Գյուղատնտեսության զարգացման ներքին գործելակերպի ճկունությունը կապահովվի կազմակերպչական բազմազանությամբ՝ հաշվի առնելով տվյալ տեղի առանձնահատկությունները:

Հողն անժամկետ, անհատույց ու ժառանգականության իրավունքով պետք է տրվի գյուղացուն և պետության այն քաղաքացիներին (նաև այն Հայերին, ովքեր ստանձնել են պարտավորություններ Հայ Ազգի և Հայաստանի նկատմամբ ու բնակվում են այլ երկրներում), ովքեր կցանկանան զբաղվել հողագործությամբ:

Բացի գյուղատնտեսական ավանդական արտադրատեսակների մշակումից (հատկապես՝ այգեգործական), որը կնպաստի Հայկական և Արիական խոհանոցների վերականգնմանն ու խիստ հետևողական, առողջարար սննդակարգի վերակիրառմանը, Հայաստանի կառավարությունը պետք է քաջալերի նաև այն գյուղատնտեսական արտադրատեսակների մշակումը, որը թույլ կտա ապահովել Հանրապետության բնակչության գոյատևման նվազագույն կենսապահանջը:

Անհրաժեշտ ուշադրություն պետք է դարձնել նաև անասնապահության (ինչպես և թռչնաբուծության, ձկնաբուծության և այլն) ոլորտին, ինչպես կաթնատու, այնպես էլ մսատու տեսակների բազմացմանն ու պահպանմանը (նախընտրելի է տոհմային տնտեսությունների զարգացումը):

Ազգային պետությունն իրավունք ունի կազմակերպություններից և անհատներից հողը հետ վերցնել (փոխհատուցելու պայմանով) այն դեպքում, երբ այն անհրաժեշտ է ազգային տնտեսության զարգացման նպատակների (պետական շահի) համար, ու նաև այն դեպքում, երբ այդ հողը չի օգտագործվում:

Պետական օրենքներով պետք է առանձնացվեն որոշակի հողատարածքներ (կալվածքներ) Թագավորական հարստության տնտեսությունը և կենցաղը կազմակերպելու, ինչպես նաև բոլոր տեսակի կարիքները հոգալու համար: Հայոց պետությունը պետք է նպաստի Թագավորական հարստության տնտեսության համաչափ զարգացմանը և պետք է լինի Թագավորության համապարփակ շահերի պաշտպանը:

ՀԱՅ ԱՐԻԱԿԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ (ՀԱՄ)
ԿԵՆՍԱՕՐԵՆՔՆԵՐ

1. ՀԱՄ-ը ՀայԱրիական Ցեղատիպի Հայ Ազգի Ցեղապաշտ ընտանիքների կամավոր միություն (միաբանություն) է:
2. ՀԱՄ-ում ընդգրկվել կարող է յուրաքանչյուր Հայ ընտանիք կամ չա- փահաս Հայ անհատ (եթե նա հանդես է գալիս որպես առանձին միավոր), որն առաջնորդվում է Հայկական մտածողությամբ և ՀայԱրիական ներցեղային օրենքներով, պահպանում է ազգային ավանդույթներն ու բարոյական նկարագիրը, շարժվում է ՀԱՄ-ի ծրագրով, կենսաօրենքներով և Գերագույն Խորհրդի որոշումներով:
3. ՀԱՄ-ում ընդգրկվելու համար անհրաժեշտ է՝
 - ա/ Ծանոթություն ՀԱՄ-ի ծրագրին և կենսաօրենքներին,
 - բ/ Դիմում ՀԱՄ-ի Գերագույն Խորհրդին (եթե ընտանիք է՝ ստորագրված բոլոր չափահաս անձանց կողմից):
 - գ/ Ինքնակենսագրություն:
4. Դիմողն (ընտանիքը) ընդունված է համարվում ՀԱՄ-ի Գերագույն Խորհրդի որոշման համաձայն (ներկայացվում է համայնքի կողմից):
5. Յուրաքանչյուր ընտանիք ընդգրկվում է իր բնակավայրի համայնքում:
6. ՀԱՄ-ից դուրս են գալիս ազատ կերպով, գրավոր հայտարարությամբ: Եթե եղել է առնչություն գույքի և դրամամիջոցների հետ, ապա մինչև դուրս գալը ներկայացվում է համապատասխան սպառիչ հաշվետվություն:
7. Որևէ անձի (ընտանիք և այլն) ժամանակավորապես մեկուսացնելու կամ հեռացնելու համար անհրաժեշտ է որոշում կայացնող մարմնի ընդհանուր ձայների 2/3-ի համաձայնությունը:
8. Հեռացվածը կամ կանոնից հեռացածը (անձը, ընտանիքը և այլն) վերընդունվում է ՀԱՄ-ի Համաժողովի (Գերագույն ժողովի) կամ Գերագույն Խորհրդի թույլտվությամբ:
9. ՀԱՄ-ի ներքին կառույցներն են՝
 - ա/ Ընտանիք,
 - բ/ Տոհմ,
 - գ/ Ազգ (ազգակիցներ),
 - դ/ Ցեղ (ցեղակիցներ),
 - ե/ Համայնք,
 - զ/ ՀԱՄ-ի Գերագույն Խորհուրդ:
10. ՀԱՄ-ի ժողովներն են՝
 - ա/ Ընտանեկան,
 - բ/ Ներտոհմային,
 - գ/ Ներազգային,
 - դ/ Ներցեղային,
 - ե/ Համայնքի ընդհանուր,
 - զ/ ՀԱՄ-ի Համաժողով (Գերագույն ժողով):
11. Ընտանիք.
 - ա/ Ընտանիքը ՀԱՄ-ի հիմքն է,
 - բ/ Հայ ընտանիքը Հայ երիտասարդի և Հայ օրիորդի օրինական միությունն է, որտեղ բացառվում է Արյան պղծությունը և առկա է երկու կողմերի ծնողների օրհնությունը:
 - գ/ Ընտանիքի ղեկավարը ընտանիքի հայրն է,
 - դ/ Ընտանեկան հարցերում հայրն ունի վճռական խոսքի իրավունք,
 - ե/ Հոր նահվան դեպքում, մինչև ավագ որդու 21 տարեկան դառնալն ընտանիքը ղեկավարում է մայրը,
 - զ/ Երկու ծնողներին կորցրած (համապատասխան տարիքի կամ ընդհանրապես որդի չունեցող) ընտանիքի ժամանակավոր ղեկավար է նշանակվում ընտանիքի տոհմապետը,
 - է/ Չափահաս երիտասարդի կամ օրիորդի չամուսնացած լինելու, բայց որպես առանձին միավոր հանդես գալու դեպքում տվյալ անձը ինքնատիքյան ինքն է ղեկավարում իր գործերը և համարվում է առանձին ընտանիք (սակայն անհատի առջև պայման է դրվում՝ ընտանիք կազմելու և տոհմականությունը վերականգնելու),
 - ը/ Ընտանիքի ունեցվածքը միայն ընտանիքի սեփականությունն է,
 - թ/ Ընտանիքն առաջնորդվում է ազգային ու բարոյական որոշակի սկզբունքներով և վերադաս մարմինների ու ժողովների որոշումներով:
 - 12. Տոհմ.
 - ա/ Նույն ծնողների զավակներն իրենց ընտանիքներով (դուստրերն ամուսնանալուց հետո դառնում են ամուսնու տոհմի ներկայացուցիչներ), ծնողների զլխավորությամբ հիմնում են իրենց տոհմը,

բ/ Մինուճար որդի ունեցող և դստերն (դստերին) ամուսնացրած կամ զավակ չունեցող ընտանիքն իր կազմով ինքնըստինքյան համարվում է նաև տոհմ,

զ/ Տոհմը ղեկավարում է տոհմապետը՝ որդիների (որդու) հայրը,

դ/ Տոհմապետի մահվան դեպքում տոհմի ղեկավարությունը ստանձնում է 28 տարեկանը բոլորած ավագ որդին, իսկ մինչև համապատասխան տարիքը բոլորելը՝ տոհմապետի կինը,

ե/ Տոհմապետի կնոջ մահվան և ավագ որդու 28 տարեկանը չբոլորած կամ որդի չունենալու դեպքում տոհմի ժամանակավոր ղեկավար է նշանակվում այդ տոհմի ազգի ավագը,

զ/ Ներտոհմային հարցերում տոհմապետն ունի վճռական խոսքի իրավունք:

13. Ազգ (ազգակիցներ).

ա/ Արյունակից եղբայր տոհմապետերն իրենց տոհմերով հիմնում են իրենց ազգը: Տոհմապետին արյունակից եղբայր չունենալու դեպքում, այդ տոհմն ինքնըստինքյան համարվում է նաև ազգ,

բ/ Ազգը ղեկավարում է տոհմապետերի խորհուրդը, որտեղ ընդգրկվում են բոլոր տոհմապետերը: Տոհմապետերի խորհրդի՝ տարիքով ավագը նշանակվում է ազգի ավագ,

զ/ Ազգի ավագի մահվան դեպքում ազգի նոր ավագ է նշանակվում տոհմապետերի խորհրդի հաջորդ տարիքով ավագը,

դ/ Տոհմապետերի խորհուրդը զբաղվում է ներազգային բոլոր հարցերով, որտեղ ազգի ավագն ունի վճռական խոսքի իրավունք:

14. Ցեղ (ցեղակիցներ).

ա/ Ամուսնու և կնոջ ազգերն (ազգակիցներն) իրենց ընտանիքներով հիմնում են իրենց ցեղը,

բ/ Ցեղը ղեկավարում է ազգերի ավագների խորհուրդը, որտեղ ընդգրկվում են ամուսնու և կնոջ ազգերի ավագները: Երկու կողմից էլ ընդգրկվում են հավասար քանակությամբ, ձայների մեծամասնությամբ և փակ քվեարկությամբ,

զ/ Ազգերի ավագների խորհուրդը ձայների մեծամասնությամբ և փակ քվեարկությամբ ընտրում է ցեղապետ,

դ/ Ազգերի ավագների խորհուրդը զբաղվում է ներցեղային բոլոր հարցերով, որտեղ ազգերի ավագների խորհուրդն ունի վճռական խոսքի իրավունք:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.-Տարբեր ցեղերը ժամանակի ընթացքում համայնքի ցեղապետերի հսկողությամբ ընդհանրանում են մեկ միասնական ցեղի մեջ, որը շարունակական ընթացք է ստանում նաև Հայաստանի ամբողջ տարածքում (հնարավորության դեպքում սփյուռքում ևս)՝ տարբեր բնակավայրերի ցեղերին մեկ համընդհանուր ցեղի մեջ միավորելով՝ ՀԱՄ-ի Գերագույն խորհրդի հսկողությամբ: Այսպես պետք է սկսվի Հայության որակական վերակազմավորման գործընթացը:

15. Համայնք.

ա/ Մի բնակավայրի (գյուղ, ավան, քաղաք, շրջան, մարզ և այլն, բաժանումը ՀԱՄ-ի Համաժողովի (Գերագույն ժողովի) կամ Գերագույն խորհրդի) տարբեր ցեղերը միասին կազմավորում են տվյալ բնակավայրի համայնքը,

բ/ Բնակավայրում մեկ ցեղի առկայության դեպքում այդ ցեղը ինքնըստինքյան համարվում է նաև բնակավայրի համայնք,

զ/ Համայնքը ղեկավարում է համայնքի ցեղապետերի խորհուրդը, որտեղ ընդգրկվում են ներկայացուցիչներ բոլոր ցեղերի ցեղապետերից՝ ձայների մեծամասնությամբ և փակ քվեարկությամբ, դ/ Համայնքի ցեղապետերի խորհուրդը ձայների մեծամասնությամբ և փակ քվեարկությամբ ընտրում է համայնքի կառավարիչ,

ե/ Համայնքի ցեղապետերի խորհուրդը զբաղվում է համայնքի բոլոր գործերով, որտեղ ցեղապետերի խորհուրդն ունի վճռական խոսքի իրավունք,

զ/ Համայնքի ցեղապետերի խորհուրդը պատասխանատու և հաշվետու է համայնքի ընդհանուր ժողովին իր գործունեության համար:

16. ՀԱՄ-ի Գերագույն խորհուրդ.

ա/ Տարբեր համայնքների կառավարիչների ժողովը ձայների մեծամասնությամբ և փակ քվեարկությամբ ընտրում է ներկայացուցիչներ, որոնք կազմավորում են ՀԱՄ-ի Գերագույն խորհուրդը, բ/ Մեկ համայնքի առկայության դեպքում ՀԱՄ-ի Գերագույն խորհուրդ կազմավորում է այդ համայնքի ցեղապետերի խորհուրդի կողմից,

զ/ ՀԱՄ-ը Համաժողովների (Գերագույն ժողովների) միջև ընկած ժամանակահատվածում ղեկավարում է ՀԱՄ-ի Գերագույն խորհուրդը,

դ/ ՀԱՄ-ի Գերագույն խորհուրդը ձայների մեծամասնությամբ և փակ քվեարկությամբ ընտրում է ՀԱՄ-ի Գերագույն խորհրդի նախագահ, որը համարվում է նաև ՀԱՄ Ազգային խորհրդի նախագահ (ԱԽ-ն ընտրվում է ՀԱՄ կառույցից, համակիր և օժանդակ շրջանակներից) և ՀԱՄ առաջնորդ:

ե/ ՀԱՄ-ի Գերագույն խորհուրդը զբաղվում է ՀԱՄ-ի բոլոր հարցերով, որտեղ Գերագույն խորհուրդն ունի վճռական խոսքի իրավունք,

զ/ ՀԱՄ-ի Գերագույն խորհուրդը պատասխանատու և հաշվետու է ՀԱՄ-ի Համաժողովին (Գերագույն ժողովին) իր գործունեության համար:

17. Ընտանեկան ժողով.

ա/ Յուրաքանչյուր ընտանիք պարտադիր մեկ ամսվա ընթացքում կամ անհրաժեշտության դեպքում ընտանիքի որևէ չափահաս անձի դիմումով գումարում է ընտանեկան ժողով, որին մասնակցում են ընտանիքի բոլոր չափահաս անձինք,

բ/ Ընտանեկան ժողովը կարող է քննարկել ցանկացած հարց և կարգավորել ընտանեկան բոլոր գործերը,

գ/ Այն գործողությունները, որոնք առնչվում են տոհմին, ազգին, ցեղին, համայնքին և ՀԱՄ-ին, պետք է նախապես համաձայնեցվեն համապատասխան ժողովի կամ մարմին հետ:

18. Ներտոհմային ժողով.

ա/ Ներտոհմային ժողով հրավիրվում է պարտադիր 15 օրվա ընթացքում կամ անհրաժեշտության դեպքում՝ տոհմապետի, նաև՝ որևէ ընտանիքի կողմից,

բ/ ժողովի օրակարգի մասին նախօրոք տեղյակ են պահվում բոլոր ընտանիքները,

գ/ Ներտոհմային ժողովին մասնակցում են տոհմի բոլոր չափահաս անձինք,

դ/ Ներտոհմային ժողովը կարող է քննարկել ցանկացած հարց և կարգավորել ներտոհմային բոլոր գործերը,

ե/ Այն գործողությունները, որոնք առնչվում են ազգին, ցեղին, համայնքին և ՀԱՄ-ին, պետք է նախապես համաձայնեցվեն համապատասխան ժողովի կամ մարմին հետ:

19. Ներազգային ժողով.

ա/ Ներազգային ժողով հրավիրվում է պարտադիր 15 օրվա ընթացքում կամ անհրաժեշտության դեպքում՝ ազգի ավագի, տոհմապետերի խորհրդի, որևէ տոհմապետի, երեք ընտանիքի կողմից,

բ/ ժողովի օրակարգի մասին նախօրոք տեղյակ են պահվում ազգի բոլոր ընտանիքները,

գ/ Ներազգային ժողովին մասնակցում են ազգի բոլոր չափահաս անձինք,

դ/ Ներազգային ժողովը կարող է քննարկել ցանկացած հարց և կարգավորել ներազգային բոլոր գործերը,

ե/ Այն գործողությունները, որոնք առնչվում են ցեղին, համայնքին և ՀԱՄ-ին, պետք է նախապես համաձայնեցվեն համապատասխան ժողովի կամ մարմին հետ:

20. Ներցեղային ժողով.

ա/ Ներցեղային ժողով հրավիրվում է պարտադիր մեկ ամսվա ընթացքում կամ անհրաժեշտության դեպքում՝ ցեղապետի, ազգերի ավագների խորհրդի, որևէ ազգի ավագի, տոհմապետերի խորհրդի, երեք տոհմապետի, հինգ ընտանիքի կողմից,

բ/ ժողովի օրակարգի մասին նախօրոք տեղյակ են պահվում ցեղի բոլոր ընտանիքները,

գ/ Ներցեղային ժողովին մասնակցում են ցեղի բոլոր չափահաս անձինք,

դ/ Ներցեղային ժողովը կարող է քննարկել ցանկացած հարց և կարգավորել ներցեղային բոլոր գործերը,

ե/ Այն գործողությունները, որոնք առնչվում են համայնքին և ՀԱՄ-ին, պետք է նախապես համաձայնեցվեն համապատասխան ժողովի կամ մարմին հետ:

21. Համայնքի Ընդհանուր ժողով.

ա/ Համայնքի ընդհանուր ժողովը հրավիրվում է պարտադիր երեք ամսվա ընթացքում կամ անհրաժեշտության դեպքում՝ ՀԱՄ-ի Գերագույն խորհրդի, համայնքի կառավարչի, ցեղապետերի խորհրդի, երեք ցեղապետի, հինգ ազգի ավագների, տոհմապետերի, յոթ ընտանիքի կողմից,

բ/ ժողովի օրակարգի մասին նախօրոք տեղյակ են պահվում համայնքի բոլոր ընտանիքները,

գ/ Համայնքի ընդհանուր ժողովին մասնակցում են ՀԱՄ-ի Գերագույն խորհրդի

ներկայացուցիչները, ցեղապետերի խորհրդի կազմն ամբողջությամբ, բոլոր ազգերի ավագներն ու տոհմապետերը: Անհրաժեշտության դեպքում մասնակցում են նաև կարևոր հարցեր ունեցող կամ հրավիրված չափահաս անձինք,

դ/ Համայնքի ընդհանուր ժողովը կարող է քննարկել ցանկացած հարց և կարգավորել բոլոր գործերը,

ե/ Այն գործողությունները, որոնք առնչվում են ՀԱՄ-ին, պետք է նախապես համաձայնեցվեն վերադաս ժողովի կամ մարմին հետ:

զ/ Համայնքի ընդհանուր ժողովի որոշումները հարգվում են համայնքի բոլոր մարմինների ու ժողովների կողմից:

22. ՀԱՄ-ի Համաժողով (Գերագույն ժողով).

ա/ ՀԱՄ-ի Համաժողով (Գերագույն ժողով) հրավիրվում է պարտադիր մեկ տարվա ընթացքում կամ անհրաժեշտության դեպքում՝ ՀԱՄ-ի Գերագույն խորհրդի, որևէ համայնքի ընդհանուր ժողովի ցեղապետերի խորհրդի կողմից,

բ/ ՀԱՄ-ի Համաժողովը (Գերագույն ժողովը) քննարկում է ցանկացած հարց և կարգավորում ՀԱՄ-ի բոլոր գործերը,

գ/ ՀԱՄ-ի Համաժողովը (Գերագույն ժողովը) ՀԱՄ-ի բարձրագույն մարմինն է և նրա բացառիկ իրավասությունն է.

*Կենսաօրենքների ընդունումն ու փոփոխումը,

*Ղեկավար և վերահսկողություն իրականացնող մարմինների հետագա գործունեության նպատակահարմարության հարցը,

*Վերակազմակերպման մասին որոշման ընդունումը,

*Լուծարման մասին որոշման ընդունումը,

*Վերոնշյալ հարցերը լուծվում են Համաժողովի (Գերագույն ժողովի) մասնակիցների ընդհանուր ձայների 2/3-ի որոշմամբ,

*ՀԱՄ-ի Համաժողովի (Գերագույն ժողովի) որոշումները հարգվում են ՀԱՄ-ի բոլոր մարմինների ու ժողովների կողմից:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.-ՀԱՄ-ի ինչպես «Կենսաօրենքներ», այնպես էլ՝ «Այլ կենսաօրենքներ» բաժինները ժամանակավոր ուղեցույց՝ արելակերպ են համարվում, մինչև Հայության որակական վերակազմավորման գործընթացի ավարտից հետո՝ Հայկրիական ներցեղային օրենքների վերստեղծումը:

Այս բաժիններն անհրաժեշտ են ներկա իրականության մեջ հաստատվելու և ներկա հասարակության հետ փոխհարաբերվելու համար:

ԱՅԼ ԿԵՆՍԱՕՐԵՆՔՆԵՐ

23. Արտահերթ ժողովները գումարվում են դիմելուց հետո՝

*Ընտանեկան և ներտոհմային ժողովները՝ 3 օրվա ընթացքում,

*Ներագգային և ներցեղային ժողովները՝ 7 օրվա ընթացքում,

*Համայնքի ընդհանուր ժողովները՝ 10 օրվա ընթացքում,

*Համաժողովները (Գերագույն ժողովները)՝ 15 օրվա ընթացքում:

24. Բոլոր մարմիններն ընտրում են քարտուղար և գանձապահ, անհրաժեշտության դեպքում՝ ժամանակավոր վերստուգիչ-վերահսկիչ մարմին, որի իրավասությունները որոշում է այն ստեղծող մարմինը (նաև՝ ժողովը)՝ չհակասելով կենսաօրենքներին:

25. Ընտրովի բոլոր մարմիններն ընտրվում են մեկ տարի ժամկետով: Ինչպես ընտրովի, այնպես էլ նշանակովի մարմինների ու ղեկավարների հանդեպ հիմնավոր բողոքի և վերստուգիչ-վերահսկիչ մարմնի հաստատող եզրակացության առկայության դեպքում կարող են տեղի ունենալ արտահերթ ընտրություններ կամ նշանակումներ:

26. Որևէ ղեկավար մարմնի պաշտոնյա իրավունք ունի պաշտոնից հրաժարվելու՝ իր հրաժարականը հիմնավորելուց և հաշվետվությունը ներկայացնելուց հետո:

27. Ընտրովի մարմինների քանակական կազմը որոշվում է համապատասխան իրավասու ժողովի կողմից՝ մինչև ընտրությունը, եթե յուրաքանչյուր դեպքում չկա ՀԱՄ-ի Համաժողովի (Գերագույն ժողովի) կամ Գերագույն խորհրդի հատուկ որոշումը:

28. Բոլոր որոշումներն (բացառությամբ կենսաօրենքներում հատուկ նշված) ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ:

29. Որոշումներն ընդունվում են, երբ կայացվում են ընդհանուր ձայների 2/3-ի մասնակցությամբ:

30. Բոլոր մարմինների ու ժողովների արձանագրությունները պահպանվում են համապատասխան մարմինների կողմից:

31. Վերադաս մարմնի կամ ժողովի որոշումը կամ տեսակետը հարգվում է ստորադաս մարմնի կամ ժողովի կողմից, մինչև ցանկացած վեճի վերջնական պարզաբանումը:

32. Մեծամասնության կարծիքը հարգվում է փոքրամասնության կողմից՝ չարգելելով փոքրամասնությանը մնալ իր կարծիքին:

33. Բողոքել կարելի է բոլոր վերադաս մարմիններին ու ժողովներին:

34. Բողոքին պատասխան է տրվում մեկ ամսվա ընթացքում:

35. ՀԱՄ-ի յուրաքանչյուր ընտանիք, տոհմ, ազգ, ցեղ, համայնք կարող է ունենալ իր տարբերանշանը:

36. ՀԱՄ-ը կարող է ունենալ խորհրդանշան, զինանշան, դրոշ, օրհներգ:

37. ՀԱՄ-ի Գերագույն խորհուրդը և համայնքների ցեղապետերի խորհուրդները կարող են բանկերում ունենալ հաշվարկային հաշիվ և կնիք՝ օրենքով սահմանված կարգով: Համայնքների կնիքները հաստատվում են ՀԱՄ-ի Գերագույն խորհրդի կողմից:

38. ՀԱՄ-ի Գերագույն խորհուրդը և համայնքների ցեղապետերի խորհուրդները կարող են հրատարակել պաշտոնաթերթ և օրենքով թույլատրված այլ հրատարակություններ՝ հայերեն և օտար լեզուներով:

39. ՀԱՄ-ը պատասխանատվություն չի կրում իր կազմում ընդգրկված ընտանիքների պարտավորությունների համար, իսկ ընդգրկված ընտանիքները պատասխանատվություն չեն կրում ՀԱՄ-ի վերադաս մարմինների պարտավորությունների համար:

40. Պետությունը պատասխանատվություն չի կրում ՀԱՄ-ի պարտավորությունների և գործունեության համար այնպես, ինչպես ՀԱՄ-ը պատասխանատվություն չի կրում պետական իշխանության մարմինների պարտավորությունների և գործունեության համար:

41. ՀԱՄ-ը կարող է ծավալել գործունեություն ինչպես ՀՀ, այնպես էլ օտարերկրյա պետությունների տարածքում, ՀՀ օրենքով և միջազգայնորեն սահմանված կարգով:

42. ՀԱՄ-ը, իր կենսաօրենքներին համապատասխան, կարող է անդամակցել միջազգային հասարակական, քաղաքական և այլ տիպի կառույցների, ունենալ միջազգային կապեր, կնքել

համաձայնագրեր օտարերկրյա կառավարական և ոչ կառավարական, նաև առևտրական ու արտադրական-տնտեսական կազմակերպությունների հետ:

43. ՀԱՄ-ը, իր կենսաօրենքներին համապատասխան, կարող է առանձնացված ստորորժանումներ ստեղծել օտարերկրյա պետություններում՝ այդ պետությունների օրենսդրությամբ համապատասխան:

44. ՀԱՄ-ի և ՀՀ պետական մարմինների փոխհարաբերությունների ընթացքում ծագած բոլոր հարցերը կարգավորվում են Սահմանադրությամբ և սահմանված կարգով:

45. ՀԱՄ-ի կարգապահական տույժերն են՝
ա/ Հանդիմանություն,
բ/ Ռիտողություն (նկատողություն),
գ/ Չգուշացում (խիստ զգուշացում),
դ/ Ընտրելու կամ ընտրվելու իրավունքից զրկում,
ե/ Ժամանակավոր մեկուսացում,
զ/ Հեռացում:

46. ՀԱՄ-ում ընդգրկվածներն իրավունք ունեն՝
ա/ Ընտրել և ընտրվել ՀԱՄ-ի ղեկավար մարմիններում,
բ/ ՀԱՄ-ի գործունեությունը բարելավելու և արդյունավետ դարձնելու նպատակով, նրա ղեկավար մարմիններին և ժողովրդին ներկայացնել դիմումներ, գանգատներ և առաջարկություններ,
գ/ Պնդել և պաշտպանել իրենց կարծիքը կամ տեսակետը ՀԱՄ-ի ղեկավար մարմիններում և ժողովներում,

դ/ Տեղեկություններ ստանալ ՀԱՄ-ի գործունեության մասին,
ե/ ՀԱՄ-ից ստանալ իրավական օգնություն օրինական շահերի պաշտպանության համար, ինչպես նաև դրամական և այլ օրենքով չարգելված օժանդակություններ,
զ/ Ազատ դուրս գալ ՀԱՄ-ից,

47. ՀԱՄ-ում ընդգրկվածները իրավունք չունեն՝
ա/ Վարկաբեկել ՀԱՄ-ը,
բ/ Հրապարակայնորեն քննադատել ու պայքարել ղեկավար մարմինների և անձանց դեմ,
գ/ Ստեղծել խմբակցություններ ՀԱՄ-ում և ծավալել պառակտիչ գործունեություն,
դ/ Հրապարակել կամ հայտնել ՀԱՄ-ի գաղտնիքները,
ե/ Հավաքել, պահել, օգտագործել և տարածել ապօրինի ստացված տեղեկություններ՝ ՀԱՄ-ի և նրա կազմում ընդգրկվածների վերաբերյալ,

զ/ ՀԱՄ-ի անունից ինքնակամ միջոցառումներ կազմակերպել և հայտարարություններ անել:

48. ՀԱՄ-ում ընդգրկվածները պարտավոր են՝
ա/ Գործուն մասնակցություն ցուցաբերել ՀԱՄ-ի աշխատանքներին,
բ/ Բարեխղճորեն և ժամանակին կատարել իրենց վրա դրված պարտականությունները,
գ/ Կատարել ՀԱՄ-ի կենսաօրենքների պահանջները, ղեկավար մարմինների և ժողովների որոշումները, դ/ Հոգ տանել ՀԱՄ-ի հեղինակության բարձրացման և ամրապնդման համար,
ե/ Աջակցել ՀԱՄ-ի համալրմանը,
զ/ Կատարել մուտքավճար և մասնահանումներ (անդամավճարներ):

49. ՀԱՄ-ը կարող է իրականացնել ձեռնարկատիրական (առևտրա-միջնորդական, տնտեսական, հրատարակչական, գիտա-մշակութային և այլն) գործունեություն՝ իր կողմից հիմնադրված ձեռնարկությունների (տնտեսական հանձնախմբերի) միջոցով:

50. ՀԱՄ-ը որպես սեփականություն կարող է ունենալ շենքեր, շինություններ, բնակարանային ֆոնդ, տրանսպորտային միջոցներ, սարքավորումներ, դրամական միջոցներ, բաժնետոմսեր, այլ արժեթղթեր և օրենքով չարգելված այլ գույք:

51. ՀԱՄ-ին ամրակցված ամբողջ գույքը և միջոցները համարվում են ՀԱՄ-ի սեփականություն:

52. ՀԱՄ-ի սեփականությունը գոյանում է մուտքի վճարներից, մասնահանումներից (անդամավճարներից) և օրենքով չարգելված այլ աղբյուրներից:

53. Դրամի հանգանակության իրավունք ունեն ՀԱՄ-ի Գերագույն խորհուրդն ու համայնքների ցեղապետերի խորհուրդները:

54. Ստացած մասնահանումները և այլ եկամուտները կենտրոնանում են ՀԱՄ-ի Գերագույն խորհրդի մոտ: ՀԱՄ-ի Գերագույն խորհուրդն է հսկում անդամավճարների և այլ եկամուտների գանձումն ու ծախսումը, եթե յուրաքանչյուր դեպքում չկա ՀԱՄ-ի Համաժողովի (Գերագույն ժողովի) հատուկ որոշումը:

55. Ստացած մասնահանումների և այլ եկամուտների համար տրվում է պաշտոնական ստացական գանձապահի ստորագրությամբ:

56. ՀԱՄ-ի տարեկան ընդհանուր ծախսերում կազմակերպչական մասնաբաժնի առավելագույն չափը կարող է կազմել մինչև 50%:

57. ՀԱՄ-ի դրամա-ատնտեսական գործունեությունը համալիր ստուգման կարող է ենթարկվել պետական իրավասու մարմինների կողմից՝ գործող օրենսդրությամբ համապատասխան:

58. ՀԱՄ-ի ղեկավար մարմիններում ընդգրկված անձինք կարող են վարձատրվել ՀԱՄ-ի Համաժողովի (Գերագույն ժողովի) կամ Գերագույն խորհրդի որոշմամբ: Վարձատրության չափը և կարգը որոշում է ՀԱՄ-ի Համաժողովը (Գերագույն ժողովը) կամ Գերագույն խորհուրդը:

59. ՀԱՄ-ի հիմնական կառույցների՝ ՀԱՏԳ հասարակական և ՀԱՑԿ հասարակական-քաղաքական կազմակերպությունների գործունեությունը կարող է կասեցվել կամ իրենց կառույցներով լուծարվել՝ ա/ՀԱՏԳ-ՀԱՑԿ Համաժողովի-Համագումարի (Գերագույն ժողովի) կողմից, մասնակիցների ընդհանուր ձայների 2/3-ի որոշմամբ, օրենքով սահմանված կարգով:
բ/Դատարանի որոշմամբ, Սահմանադրության, օրենքների կամ ՀԱՏԳ-ՀԱՑԿ կազմակերպությունների կանոնադրությունների պահանջները խախտելու դեպքում:
60. ՀԱՏԳ-ՀԱՑԿ կազմակերպությունների լուծարման դեպքում լուծարքային հանձնաժողովի պարտադիր վճարումներն իրականացնելուց հետո մնացած գույքը, լուծարման մասին որոշում կայացրած մարմնի կողմից սահմանված կարգով, օգտագործվում է ՀԱՄ-ի կանոնադրական նպատակների և խնդիրների իրականացման համար, իսկ վեճի առկայության դեպքում հարցը լուծվում է օրենքով սահմանված կարգով:
61. ՀԱՏԳ-ՀԱՑԿ կազմակերպությունների լուծարման դեպքում պարտատերերի պահանջները բավարարվում են օրենքով սահմանված կարգով:
62. ՀԱՄ-ը (ընտանիքների կամավոր միությունը) կարող է լուծարվել ՀԱՄ-ի Համաժողովի (Գերագույն ժողովի) կողմից՝ ընդհանուր ձայների 2/3-ի համաձայնությամբ, Գերագույն նպատակի իրականացումից հետո:
63. ՀԱՄ-ը իր գործունեությունը համակարգելու, իրավունքները պաշտպանելու, ինչպես նաև միջազգային կազմակերպություններում ընդհանուր շահեր ներկայացնելու նպատակով կարող է միավորվել միություններում:
64. Իր կենսաօրենքները, նպատակներն ու խնդիրները իրականացնելու նպատակով ՀԱՄ-ը կարող է ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ՝ մասնաճյուղեր և ներկայացուցչություններ:
65. ՀԱՄ-ը կարող է վերակազմակերպվել (միաձուլում, միացում, բաժանում)
66. ՀԱՄ-ի Համաժողովի (Գերագույն ժողովի) կողմից, մասնակիցների ընդհանուր ձայների 2/3-ի որոշմամբ՝ օրենքով սահմանված կարգով:
67. ՀԱՄ-ում ընդգրկվածները ՀԱՄ-ի Համաժողովի (Գերագույն ժողովի) կամ Գերագույն խորհրդի համաձայնությամբ կարող են ընդգրկվել այն հասարակական, քաղաքական, բարեգործական և այլ կառույցներում, որոնց ծրագիրն ու գործունեությունը չի հակասում ՀԱՄ-ի ծրագրին և գործունեությանը:
68. ՀԱՄ-ի օժանդակ անդամ.
ՀԱՄ-ի օժանդակ անդամ կարող է լինել յուրաքանչյուր Հայ ընտանիք (նրա չափահաս անդամները) և չափահաս Հայ անհատ, որն առաջնորդվում է ազգային ավանդույթներով, բարոյականությամբ և իր գործունեությամբ նպաստում է ՀԱՄ-ի նպատակների և խնդիրների իրականացմանը:
69. ՀԱՄ-ի օժանդակ անդամ դառնալու համար անհրաժեշտ է՝
ա/Ծանոթություն ՀԱՄ-ի ծրագրին և կենսաօրենքներին,
բ/Դիմում ՀԱՄ-ի տվյալ համայնքի ցեղապետների խորհրդին (եթե ընտանիք է՝ ստորագրված բոլոր չափահաս անձանց կողմից),
գ/Ինքնակենսագրություն:
70. ՀԱՄ-ի օժանդակ անդամությունից դուրս են գալիս ազատ կերպով՝ գրավոր հայտարարությամբ:
71. ՀԱՄ-ի օժանդակ անդամի գործունեությունը կարգավորվում է տվյալ համայնքի ցեղապետների խորհրդի հետ փոխադարձ համաձայնությամբ:
72. ՀԱՄ-ի օժանդակ անդամը մուծում է մուտքավճար և անդամավճար:
73. ՀԱՄ-ի համակիր անդամ.
ՀԱՄ-ի համակիր անդամ կարող է լինել յուրաքանչյուր Հայ ընտանիք (նրա չափահաս անդամները) և չափահաս Հայ անհատ, որն առաջնորդվում է ազգային ավանդույթներով, բարոյականությամբ և իր գործունեությամբ նպաստում է ՀԱՄ-ի նպատակների և խնդիրների իրականացմանը:
74. ՀԱՄ-ի համակիր անդամ դառնալու համար անհրաժեշտ է՝
ա/Ծանոթություն ՀԱՄ-ի ծրագրին և կենսաօրենքներին,
բ/Բանավոր դիմում ՀԱՄ-ի տվյալ համայնքի ցեղապետների խորհրդին (եթե ընտանիք է՝ բոլոր չափահաս անձանց բանավոր համաձայնությունը):
75. ՀԱՄ-ի համակիր անդամությունից դուրս են գալիս ազատ կերպով՝ բանավոր հայտարարությամբ:
76. ՀԱՄ-ի համակիր անդամի գործունեությունը կարգավորվում է տվյալ համայնքի ցեղապետների խորհրդի հետ՝ փոխադարձ համաձայնությամբ:
Այսօր յուրաքանչյուր Հայրորդու սրբազան պարտքն է ինքնապաշտպանվելով՝ պաշտպանել ԱՁԳ-ը: Արիեստածին ու խառնածին «ազգեր»-ը ուղղորդված ոչնչացնում են Բնածինն ու Բնականը, որն է՝ ավանդական ազգայինն ու առաքինի համամարդկայինը: Ավերումն է նրանց գոյատևելու կերպը՝ խավարն ընդդեմ լույսի: Մոլորակի կործանումն այլևս դաժան հեքիաթ չէ, այլ՝ դարձել է առօրյա: Սին և ունայն, ապազգային պարտադրվող արժեքները՝ միօրինակությամբ ու արիեստականությամբ, ոչնչացնելու են արարող և անարատ ամեն բան: Բնության մեջ յուրաքանչյուր տեսակ, արարած նախ ինքն է իրեն փրկում, հետո՝ այլոց, իսկ փրկվում են ինքնատիպությամբ, ինքնամաքրմամբ և ոչ՝ կապելով կամ թուփակելով:

Սթափվի՛ր ՀԱՅՈՒԹՅՈՒՆ, անսա՛ր բազմահազարամյա իմաստնությանդ ու գեներտիկ հիշողությանդ և ապավինի՛ր Ցեղիդ Ներուժին, ու ԴՈՒ կհաղթես:

Մեր պայքարը բարդ ու դժվարին է լինելու, քանզի Հայոց խորհրդարանի, կառավարության բազմաթիվ պատգամավորներ ու պաշտոնյաներ, քաղաքական գործիչներ, այլ տիպի իշխանավորներ լրացուցիչ վարձատրություն են ստանում օտարից, նաև՝ թշնամի երկրների դեսպանատներից, վայելում են ամենատարբեր աղանդների դրամամիջոցները, իսկ մի քանիսն էլ հասցրել են «քաղաքակրթվել» ու դառնալ անբարոյական կամ համասեռական...

Իսկ հիսուսյան 21-րդ դարը գրոհում ու ճզմում է այն ազգերին, որոնք չեն կարող կամ պատրաստ չեն դիմակայել նրան: Աշխարհի ներկայիս տերերն օրըստօրե նորանոր ձևեր են դարձնում՝ փոքրաթիվ ազգերին ճնշելու, նրանց բարոյալքելու, այնուհետև ոչնչացնելու (բազմադեմ կամ անդեմ դարձնելու) համար:

«...ՉՊԵՏՔ Է ՀԱՆԴՈՒՐԺԵԼ...

ՉՊԵՏՔ Է ՀԱՆԴՈՒՐԺԵԼ, որ ժողովրդի հովիվներ կոչվող հոգևորականները նսենանալով իջնեն մինչև մոմավաճառների մակարդակի, որի հետևանքով այլ կրոններն ու աղանդները առատ հունձք են անում Հայաստանում:

ՉՊԵՏՔ Է ՀԱՆԴՈՒՐԺԵԼ, որ մեր մտավորականները, որոնք պետք է լինեն ազգի քահակիրն ու առաջնորդողը, հանուն, թեկուզ և հանապազորյա հացի, իջնեն մինչև տականքների ու պնակալեզների մակարդակի, իսկ հետո նաև հանուն ճոխ ու շվայտ կյանքի կեղծեն իրականությունը և օտարի երգը երգելով ու հնչյունների տակ պար գալով՝ իրենց եղած կամ չեղած ձիրքն ու շնորհքը թաքցնեն սնամեջ ու կեղծ ձևերի մեջ:

ՉՊԵՏՔ Է ՀԱՆԴՈՒՐԺԵԼ, որ մի քանի ստահակ հողածնի, խավարամիտի ու աթոռապաշտ ազգադավի պատճառով բարոյապես կամ մարմնապես ոչնչանան ազգի լավագույն զավակները, վտանգվի՛ Հայոց Պատմական Հայրենիքը:

ՉՊԵՏՔ Է ՀԱՆԴՈՒԹԵԼ, որ օտարներն ու նրանց հայ հորջորջվող կամակատարները ոտնահարեն Հայոց ավանդույթները, մշակույթը, պատմությունը, լեզուն ու կրթությունը:

ՉՊԵՏՔ Է ՀԱՆԴՈՒԹԵԼ, որ Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատություններում մուտք գործեն ապաշնորհներն ու անտաղանդները՝ գրավելով շատ ու շատ շնորհալի երիտասարդների տեղը, վտանգելով Հայության ապագան:

ՉՊԵՏՔ Է ՀԱՆԴՈՒԹԵԼ, որ այսուհետև հոգեպես նվաստ, ծախու, ծուլ ու անճարակ շատ ու շատ մարդիկ տնօրինեն Հայաստանի բախտը՝ ղեկավարեն մեր տնտեսությունը, ազգային-բարոյական ու հոգևոր աշխարհը:

ՉՊԵՏՔ Է ՀԱՆԴՈՒԹԵԼ, որ կաշառակերություն կոչվող ժանտախտը, որն օրստօրե իր արմատներն է տարածում, խորացնում հասարակության գրեթե բոլոր խավերում՝ ներառյալ մինչև վերջին ուստիկանն ու արդարադատության ամենափոքր ու մեծ պաշտոնյան, այսուհետև շարունակի իր «հաղթարշավը»:

ՉՊԵՏՔ Է ՀԱՆԴՈՒԹԵԼ, որ անարդարությունից, չքավորությունից, ազատ մտածելու, առանց վախի արտահայտվելու և այլ մարդկային ամենատարրական ազատությունների բացակայության պատճառով տասնյակ հազարավոր հայեր իրենց տունն ու տեղը, իրենց հայրենի բնօրրանը թողնելով հեռանան հայրենի եզերքներից, օտար ափերում փրկություն որոնեն և մխրճվելով դաժան տառապանքների մեջ՝ հանդուրժեն միամիտների և տգետների կողմից իրենց պիտակավորված դավաճանի և լքողի սև անունը:

ՉՊԵՏՔ Է ՀԱՆԴՈՒԹԵԼ, որ հայաստանյան մի քանի օտարամուլ, ծայրահեղ քծնվող պաշտոնյաների ու սփյուռքի քաղաքական որոշ ուժերի կեղծ ու անմարդկային շինծու օրենքների պատճառով սփյուռքում գտնվող հարյուր հազարավոր հայեր, հուսալքված՝ հայրենիք վերադառնալու երազից, կարոտով, ափսոսանքով ու նաև ընդվզումով դիտեն հայրենիքում կատարվող իրադարձությունները՝ չկարողանալով իրենց նպաստն ու ներդրումն ունենալ իրենց ազգի ու հայրենիքի բարօրության գործում:

ՉՊԵՏՔ Է ՀԱՆԴՈՒԹԵԼ, որ մեր ազգը կանգնի արհեստական արհավիրքների դեմ հանդիման և նորից ու նորից նրա առջև ծառանա լինել-չլինելու հարցը:

ՉՊԵՏՔ Է ՀԱՆԴՈՒԹԵԼ, որ բնական աղետները և ողբերգական իրավիճակները որոշ պաշտոնյա, ստահակ փողամուլների համար հարստանալու աղբյուր դառնան:

ՉՊԵՏՔ Է ՀԱՆԴՈՒԹԵԼ օտարի ՀԱՄԱԿԱՐԳԸ, ՕՐԵՆՔՆԵՐԸ, նույն այդ համակարգից ու օրենքից պղծված մարդուն, ՉՊԵՏՔ Է ՀԱՆԴՈՒԹԵԼ, որ մեր Ազգը այս էլ որերորդ անգամ նորից ու նորից կանգնի հոգեկան փլուզման առջև:

ՉՊԵՏՔ Է ՀԱՆԴՈՒԹԵԼ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՂ ՍՊԻՏԱԿ ԵՂԵՆԻ ԸՆԹԱՑՔԸ...»

Հարկ է ևս մեկ անգամ հնչեցնել.-ՀԱՅ ԱԶԳ, ԵԿԵԼ Է ԺԱՄԸ ՔՈ ՈՏՔԻ ԿԱՆԳՆԵԼՈՒ, Արևի տակ Հայ Տեսակի գոյատևումն ապահովելու համար:

Եվ երիցս փառք Ազգին, նրա նվիրյալներին, և մահ՝ ընդհանենը «յան» վերջածանցով ազգանունը կրող հայ դավաճաններին ու բոլոր թշնամյաց...

Ահա, թե որտեղ պետք է նպատակամղել ազգայնականության շարժիչ ուժը, դեպի արդար վրեժը, դեպի արդարություն ծնող հզոր ուժը: Այս ճակատում անփոխարինելի են հայ ազգայնական-անիշխանականները: Իսկ Անիշխանականությունը (Անարխիզմ) անհրաժեշտ է ընկալել որպես Բնապաշտություն՝ Բնակրոնություն (հետևելով Ցեղակրոնության մեկնությանը):

Ներկայիս նյութախեղդ աշխարհը, որն ընդհանենը մի քանի հազարամյակներ է ինչ որդեգրել և առաջնորդվում է «մարդադիր օրենքներ»-ի թելադրանքով, արդեն շտապում է դրանք քաղաքական-գաղափարական համակարգերով ու զինական ճնշիչ գործողություններով աստվածայնացնել, միտումնավոր մոռացության տալով կամ տգիտորեն չիմանալով, որ «Արարչադիր օրենքներ»-ը թղթի վրա գրվելով և ավերիչ, լկտի պարտադրանքներով չեն ամրագրվում, ավելին՝ գործելու է «քաղաքական բուժերանգի» պարտադիր հարվածը: Մարդկային այդ անանոթությանը այստեղ էլ, դեռևս, շարունակում է հակադրվել արարչությանը օժտված, անջնջելի «չգրված օրենքներ»-ի ավանդական հզոր հոգևոր ներկայությունը...

Երկնային Սրբազան Իշխանության՝ ՏԻԵԶԵՐԱԿԱՐԳ-ի հետևորդները, դարեդար աներկբա հակադրության մեջ են «մարդադիր (իրականում՝ մարդատյաց) օրենքներ»-ի հետևորդների հետ և սրանց կողմից որակվում են բազմապիսի պիտակներով, հատկապես՝ որպես անիշխանականներ՝ անարխիստներ: Սակայն, երբ բաց՝ ճշմարտության աչքերով ենք նայում իրականությանը, ապա մշյալ անիշխանականները չեն ճանաչում արհեստածին ու հակաբնական, հողայնացված մարդկային սահմանափակ ու իրավիճակային օրենսդրությունը և շարունակում են ճանաչել միլիոնավոր տարիներ՝ ի վերուստ ժառանգականորեն-ծինաբանորեն (զենետիկորեն) ամրագրված ՏԻԵԶԵՐԱԿԱՐԳ-ը՝ Արարչադիր Օրենսդրությունը:

Մարդկային այս տեսակը, յուրաքանչյուր ազգի մեջ, այդ թվում՝ նաև հայերիս, ազգայնական էությանը, մտածողությանը, բարոյականությանը ու կացութաձևով առաջնորդվող հավաքականությունն է, որն ամեն ազգի մեջ միջուկ-սերուցքի՝ ինքնությունը պահպանողների, ապազգայինին դիմադրողների և ազգային առաքելությունն իրականացնողների դերն է կատարում: Այս հավաքականության ոչնչացումը հանգեցնում է տվյալ ազգի հոգևոր-մարմնական կործանմանը՝ ձուլմանը այլերի հետ:

Անհիշանականությունը բիրտ ավերիչ ուժի նկատմամբ՝ հատուկ է բոլոր բնածին ազգերին, հատկապես՝ Արարչածին Հայ Ազգին, որի Գեների մեջ դա ամրագրված է ի ծնե ի բնե և Հայության անկործանելիության գրավականն է, իսկ երաշխիքը կհանդիսանա ձևավորված ու կազմակերպված հայ ազգայնականությունը: Հայ ազգայնականների անհիշանական հաստատուն կեցվածքը միայն կչեզոքացնի Հայաստանն ու Հայությանը ոչնչացման դատապարտած՝ արհեստածիններից արտատպված ապագային ու անբարոյական իրականությունը: Միայն հայ ազգայնական Ոգե-Գաղափարական Շարժումը կվերաբացահայտի ու կընպատակամղի հայի ներքին հզորությունն ու արարչական կարողությունները, որի կառուցած պետությունն ու հասարակարգն էլ կլինի ամենակատարյալը և բնականը:

Հայկական անհիշանական գաղափարախոսությունը դժվարին, սակայն, պարտադիր ու պատվաբեր ճանապարհ ունի անցնելու և այն, ի դեմս հայ դասական ազգայնականության ներկայացուցիչների՝ վաղուց իր սերմերն է ցանում արդի հայ իրականության մեջ: Մինչ այժմ անհիշանական դրսևորումները երևակվել են անհատական կերպով՝ հայ առաջադեմ ու նվիրյալ մտավորականների, պետական և այլ գործիչների կյանքի ու գործունեության միջոցով: Սրանք են, որ հանդիսացել են Ազգի-Ցեղի ներքին շարժիչ ուժը և Նժդեհի բնորոշմամբ՝ ցեղը (Հայ Գեների բացարձակությունն ու բացառիկությունը) կրել են իրենց մեջ, եղել են ցեղակրոններ:

Հայ Արիական Միաբանության գաղափարախոսության առանցքը կառուցված է հենց անհիշանական գաղափարների հիմնարար սկզբունքների վրա: ՀայԱրիականությունն ինքն արդեն իսկ տիեզերախմաստ երևույթ է և հակադիր է հողածնային մարդատյաց-մարդակեր բնույթի ցանկացած արժեքի: Ազգայնական, անհիշանական գաղափարաբանությունը հենված է հավիտենարժեք հասկացությունների, ազգային և համատիեզերական համադրելի օրինաչափությունների վրա, ուստի անկասելի է շարունակական ԲՆԱՊԱՇՏԱԿԱՆ ընթացքը և բոլոր ձևախեղումները ժամանակավոր երևույթներ են, խստագույնս պատժելի ՏԻԵՉԵՐՔԻ կողմից...

* * *

Հայաստանը քաղաքական ներքին ու արտաքին խաչմերուկներում

Հայքն իր աշխարհագրական դիրքով միշտ էլ գրավել է առանցքային տեղ մարդկության զարգացման, քաղաքակրթությունների ձևավորման և հատկապես աշխարհին տիրելու ձգտում ունացող ազգերի ռազմա-քաղաքական հայեցակարգերում: Ինչպես Արիական փառահեղ աշխարհակարգի ժամանակ հզոր Հայկական Պետության գոյության պարագայում, այնպես էլ այժմ՝ Հայկական Բարձրավանդակի մի անկյունում ծվարած փոքրիկ տարածքով Հայաստանն ունի նման նշանակակություն, սակայն, նորանկախ ՀՀ-ի փոփոխվող կախյալ իշխանություններն ի չիք են դարձնում այդ ազդեցիկ դերն ու նշանակությունը, որն էլ արժեզրկել է Հայ Ազգի գոյության և դերակատարության գործոն-կարևորությունը՝ մարդկության ճակատագիրը ներկայումս տնօրինել ցանկացող հզորների «աչքին»...

Հխորանալով մեծ վերլուծության ենթակա այս կարևորագույն խնդրի մեջ՝ պարզապես մի քանի փաստերով վերաարժեքավորենք Հայաստանի ու Հայության անհրաժեշտ դերակատարությունը մեր տարածաշրջանի և, առհասարակ, ամբողջ աշխարհի՝ մշտապես փոփոխվող գաղափարական-քաղաքական իրավիճակներում: Իսկ այդ իրավիճակները փոփոխվում են միայն մարտավարությամբ. ռազմավարությամբ դրանք դարերով կայուն են...

Այսօր Հայաստանի ներքին քաղաքականությունը գրեթե ամբողջությամբ թելադրված է դրսից և քաղաքական (ճակ՝ տնտեսական) «վերնախավ» կարողանում են մուտք գործել հատուկ ընտրյալները՝ այս կամ այն հզոր պետության կամ օթյակի կողմից հովանավորվող: Ուստի հայ քաղաքական ներկա՝ իբր ձևավորված դաշտից լրջորեն խոսել, նշանակում է, պարզապես վերլուծել մի շարք տերությունների ազդեցության չափը և շահերը մեր բազմաչարչար հայրենիքում:

...ԽՍՀՄ-ԱՄՆ հակամարտության տարիներին, երբ աշխարհը երկբևեռ էր, և ամեն ինչ կարծես թե հստակ էր, բոլոր ոլորտներում հաղթանակներ տանելու անզուսպ պայքար էր ծավալվել՝ համակարգերի մրցակեց, սակայն, հակառակ այդ «երկկողմանի գերզարգացումներին», աշխարհն անընդհատ ճահճանում էր երկու ապագային ու հակամարդկային գաղափարախոսությունների ծայրահեղությունների արանքում: ԽՍՀՄ ծրագրավորված փլուզումը հանգեցրեց ԱՄՆ-ի միաբևեռ ապագաղափարական, չծրագրավորված ծավալապաշտական տիրապետությանը, և աշխարհը դարձավ ավելի դաժան ու պարզապես հայտնվեց ինքնահոշոտման, ինքնաոչնչացման ճանապարհին, քանզի գեներն ու փողը վերջնականապես դարձան համամարդկային արժեքները «ճանաչելու» նախապայմանները: Սակայն, ի հեճուկս արհեստածին ազգ-ժողովուրդների, միաբևեռությունը երկար կյանք չունեցավ, և կրկին արծարծվում է երկբևեռության հարցը, բայց ոչ մյուս ազգերի «սիրուն աչքերի» համար, այլ՝ ինքնափրկումի (քանզի որոշ պետությունների գործունեությանը զուգահեռ, ամերիկանիզմի համաշխարհային ոստիկանապետական նկրտումներին լրջորեն հակադրվեց իսլամական համաշխարհային ահաբեկչական մեքենան): ԱՄՆ-ի՝ միաբևեռ աշխարհի կերտման գաղափարը նույնիսկ Եվրոպան այնքան էլ հրճվանքով չընդունեց: Դեռևս ԽՍՀՄ-ԱՄՆ «սառը պատերազմի» տարիներին Եվրոպան որոշակի անկախության էր ձգտում՝ Ֆրանսիայի, Գերմանիայի ու Իտալիայի գլխավորությամբ: Այս հարցում Մեծ Բրիտանիան (զումարած Իսրայելի աջակցությունը) ԱՄՆ-ի «հաստ աղին» է Եվրոպայում և Եվրոպական Միասնական Տան կայացման լրջագույն հակառակորդն է, քանզի ԱՄՆ-ի խոսափողը լինելով՝ առաջնային դիրք է գրավում Եվրոպական

աշխարհամասուն, հետևաբար և՛ աշխարհում: Ուստի իրապես վախենալով ԱՄՆ-ի ոստիկանական, մեծապետական կեցվածքից, որոշակի մատոնական շրջանակների աջակցությունն ունեցող և ամերիկացիներին ամենամահնազանդ եվրոպական երկիրը՝ Ֆրանսիան, ակնհայտորեն փորձեց երկփեղկել աշխարհը՝ օգտվելով Ռուսաստանի ժամանակավոր տկարությունից: Սակայն, սա արդեն նշանակում է լուրջ փորձ՝ անգլո-(սաքսոնական)ամերիկյան տիրապետությանը եվրոպայում վերջ տալուն: Ֆրանսիան և Գերմանիան չնայած որոշակի երկկողմանի տարածայնություններին, լծվեցին եվրոպան համախմբելու գործին, որի մեջ փորձեցին նպատակայնորեն ներգրավել նաև Ռուսաստանը: Այստեղ էր, որ ԱՄՆ-ը սարսափեց ու իր մշտական համախոհ Մեծ Բրիտանիայի համառ աջակցությամբ ցնցեց «ծերուկ եվրոպայի» բզկտված մարմինը՝ ռմբակոծելով Յարավսլավիան՝ վստահ լինելով, որ այդպիսով զոնե առժամանակ հեռացնում է Ռուսաստանին՝ միաժամանակ ոչնչացնելով Միասնական եվրոպայի գաղափարը (նման միտում ուներ նաև Իրաքի դեմ պատերազմը): Այնուհետև, չեչնական բնույթի շահարկմամբ, ԱՄՆ-ը առհասարակ վտարել տվեց Ռուսաստանին եվրամիությունից (ՌԴ ներկայացուցիչները զրկվեցին ձայնի իրավունքից և, որպես բողոքի նշան, ժամանակավորապես հրաժարվեցին ԵՄ նիստերին մասնակցելուց): Պառակտելով եվրոպան (նաև՝ պայքար եվրո-ի դեմ և այլն)՝ նա իր անհնազանդ դաշնակիցներին կանգնեցրեց արդեն թշնամի Ռուսաստանին՝ դեմ-հանդիման, սակայն դրանով չբավարարվեց: Որպեսզի երբևիցե չըկորցնի եվրոպան, ԱՄՆ-ը իր արտաքին քաղաքականության մեջ կրկին ամրագրեց երկբևեռության գաղափարը՝ տնտեսապես թույլ, ազգային հարցերում զգայուն Ռուսաստանի հետ: Եվ Ռուսաստանը, իհարկե վարելով իր խաղը, եռանդուն լծվեց այդ գործին: Այցերը հատկապես ԿԺԴ, Չինաստան, Յնդկաստան, Թուրքիա կարևոր էին այդ գործընթացի մեջ: Դրան հետևեց ԱՄՆ-ի վերաբերմունքի կտրուկ փոփոխությունը ԿԺԴ-ի և Յարավսլավիայի (մասնակիորեն նաև՝ Իրաքի) մեկուսացումները կարգավորելու (սա կրելու է փոփոխական բնույթ) հարցերում: Մեր տարածաշրջանում այժմեական դարձավ «հինգ ծովերի ծրագիրը» (ԽՍՀՄ-ԱՄՆ): Ահա թե ինչու այսպես «ջերմացան» ռուս-ամերիկյան հարաբերությունները, և լարվեցին՝ ռուս-ֆրանսիականը: Սակայն, եվրոպան, բացահայտորեն «անկախական» հանդես եկող Ֆրանսիայի առաջնորդությամբ, չնահանջեց, ավելին՝ ընդունեց ԱՄՆ-ի նետած ձեռնոցը: Չխորանալով Ռուսաստանի ու Յարավսլավիայի հետ հարաբերությունների կարգավորման հարցի մեջ՝ անդրադառնալով Ֆրանսիայի վարած քաղաքականությանը մեր տարածաշրջանում, որտեղ այժմ էլ որոշվում է մարդկության ճակատագիրը: Այստեղ արդեն հաստատուն դիրքեր ունեցող ԱՄՆ-ից և Ռուսաստանից տեղային հակամարտությունները իբր կարգավորելու նախաձեռնությունը խլելը դարձավ գերխնդիր: Ֆրանսիան որոշ աշխատանքներ արել էր այդ ուղղությամբ և անցավ վճռական գործի: Որպեսզի Կովկաս-Անդրկովկասում և Մերձավոր Արևելքում գրավեն տիրապետող դիրք, իհարկե, պետք է վայելեն Իսրայելի (համայն հրեության՝ աշխարհի գաղտնի կառավարության) աջակցությունը, օգտվեն համաշխարհային դրամազվիտի շնորհներից, իսկ դրա համար նախ պետք է «քեզանով անես» Թուրքիային, որի բուռ ու շատակեր բանակը Արաբական աշխարհի հորձանուտում Իսրայելական պետության մշտաթուն պահապանն է (հատկապես Իրաքին, Սիրիային և Իրանին զսպելու գործում): Թուրքիային թելադրելու համար էլ պետք է իրապես տիրես Յայաստանին (Յայկական հարցի շահարկմամբ. հիշենք՝ Ֆրանսիան մերժեց քննարկել հայերի ցեղասպանության հարցը, ապա՝ ճանաչեց, նույնն արեց նաև Իտալիան, իսկ ԱՄՆ-ը այն հետևողականորեն շահարկում է՝ Թուրքիային աջալուրջ պահելու նպատակով, արդեն Իսրայելն էլ է սկսել շահարկել այս հարցը): Իսկ վերջերս Յայաստանն ու Ադրբեջանը համալրեցին եվրախորհրդի շարքերը՝ տարածաշրջանում հօգուտ եվրոպայի խճճելով «խաղի կանոնները»: Ահա, այս գործընթացներից հետո, տիրելով եվրոպան, Ասիան ու Աֆրիկան կապող բոլոր (օդային, երկաթուղային, ավտոճանապարհային ու ծովային) ուղիներին, գազատար-նավթատար խողովակաշարերին, նավթի ու գազի (և այլ օգտակար հանածոների) հսկայական պաշարներին ու հատկապես հրեական դրամազվիտին, «երկնագույն սկուտեղի վրա» դառնում են աշխարհի տիրակալը: Եվ Ֆրանսիան այսօր իրապես տիրապետող է Յայաստանի արդյունաբերության ու գյուղատնտեսության մեջ, ԶԶ իշխանությունները վաղուց իրենն են, և Թուրքիան «պարտավոր» է պարզապես լավ հարաբերություններ ունենալ Ֆրանսիայի հետ (մանավանդ՝ ձգտում է դառնալ եվրախորհրդի անդամ): Այստեղ ականա «մտածմունքի» մեջ է ընկնում նաև Իսրայելը, սակայն այս խաղաթուղքը Իսրայելի հարցում քիչ համարելով՝ Ֆրանսիան օգտագործում է նաև իր մյուս ազդեցությունը՝ Լիբանան-Պաղեստին լծակը: Պաղեստին-Իսրայել հարաբերությունների սրումը դեռ ծավալումների մեջ են: Այստեղ Ֆրանսիայի գործընկեր Գերմանիան նույնպես աշխուժացնում է իր քաղաքականությունը, որն ավանդական կապեր ունի նաև Թուրքիայի հետ: Իսկ ի՞նչ են մտածում ԱՄՆ-ը և Ռուսաստանը: ԱՄՆ-ը դասալքության փորձ անող Թուրքիային նախ ցուցադրեց հայոց ցեղասպանության ճանաչման ու դրանից բխող հետևանքների սպառնալիքը (այստեղ ապացուցվեց նաև, որ ԱՄՆ-ի Կոնգրեսի մի հանձնաժողով ավելի մեծ դեր ունի, քան Ռուսաստանի Պետական Դուման, որը ճանաչել է հայերի ցեղասպանությունը): Այնուհետև, կարգավորեց իր դերն ու նշանակությունը Պաղեստին-Իսրայել և Յայաստան-Ադրբեջան (Արցախի խնդիր) հակամարտություններում՝ հատկապես առաջինում մերժելով Ֆրանսիայի ու Ռուսաստանի որևէ միջամտությունը: Ռուսաստանն էլ իր հերթին Սիրիայի, Իրաքի, մասամբ նաև Իրանի օժանդակությամբ խթանեց արաբա-իսրայելական հակամարտությունը (գրեթե հասցնելով պատերազմի)՝ ստիպելով Պաղեստինի ու Իսրայելի առաջնորդներին այցելել Մոսկվա, իսկ Յայաստանի ու Ադրբեջանի հարցում Ռուսաստանը փորձեց օգտվել Յայաստանում ունեցած իր ամուր դիրքից ու որոշակի սիրաշահումներ արեց Թուրքիային, նաև Ադրբեջանին: Այստեղ մեզ համար

ներկայումս ամենավտանգավորը ոչ այնքան Արցախի կամ Մեղրու վերաբերյալ շահարկումների խնդիրն է, որքան Ջավախքինը, որտեղից ռուսական զորամիավորումների դուրս բերումը, ինչպես նաև թուրք-մետսեթների վերաբնակեցումը լուրջ հարված է հայկական շահերին: Եվ իրական վտանգ կա, որ Ռուսաստանն իր մեծապետական նպատակների համար կարող է այս անգամ էլ «փոքրիկ» զիջումների գնալ թուրքերին (նաև վրացիներին)՝ հայերի պատմական տարածքների հաշվին... Այժմ Ռուսաստանը Հայաստանում լուծում է նաև տնտեսական, մշակութային ու լեզվակրթական լծակների խնդիրը:

Ահա, այս բազմաշերտ իրողությունների մեջ պետք է կողմնորոշվի հայությունը և կարողանա հաստատականորեն հետամուտ լինել հայկական շահերին: Այս առումով միմիայն ազգային-գաղափարական և բարոյական իշխանությունները կարող կլինեն առաջնորդվել զուտ Հայաստանի շահերով՝ խուսափելով այս կամ այն ծուղակից, այս կամ այն պետության ծառան դառնալուց: Հայաստանն ինքը պետք է նախաձեռնող լինի և լուրջ դերակատարում ունենա, հատկապես երբ վերոհիշյալ բոլոր գերտերությունները շահագրգռված են փոքրիկ Հայաստանի գոյության խնդրում (թեկուզ առանց հայերի), իսկ մեր խնդիրը՝ Հայաստանը Հայերի համար և Հայրեն պահելն է, իհարկե, որոշակիորեն հաշվի առնելով նաև նրանց աշխարհաքաղաքական շահերը: Այս պարագայում մենք մեր տարածաշրջանում պետք է նախաձեռնենք և ստեղծենք Իրան-Հայաստան-Ռուսաստան ուղղահայաց և Իրան-Հայաստան-Հունաստան-(Կիպրոս)-Իտալիա հորիզոնական (չորս քաղաքակրթություններ) դաշինքները, որոնք առանցքային են դարձնում Հայոց Պետության դերն ու նշանակությունը Կովկաս-Անդրկովկասում և Մերձավոր Արևելքում (այստեղ քառյակին կարող են միանալ նաև եգիպտական (արաբական) և հնդկական քաղաքակրթությունները, որը կնշանակի Արիական հզոր աշխարհակարգի վերականգնում): Չինական քաղաքակրթության (որը փորձում է սերմեր գցել մեր տարածաշրջանում) այս դաշինքին միանալու դեպքում կփոխվի ներկայիս աշխարհակարգը: Նման ձևով պետք է վերանայել Արցախի հարցով զբաղվող Մինսկի խմբի կազմը՝ այն դարձնելով եվրասիական: Ռուսաստան-ԱՄՆ-Ֆրանսիա եռյակին պետք է միանա Չինաստան-Հնդկաստան-Իրան եռյակը, քանի որ Հայաստանը և՛ աշխարհագրորեն, և՛ պատմականորեն, և՛ տնտեսապես Եվրոպա-Ասիա կապի կարևորագույն ռազմավարական առանցք է: Այս աշխարհաքաղաքականությունը պետք է լինի վերկրոնական ու վերնյութական, ուստի ակնկալվում է ստեղծել հզոր ռազմա-քաղաքական, տնտեսական դաշինք՝ պարուրված զորեղ գաղափարական կաղապարով: Սրա հնարավորությունը տալիս է ՀԱՄԱՄՐԻՎԱՆՈՒԹՅՈՒՆ (ծագում-գեն-արյուն, ցեղ-ազգ -ժողովուրդ, օրրան-պատմական հայրենիք հենքի վրա կառուցված) գաղափարախոսությունը, որը համահունչ է նշված պետությունների ինչպես ազգային-պետական շահերին, այնպես էլ հոգևոր (ոգեղեն)-մշակութային ներդաշնակությանը, նույնիսկ՝ համակեցական պատկերացումների տեսանկյունից: Սրանք են մեր կարծիքով հզոր ու միասնական Հայաստանի վերակերտման ճշմարիտ քաղաքականությունն ու ուղին, որոնք բխում են նաև մեր տարածաշրջանի և հարակից տարածքների որոշ պետությունների (հզորներից՝ Չինաստան, Հնդկաստան, նույնիսկ՝ Ճապոնիա) շահերից: Բազմաբևեռ աշխարհը փոքր երկրների փրկության (գոնե հարաբերական անկախության) նախապայմանն է և համաշխարհայնացման տնտեսական (գլոբալիզացիա) և քաղաքական (միաբևեռ կարգեր, աֆղանական «հակաահաբեկչական գործողությունները» լոկ դրա սկիզբն են) փորձերը կասեցնող լավագույն երաշխիքը, ուստի այն մեր արտաքին քաղաքականության գերխնդիրն է: Միայն արտաքին անկախ քաղաքականություն վարելով՝ կկայունանա ՀՀ ներքին քաղաքականությունը, որն էլ թույլ կտա զբաղվել երկրի տնտեսության իրական զարգացմամբ, սոցիալական ու իրավական հարցերի կարգավորմամբ, հայության ու Հայաստանի հիմնախնդիրների վերջնական դրական լուծմամբ:

Արտաքին քաղաքականության հիմնախնդիրներ

ՀՀ-ի ներքին կայունությունն ու հզորությունը մեծապես կախված է արտաքին աշխարհի հետ հարաբերությունների ճշգրտմամբ ու վստահ քաղաքականությամբ: Ուստի Հայաստանը մշտապես պետք է լինի լուրջ աշխարհաքաղաքական գործոն՝ ինքնուրույն շահերով ու դերակատարությամբ: Արցախ:

Ներկայումս կարևորագույնը Արցախի հիմնախնդիրն է: Այն որքան ճակատագրական է հայերիս առաքելության մեջ, նույնքան էլ կարևոր է մեր թշնամիների ծավալապաշտական նկրտումներում՝ Հայրության Պատմական Հայրենիքը հիմնավորապես «սեփականաշնորհելու», նաև՝ գերտերությունների աշխարհա-քաղաքական շահերի տեսանկյունից: Խնդիրն ավելի քան բարդ է քաղաքականապես՝ հատկապես մեր հակառակորդների համար: Մենք դարերի երկար սպասումից հետո խոսում ենք հաղթողի դիրքից, ուստի թելադրող կողմ ենք, ինչքան էլ ոմանք փորձեն նսեմացնել այդ բացահայտ ճշմարտությունը: Եվ հակառակն ապացուցող պարզապես թուրք է, որը բացի թշնամու կերպարից, մեզ համար նաև հայիոյանք է... մեզ համար նույն թուրքն է նաև՝ որևէ երրորդ պարտադրող կողմ: Արցախի հարցի քննարկումն իսկ Ադրբեջանի կազմում կամ «ընդհանուր պետության» սահմաններում՝ անընդունելի է, որքան էլ «լավագույն» տարբերակներ առաջարկվեն: Եթե նույնիսկ Միացյալ Արցախի գաղափարն առաջարկվի (ԼՂՀ+Դաշտային Արցախ (Գանձակ, Շահունյանի շրջան և այլն)) Ադրբեջանի կազմում: Որևէ զիջում, այդ թվում՝ ազատագրված տարածքներից, կհամարվի դավաճանություն: Փախստականների, տարածքների, փոխզիջումների մասին զրույցները պետք է զրույցներ էլ մնան:

Արցախը Համայն Հայության հարցն է: Եվ այստեղ էլ հակառակը պնդողն ուղղակի ներազգային հակամարտություն առաջացնելու, Հայոց Պետականությունը թուլացնելու միտում ունի, ուստի նույնպես մեզ թշնամի է...

Արցախը, ազատագրված և ազատագրվելիք (Հայկական Բարձրավանդակ) միասնական տարածքը Հայ Ազգի Արարչական Բնօրրանն է և Հայկական (Նահատակ Նախնյաց) Արյան սնուցիչ «Մարմին»-ը: Այն Հավաքական Հայրենիք է, և ոչ մեկ անհատի՝ առավել ևս ստոր դավաճանի սեփական օգտագործման հողակտորը չէ: Արցախը և ազատագրված տարածքները հայրենատիրության լույս առաջին քայլերն են: Դաշտային Արցախ, Նախիջևան, Ջավախք և Արևմտյան Հայաստան վրիժառության ճանապարհին...

Ուստի այլևս ոչ մի թիզ Հայրենի Հող չպետք է զիջվի, այլ պետք է լինի հակառակը: Իսկ Միացյալ Արցախը չզիջելու բոլոր հիմքերը կան: Պատմականորեն (ոչ միայն Հայոց պատմությամբ) փաստն անժխտելի է, ինչքան էլ թուրք-ազերիները իրենց սրա-նրա ժառանգորդը հռչակեն, այստեղ էլ ամեն ինչ ավելի քան հստակ է: Բարոյական ու հոգեբանական հաղթական գործոնները նույնպես մեր կողմն են, և մնում է անրագրել իրավաբանական հաղթանակը: Բոլոր ազգերը փայփայանքով, նախանձախնդրորեն են վերաբերում իրենց ծագմանն ու հայրենիքին, բայց ահա թյուրքական տարրը վայրենաբար հրաժարվում է դրանցից ու իր այլ սրբություններից՝ այլասերելով նաև՝ այլոց սրբությունները... Ուստի սրանց ապացուցելու, հետները բանակցելու միտումներն ունայն են, ստեղծված համատեղ հանձնաժողովներն էլ՝ անիմաստ... լուծումը կտան Հայ Ազգայնականները՝ Հայրենապաշտները: Իսկ առայժմ մեր խնդիրը Հայաստանի հզոր բարեկամներին հիմնավորումներ տրամադրելն է և հարցը օրակարգում հայանպաստորեն պահելը...

- ՄԱԿ-ի նախորդ՝ Ազգերի Լիգան (ԱԼ) 1920թ. իրավացիորեն մերժել է Ադրբեջանի ԱԼ ընդունվելու դիմումը՝ պատճառաբանելով, որ այդ հանրապետությունը չունի. «կայուն կառավարություն և չի վերահսկում այն տարածքները, որոնց հավակնում է»: ԱԼ-ն ուրվագծել է նաև «Լեռնային Ղարաբաղ» վիճելի տարածքի սահմանները, որոնց խնդիրը պետք է կարգավորվեր Փարիզի խաղաղության համաժողովում: Ըստ ԱԼ-ի քարտեզի «Լեռնային Ղարաբաղ» վիճելի տարածքի մեջ էին մտնում ոչ միայն ԼՂՀ-ն ու այսօրվա ազատագրված շրջանները, այլև Գանձակը, Դաշքեսանը, Խանլարը, Նավթալանը, Գեղաբեկը և այլ տարածքներ: Այսինքն, եթե նույնիսկ պատմականորեն շատ հեռու չգնանք, էլի ակնհայտ է, որ առ այսօր ԼՂՀ-ն (հայությունը) փորձել է վերականգնել իր՝ պատմական-օրինական՝ միջազգայնորեն ճանաչված սահմանները, իսկ Ադրբեջանն իր կարճ գոյության ընթացքում երբևիցե միջազգայնորեն ճանաչված հաստատուն սահմաններ չի ունեցել: «Խորհրդային ժառանգությունից» էլ ինքնական հրաժարվել է: Միայն այսքանով ԼՂՀ-ն իրավունք ունի անկախ գոյատևման, որին վաղուց է հասել ու մոտ տասնհինգ տարի է (1989թ. դեկտեմբերի 1-ին) հայտարարել է Մայր-Հայաստանին միանալու իր վճիռը:

- 1921թ. հուլիսի 5-ի ՌԿ(Բ)Կ կենտկոմի կովկասյան բյուրոյի որոշումը՝ Արցախի բռնակցումը Ադրբեջանին, նույնպես որևէ լուրջ իրավական հիմք չի տալիս խորհրդային ժամանակներից եկած, այժմ էլ իբր ԼՂՀ-ն Ադրբեջանի անբաժան մաս դարձրած այդ փաստաթուղթը ճանաչելու և միջազգայնորեն ընդունված տարածքային անձեռնմխելիության իրավունքով առաջնորդվելու համար: Իսկ եթե, այնուամենայնիվ փորձ է արվում բանակցություններում դա համարել կատարված փաստ, ապա ԼՂՀ-ն ներկայումս «դե ֆակտո և դե յուրե» անկախ է, նույնիսկ ավելի՝ քան աշխարհի շատ «իրական» պետություններ: 1991թ. սեպտեմբերին հռչակվել է որպես ԼՂՀ՝ նախկին ԼՂԻՄ-ի և Շահումյանի շրջանի տարածքներում, մոտ 207,7հզ. բնակչությամբ և 5հզ.քառ.կմ տարածքով, իսկ մինչ այդ Հայաստանին վերամիավորվելու փաստն ավելի խոսում է: Մի խոսքով, դեռ ավելի վաղ ԼՂԻՄ-ի պատգամավորական խորհուրդն իր՝ 1988թ. փետրվարի 20-ի որոշման համաձայն, հենվելով ազգերի ինքնորոշման միջազգային իրավունքի վրա, ԼՂԻՄ-ը դուրս է բերել Ադրբեջանի կազմից և հայտարարել միացված Հայաստանին՝ որպես նրա անբաժան մաս: Իսկ 1991թ. դեկտեմբերի 10-ի հանրաքվեի արդյունքում ԼՂՀ-ն հռչակվեց անկախ պետություն, շուրջ 108.6հզ. մասնակիցներից 108.5հզ.-ն վճռաբար «այո» են ասել (ընդամենը 21-ը՝ ոչ): Համոզված ենք, որ գոնե սա կովբյուրոյի կամայական որոշումից առավել իրավական քայլ է, եթե չասենք՝ զուտ իրավական:

- Իրավաբանական «ճեղքվածք» կա սույն հարցում ևս, Ադրբեջանը հրաժարվել է «խորհրդային իրավական անցյալից» և իրեն համարել է 1918-1920թթ. մուսավաթական Ադրբեջանի իրավահաջորդը: Նույն թվականներին Արցախում իշխանությունը Հայոց Ազգային խորհրդի ձեռքում էր: 1920թ. ապրիլի վերջերին մարդու և հաստատվեցին խորհրդային կարգեր, 1921թ. հուլիսին եղավ կով.բյուրոյի տխրահռչակ որոշումը, և միայն 1923թ. հուլիսի 7-ին Արցախի Լեռնային մասը հռչակվեց ինքնավար մարզ՝ Ադրբեջանական ԽՍՀ կազմում: Սրանով Ադրբեջանի հանրապետության հռչակագիրը (նաև արդեն նշված Ազգերի Լիգայի դիրքորոշումը) մեզ է «վերադարձնում» Արցախը (նաև՝ Նախիջևանը), կամ գոնե իրենից իրավացիորեն «հեռացնում» է մեր պատմական տարածքները, նաև՝ Դաշտային Արցախը: Իսկ ինչ մնում է խորհրդային ժամանակների անօրինականություններին, Լեռնի-ստալինյան ստոր բռնարարներին, ապա դրանք լավագույնս հայտնի են ՄԱԿ-ին, ԵԱՀԿ-ին ու ՆԱՏՕ-ին և միջազգային դատարաններում ու այլ ազդեցիկ ատյաններում արդարացի քննարկումների կարիք ունեն դեռևս...

Նախիջևան.

Արցախի հարցը հայ-ադրբեջանական հարաբերությունների կարգավորման մեջ միակ թնցուկը չէ, և մեզ առայժմ «պարտադրված» հարևան պետության հետ լուծելու ենք նաև Նախիջևանի խնդիրը, որը

1921թ. մարտի 16-ի ռուս-թուրքական պայմանագրով ապօրինաբար հանձնվել է Ադրբեջանին: Այսօր խախտված են նաև այդ պայմանագրի Նախիջևանին վերաբերվող կետերը: Իսկ Նախիջևանը Ադրբեջանի մարզ է հայտարարվել 1924թ. փետրվարի 9-ին, ընդհանենը Ադրբեջանի կենտրոնական ոլորտում:

Պատմականորեն Նախիջևանի տարածքը Հայաստանին պատկանելն ապացուցելը որևէ դժվարություն չի պարունակում, սակայն հայ բնակչության բացակայությունը ներկայումս այդ տարածքում դժվարացնում է հարցի ուղղակի բարձրացումն ու տրամաբանական ծավալումը: - Նախիջևանի հարցի բարձրացումը բխում է ինչպես պատմական, այնպես էլ իրավական անհրաժեշտությունից: 1921թ. մարտի 16-ին կնքված ռուս-թուրքական պայմանագրի (նաև՝ 1921թ. հոկտեմբերի 13-ի Կարսի պայմանագրի) մի շարք հոդվածների միակողմանի խախտումներ են արձանագրված, որոնք պետք է հիմնավորապես կարգավորվեն հայ-ռուսական հարաբերությունների ծիրում, եթե այդ հարաբերությունները ձևականորեն չեն համարվում բարեկամական-ռազմավարական: Չնայած Մոսկվայի պայմանագիրը (Հայաստանին վերաբերող հոդվածները) կնքվել է առանց հայերի մասնակցությամբ, և ինքնին ապօրինի է ու մեզ համար անընդունելի, այնուամենայնիվ, ներկայումս կարող է դառնալ «շահեկան» հայերիս համար, եթե Ռուսաստանի Դաշնությունը հստակեցնի իր քաղաքականությունը տարածաշրջանում և վերջնականապես ճշտի իր հարաբերությունները Թուրքիայի ու Ադրբեջանի հետ: Այնպես խախտվել է վերոնշյալ պայմանագրի Նախիջևանի կարգավիճակի մասին հոդվածը.- «Երկու պայմանավորվող կողմերը համաձիտ են առ այն, որ Նախիջևանի մարզը սույն պայմանագրի 1-ն (գ) հավելվածում նշված սահմաններում կազմի ինքնավար տերիտորիա՝ Ադրբեջանի խնամակալության ներքո, պայմանով, որ Ադրբեջանը սույն խնամակալությունը չի զիջի երրորդ պետության»: Սակայն, «համայնավարական եղբայրության» պայմաններում (որը երբեք և ոչ մի հարցում չափեկան չեղավ հայերիս համար), Ադրբեջանի կենտրոնական ոլորտում 1924թ. փետրվարի 9-ին Նախիջևանի մարզը հայտարարվեց ինքնավար (ավտոնոմ) հանրապետություն և մտցվեց Ադրբեջանական ԽՍՀ կազմի մեջ՝ որպես նրա անբաժանելի տարածք: Այս դեպքում խախտվել է նույնիսկ անօրինական պայմանագիրը, և տարածքային ամբողջականության անձեռնմխելիության իրավունքի մասին խոսելն անհեթեթ է:

- Նախիջևանի այսօրվա տարածքը 1918թ. նոյեմբերի 30-ից – 1919թ. հուլիսի վերջերը փաստացի և իրավաբանորեն եղել է ՀՀ կազմի մեջ: Իսկ 1919թ. հուլիսից – 1920թ. դեկտեմբերի 2-ը Շարուր-Նախիջևանը իրավաբանորեն համարվել է ՀՀ տարածք, բայց փաստացի փոխմիփոխ գտնվել է Ադրբեջանի, Թուրքիայի, առանձին վայրերում (օրինակ՝ Գողթն) ՀՀ վերահսկողության տակ, մինչև 1921թ. ռուս-թուրքական չարաբաստիկ պայմանագրի կնքումը: Այս փաստերը ևս իրավաբանորեն հեռացնում են Նախիջևանը Ադրբեջանից և թույլ են տալիս անդրադառնալ մինչև խորհրդային պատմական անցյալին, որից սկզբունքորեն իրաժարվել է Ադրբեջանը:

- 1915-1923թթ. Հայոց Ցեղասպանության ճանաչմանն ուղղված քայլերին զուգընթաց՝ Ադրբեջանում հայերի զանգվածային ջարդերի-տեղահանությունների համատեքստում պետք է արժարծել նախիջևանահայերի ցեղասպանության փաստը, որն իրականացվել է էթնիկական, հոգևոր և ֆիզիկական բնաջնջման նպատակով, որի ընթացքում էլ Նախիջևանը բռնակցվել է Ադրբեջանին: Հետագայում «սպիտակ» ցեղասպանության միջոցով ամբողջապես հայաթափվեց Պատմական Հայաստանի այդ տարածքը: Այս առումով կարծում ենք տեղին կլինի նախիջևանահայերի ցեղասպանության օր ճանաչել 1988թ. նոյեմբերի 29-ը, երբ վերջին հայը պարտադրմամբ լքեց Նախիջևանը, իսկ տեղի բնիկ հայերը զրկվեցին արցախահայերի օրինակով իրենց հայրենիքը պաշտպանելու բնական իրավունքից ու հնարավորությունից:

- Այս հարցի «աշխուժացման» խնդրում մեծ դերակատարություն կարող է ունենալ Իրանը:

Ժամանակին Պարսկաստանի Շահ Աբբաս I-ի (XVII դ. սկիզբ) իրագործած սխալի հետևանքով հիմնականում հայաթափվեց, և այդ տարածքը բնակեցվեց մահմեդական եկվորներով...

Տարածաշրջան.

ա/ Անդրկովկաս (Հարավային Կովկաս).

- Վրաստանի հետ ՀՀ-ն պետք է հաստատի բարիդրացիական հարաբերություններ, սակայն, պետք չէ ցուցաբերել հատուկ վերաբերմունք: Ուժեղ և միասնական Վրաստանի առկայությունը շահեկան չէ ՀՀ-ի համար, մասնավաճ՝ եթե այն հակաթուրքական ճակատում չէ: Անդրկովկասում անհրաժեշտ է որ դերակատարություն ունենա մեկ պետություն, որին «կփայփայեն» աշխարհի ուժեղները, և դա Հայաստանը պետք է լինի: Չի բացառվում, որ հանգամանքների բերումով (եթե ոչ մեր կամքով) առաջանա Ջավախքի «անջատման» հարց, որը Թբիլիսին ամեն կերպ փորձելու է չեզոքացնել: Ջավախքի (Նինոծմինդա-Ախլբալակ-Ախլցխա (իրենց գյուղերով և հարակից տարածքներով)) հարցը հասկանալի պատճառներով առավել հեշտ լուծում կստանա. քան Արցախինը, խնդիրը ժամանակի ու նպատակահարմարության մեջ է: Այս և այլ դրդապատճառներով անհրաժեշտ է բազմակողմանի հարաբերություններ հաստատել Աբխազիայի, Աջարիայի և Հարավային Օսեթիայի հետ (թեկուզ ՀՀ մարզերի մակարդակով), իսկ Վրաստանում պետք է ընդհանրապես աշխուժացնել վիրահայոց գործունը: Վրաստանի հայկական համայնքը անհրաժեշտ է, որ լինի հզոր և ունենա դերակատարություն վրացիների ու մյուս ազգերի միջև առկա հիմնահարցերը հարթեցնելու, միջնորդ լինելու առումով: Վրաստանը այնքան ժամանակ չի լինելու Հայաստանի ռազմավարական դաշնակիցը (բացի մասնակի դեպքերից), մինչև չազատվի տարածքային բաժանումների (որն անխուսափելի է) հարկադրանքից, «ցայտնոտի» մեջ ապավինելու է այս կամ այն ուժին, որը

տարաբնույթ վտանգներ է առաջացնելու տարածաշրջանում: Իսկ ներքին կյանքի կայունությունը կախված է ոչ միայն ինքնավար ու անջատողական հակվածությամբ շրջանների (նաև՝ ներվրաստանյան՝ Սամեգրելոյի, Գուրիայի և Իմերեթիայի ինքնավարություններ) ձեռնարկած իրավական-քաղաքական քայլերից, այլև՝ նեղէնիկական (սվաններ, մեգրելներ, իմերեթցիներ, գուրիացիներ, լեգխունցիներ և այլք) հնարավոր զինված բախումներից: Հատկապես Ջավախքի անջատման պարագայում պետք է լրջորեն քննարկել Աջարիայի հետ (համադաշնորեն, ծովային սահմանով) անկախանալու երկուստեք շահավետ հարցը: Ուստի Վրաստանը նաև կայուն հեռանկարով հարևան չէ, իսկ նշյալ բոլոր գործոնները նրան մղում են այն ռազմաքաղաքական թևը, որտեղ մեր հակառակորդներն են:

Թեև այս ամենին, անհրաժեշտ է նպատակայնորեն զարգացնել տնտեսական, մշակութային ու այլ տիպի հարաբերությունները Վրաստանի հետ, և նույնիսկ փորձել կայուն տեղ ու ազդեցություն ունենալ «վրացական բազմաշերտ շուկայում»:

-Ադրբեջանի հետ հարաբերություններում պետք է առաջնորդվել պարբերաբար զինադադարի քաղաքականությամբ, քանի որ նրա հետ ցանկացած համագործակցություն ժամանակավոր և հարաբերական բնույթ է կրելու: Արցախի և Նախիջևանի հարցերից բացի առկա է փոխադարձ խոր թշնամանք (ջարդեր, տեղահանություններ և այլն) ու էլի տարածքային խնդիրներ: Ադրբեջանի գոյությունը (ինչպես և Թուրքիայի) մշտապես վտանգ է ներկայացնելու մեր պետականության համար, ուստի հայ-ռուսական և հայ-իրանական, նաև՝ եռակողմ հարաբերություններում պետք է քննարկվեն Ադրբեջանի «եռատման» տարբերակները: Պատմական Հայաստանի տարածքներից բացի մյուս տարածքները որոշակիորեն կարելի է «զիջել» Ռուսաստանին և Իրանին՝ օգտագործելով կովկասյան (ՌԴ-ի պարագայում հատկապես Ղաղստանի ազգությունների միջոցով) և արիական-իրանական ազգերի գործուն: Ադրբեջանը ներառյալ պայթեցնելու ծրագիրը երկարաժամկետ է, սակայն իրականանալի: Հեռանկարային ռազմավարական ծրագրում չպիտի լինի նույնիսկ փոքրիկ Ադրբեջանի գոյության փաստը, որը կարող է հնարավոր մեծ Ադրբեջանի պատրանքը պահել Հայաստանի ու Իրանի (երկու Ադրբեջաններ) անվտանգության ոլորտներում: Կասպիցծովյան պարագայում պիտի զարգացնել նաև առկա ադրբեջանա-թուրքմենական հակասությունը, և ռուս-ադրբեջանական ու ղազախա-ադրբեջանական հակասության հեռանկարը: Պետք է առավելագույնս, ըստ նպատակահարմարության, արծարծվեն քրդերի (Կարմիր Քուրդիստան), լեզգիների (Լեզգիստան), թալիշների (Թալիշ-Մուղանյան հանրապետություն) և այլ ազգությունների հետ առնչվող հիմնախնդիրները:

Անդրկովկասյան լուրջ և հաստատուն համագործակցություն երբեք չի եղել, առավել ևս չի էլ լինելու: Հայաստան-Վրաստան-Ադրբեջան համերաշխ կապը կեղծ է, «ուտոպիա» է, որը շահարկում են աշխարհի ներկա իզոլները: Սակայն, չի բացառվում Հայաստանի և Վրաստանի ու Ադրբեջանի տարածքներում արդեն գոյություն ունեցող ու ստեղծվելիք պետական տարաբնույթ կազմավորումների հետ համատեղ Կովկասյան Տան ստեղծումը, որի կազմում, մինչև Հայաստանի հետ միավորվելը, կարող են լինել նաև Արցախ, Ջավախք և Նախիջևան անկախ հանրապետությունները: Բ/ Կովկաս (Հյուսիսային Կովկաս).

- Մեզ ձեռնտու է Կովկասի երկրների ու ազգերի հետ համագործակցությունը Ռուսաստանի Դաշնության կազմում՝ ամենալայն ինքնավարությամբ: Թերևս բացառություն կարելի է անել միայն Հյուսիսային Օսեթիայի (Ալանիայի) հարցում: Սակայն մյուս երկրների ու ազգերի անկախության ձգտման պարագայում, այնուամենայնիվ, Հայաստանը չպետք է մերժողական դիրք գրավի: Բնական ու հայրենամեծիկական ոչ մի պայքար չպետք է մերժվի Արարչաստեղծ Հայության կողմից:

- Օսերը, ինչպես հայտնի է, արիական ծագում ունեն և դրանով ու հիմնախնդիրներով (նաև՝ տարածքային) մեզ շատ մոտ են և Վրաստանի (Հարավային Օսեթիա) ու Ռուսաստանի Դաշնության «արանքում» կարող են մեզ հետ փոխշահավետ գործակցել: Միացյալ Օսեթիան (Ալանիան) անառիկ պարիսպ կլինի նաև «ծովից ծով» կովկասյան մահմեդական համադաշնության ճանապարհին (Ղաղստան, Չեչնիա (Իչքերիա), Ինգուշիա ... Կաբարդինո-Բալկարիա, Կարաչաևո-Չերքեզիա, Աբխազիա), որը կտրում է Կովկաս-Անդրկովկասը Ռուսաստանի Դաշնությունից և թուլացնում է նաև Հայաստանի ռազմաքաղաքական դիրքերն ու աշխարհաքաղաքական նշանակությունը:

Մնացած ինքնավար հանրապետությունների հետ (Ռուսաստանի Դաշնության կազմում) ՀՀ-ն պետք է վարի բազմաձև քաղաքականություն:

- Ղաղստանի հետ անհրաժեշտ է համագործակցել այնտեղ բնակվող ավելի քան վեց տասնյակ ազգությունից յուրաքանչյուրի հետ՝ ստեղծելով առանձնակի հարաբերություններ՝ ըստ նրանց հայաստանամետության կամ հակաադրբեջանական գործոնի (հատկապես՝ Ադրբեջանի մասնատման պարագայում. լեզգիներ, թաթեր և այլք):

- Չեչնիայի (Իչքերիա) և Ինգուշիայի հետ պետք է հարաբերությունները կառուցվեն նրանց և մեր բնիկության կարևորության տեսանկյունից, որոնք կլինեն վերկրոնական հարաբերություններ՝ հայրենիքի կառուցման զաղափարով շաղախված: Այսինքն՝ իրենք կովկասյան բնիկներ են, մենք՝ Հայկական լեռնաշխարհի (Հայ-Արիական), և յուրաքանչյուրս մեր հայրենիքի տերն ենք ու պատմական-իրավական ժառանգորդը: Վերկրոնական ու բնիկության քաղաքականությունը պետք է արմատավորվի առհասարակ բոլոր ազգերի հետ հարաբերություններում: Այն հատկապես պետք է դիմագրավի համաթուրանականությանը (պանթուրքիզմ), որը որևէ կապ չունի մահմեդականության հետ և հիմնավորի թյուրքալեզուների (հատկապես՝ թուրք-ազերիների) ապօրինի ներխուժումը մեր

տարածաշրջան, որի թուրքացման վտանգն արդեն առկա է և սպառնում է տարածաշրջանի բոլոր բնիկներին: Անհրաժեշտ է Չեչնիայի և Ինգուշիայի հետ ներուսաստանյան հարցերում ներգրավել ռուսաստանաբնակ հայ հասարակական, քաղաքական գործիչների, որոնք, միջնորդի դեր կատարելով, իսկապես կմեղմեն առկա լարվածությունը: Առհասարակ, նման քաղաքականություն հայերը պետք է կիրառեն բոլոր հանրապետությունների և Մոսկվայի հետ փոխհարաբերություններում: - Կարարդինո-Քալկարիայի, Կարաչաև-Չերքեզիայի, նաև՝ Ադըղեյի ու Կալմիկիայի հետ հարաբերություններում կարելի է առաջնորդվել «չեզոքության» սկզբունքով, հաշտեցնող հայ համայնքներ ստեղծելով այդ հանրապետություններում: Պետք է հաշվի առնել, որ առաջին երկու հանրապետություններում պառակտման, մասնատման ալիքի վրա հնարավոր է նոր էթնիկ հանրապետությունների առաջացում, որն, իհարկե, առանձնապես մեծ փոփոխություններ չի կատարի տարածաշրջանում, բայց այստեղ էլ կարելի է կարևորել այդտեղ բնակվող հայերի դերը: Սա հայ-ռուսական համագործակցության, լուրջ հարաբերությունների հիմնական ձևերից մեկը պետք է դարձնել:

Անհրաժեշտ է առաջ քաշել Զամակովկասյան տան ստեղծման երրորդ տարբերակը (չեչենական՝ ընդգծված մահմեդական և վրացական՝ զուտ տնտեսական տարբերակներից առանձին), որը կհամախմբի Կովկաս-Անդրկովկասի բնիկ ազգերին՝ անկախ այդ ազգերի պետականություն ունենալ-չունենալու, կրոնահավատամքային պատկանելության հանգամանքից: Այս կառույցի կազմավորումն արդեն իսկ առաջընթաց կլինի հայկական քաղաքականության համար, որի երևան կենտրոնը կպաշտպանի բնիկների շահերը: Կովկաս-Անդրկովկասի և Մերձավորարևելյան մեզ թշնամական ազգերի հետ հարաբերություններում պետք է նպատակայնորեն օգտագործել մահմեդականության (իսլամի) պառակտումը (սունիներ, շիաներ, վահաբիտներ և այլք)՝ ի նպաստ ԶԳ շահերի:

ԶԳ-ում անհրաժեշտ է ստեղծել նաև տարածաշրջանային (այնուհետև՝ համաշխարհային) քաղաքական դաշինք, որում կնդգրկվեն պետականություն չունեցող և փոքրաթիվ ազգերի ու զաճած պետությունների ներկայացուցիչները, որը լրջորեն կբարձրացնի Զայաստանի քաղաքական վարկը և միջազգային կարգավիճակը:

Մերձավոր Արևելք.

- Ընդհանրապես պետք է աշխուժացնել կապերն ու ռազմավարական հարաբերությունները Արաբական աշխարհի հետ, մասնավորապես՝ Մերձավոր Արևելքի: Շատ կարևոր են Սիրիայի, Լիբանանի, Եգիպտոսի, Զորդանանի, Պաղեստինի և Իրաքի հետ ուղղակի կապերը, որոնք հակաթուրքական ստեղծվելիք դաշինքի ամենակայուն թեկնածուներն են (հաշվի առնելով ԱՄՆ-Թուրքիա(նաև՝ Ադրբեջան)-Իսրայել դաշինքը, որին հնարավոր է միանա նաև Վրաստանը): Վերոնշյալ երկրների հետ հարաբերությունները կկրեն նաև լուրջ տնտեսական բնույթ, և այս գործընկերությունը իսկապես շահավետ է, հատկապես՝ երբ հաշվի ենք առնում այդ տարածաշրջանի հարուստ հումքային պաշարները (իհարկե՝ առաջնահերթ նավթն ու գազը): Իրաքը և Սիրիան (Զայաստանի, Կիպրոսի, Զունաստանի, Բուլղարիայի, Իրանի և քրդական գործոնի հետ) կարող են լինել օղակներն այն շղթայի, որն անհրաժեշտության դեպքում կշրջափակի Թուրքիան: ԶԳ-ն պետք է մշակի հստակ ռազմավարություն նշյալ երկրների հետ՝ հնարավոր պատերազմական իրավիճակներում համատեղ գործելու համար: Այս դաշինքի մահմեդական պետությունները կարող են իրականում մեղմել նաև իսլամական գործոնի ազդեցությունը՝ Ադրբեջանի ու Թուրքիայի հետ (նաև՝ Արցախի հարցում) մեր հարաբերությունները (Իսլամական կոնֆերանս, Իսլամական միջխորհրդարանական ժողով և այլն):

- Իսրայելի հետ անհրաժեշտ է հաստատել նրա համար «անհասկանալի» քաղաքական հարաբերություններ: Այն պետք է հստակ լինի միայն փոխադարձ համագործակցության դեպքում: ԶԳ քաղաքական կեցվածքը պետք է «ստիպի» Իսրայելին՝ մշտապես ձգտելու լավ հարաբերությունների ու փոխադարձ ընդունելի համագործակցության: Այդ համագործակցությունը պետք է միտված լինի ոչնչացնելու հատկապես Իսրայել-Թուրքիա-Ադրբեջան դաշինքը, այլապես անիմաստ է Իսրայելի հետ «սիրախաղը», և պետք է կարողանալ ամմիջապես հակադրվել այդ դաշինքին՝ մեկ ուրիշ համարժեքով: Սիրիայի, Լիբանանի, Պաղեստինի, Ռուսաստանի Դաշնության և Իրանի հետ համատեղ անհրաժեշտ է լուրջ դերակատարության հասնել արաբա-իսրայելական հակամարտության մեջ՝ մինչև իսկ միջնորդությունների, հանդիպումների-բանակցությունների վայր կարգելով երևանը:

Մերձավորարևելյան հզոր հայ համայնքի միջոցով կարելի է նախևառաջ հաշտեցման գործունեություն ծավալել մասնավորապես Իսրայել-Պաղեստին խնդրում: Իսրայելի (նաև՝ աշխարհասփյուռ հրեաների) հետ տնտեսական կապեր պետք է հաստատել՝ բացառելով Արաբական աշխարհի ու Իրանի հետ հարաբերությունների փչացումը: Զայաստան-Իսրայել բազմակողմանի կապերի ընդհանուր ջերմացումը նույնպես չպետք է կառուցվի Մերձավոր Արևելքի՝ մեզ բարեկամ պետություններին «լքելու» հաշվին:

- Իրանը մերձավորարևելյան համատեքստում հատուկ նշանակություն ունի և ազդեցիկ գործոն է: Իրանի հետ ԶԳ-ն պետք է վարի բազմակողմանի ու կայուն քաղաքականություն, քանի որ այն այսօր մի պետություն է, որի հետ կարելի է համատեղ լուծել տարածաշրջանային շատ հարցեր, այդ թվում՝ Արցախի ու Նախիջևանի, ինչպես նաև՝ Արևելյան ու Արևմտյան Ադրբեջանների (մեծ Ադրբեջան) հիմնահարցերը: Զամաթուրանականության դեմ պայքարը նույնպես ընդհանուր է, որին զուգահեռ պետք է մեղմվի իսլամական աշխարհի «ազդեցիկությունը»՝ Արցախի հարցի և անիմաստ քրիստոնեական հորջորջվող ԶԳ-ի նկատմամբ: Իրանն այն առանցքային երկրներից է, որի հետ (տարածաշրջանում նաև՝ Զունաստանի ու Ռուսաստանի Դաշնության) Զայաստանը պետք է կառուցի

լուրջ ռազմավարական (քաղաքական, տնտեսական, մշակութային ու այլ) հարաբերություններ, և այդ դաշինքը (հետագայում գուցե դրան միանան Իրաքը, Սիրիան, Լիբանանը և այլն) պետք է ազդեցիկ, նույնիսկ անվերապահ դերակատարություն ունենա մեր տարածաշրջանում (Կովկաս-Անդրկովկաս-Մերձավոր Արևելք), հատկապես՝ ռազմական, քաղաքական ու տնտեսական գերակայության հարցերում: Իրանի բնակչության մի մեծ հատվածի հետ կարելի է առնչվել նաև համաարիականության գաղափարախոսությամբ, որն ակնկալում է ստեղծել Արիական Ազգերի Դաշինք՝ նախապես մեր տարածաշրջանում (որը կգործի համաթուրանականության (պանթուրքիզմ), սիոնականության (սիոնիզմ), ինչ-որ տեղ էլ համաարաբականության (պանարաբիզմ) դեմ՝ չեզոքացնելով նաև քրիստոնեական ու մահմեդական հակադրություններն ու վահաբականության (վահաբիզմ) նկրտումները), Կովկաս-Անդրկովկասի և հարակից տարածքներում բնակվող արիական ազգերի մասնակցությամբ: Այս դաշինքը, հետագայում ծավալվելով, հանդես կգա որպես Համաշխարհային Համաարիական Դաշինք: Իրանի (նաև Ռուսաստանի Դաշնության Իրաքի ու Սիրիայի հետ) անհրաժեշտ է ծրագրավորել քրդական հարցի ծավալման հնարավորություններն ու հետագա զարգացումները, Քրդստանի ստեղծման քարոզչության կարգն ու առհասարակ նպատակահարմարությունը (կամ հնարավոր սահմանները): Իրանի հետ կարելի է համագործակցել նաև իրանահայության մի մասին «աննկատ» ներկայիս Արևելյան ու Արևմտյան Ադրբեջաններ «տեղափոխելու» հարցում՝ հայերին տալով շահագրգիռ արտոնություններ և ազդեցիկ դիրք՝ այդ տարածքներում: Սա պետք է կատարվի ի հաշիվ տվյալ տարածքի թուրք-ազերիների Իրանի արևելյան ծայրամասեր տեղափոխման՝ ապահովելով ԶՀ-ի, Թուրքիայի և Ադրբեջանի հետ սահմանների մերձակայքում հայերի թվային գերակայությունը: Իրանի հետ բանակցային թեմա է նաև 1920-ական թվականներին կատարած սխալն ուղղելու: Թուրքիա - Նախիջևան սահմանազխի թյուրքական «սեպի» (որն առաջացել է տարածքների երկկողմանի փոխանակման հետևանքով) հարցը ինչ-որ կերպ շահարկելու նպատակով:

- Քրդական հարցի լուրջ վերլուծություններից հետո պետք է այն շահեկանորեն կապել Հայկական հարցի հետ և արծարծել ըստ նպատակահարմարության: Քրդական աշխատավորական կուսակցության և այլ երկրների քրդական ուժերի հետ (Սիրիայի, Իրաքի, Իրանի, ՌԴ-ի, նաև՝ ԶՀ-ի) պետք է նախապես ճշտել մեր տարածքային տարածայնությունները և այդուհետ համագործակցել քրդական շարժումների ու զինված պայքարի հետ: Քրդերը պետք է պաշտոնապես միասնաբար ներողություն խնդրեն 1915-1923թթ. Հայկական ցեղասպանության իրականացման մեջ թուրքերին աջակցելու համար և դիմեն ՄԱԿ-ին (և այլ անհրաժեշտ ատյաններին, դատարաններին)՝ ճանաչելու ցեղասպանությունը: Քրդերի հարցը կարելի է արծարծել Համաարիական քաղաքականության մեջ, համաթուրանականության դեմ և այլ տարածաշրջանային հիմնախնդիրներում:

Այս հարցը ունի նաև մի այլ կարևոր հանգամանք, քրդերի այն հատվածը, որը մնացել է իր հին հավատամքին և հավատարիմ իր եզդի տեսակի կոչմանը, շարունակում է պահպանել արևապաշտական հզոր համայնքներ ու լուրջ գործոն է տարածաշրջանում: Սա կարևոր հանգամանք է նաև համաարիականության ոլորտում: Եզդիների հարցը լուրջ մակարդակի կարելի է բարձրացնել Հայաստանի եզդիական համայնքի օժանդակությամբ: Իսկ Սիրիայի, Իրաքի, Լիբանանի ու արաբական այլ երկրների տարածքներում կան արաբներ, որոնք մերժում են իրենց սեմական ծագումը և ծագումնաբանորեն իրենց համարում են Մարդկության Օրրան Հայաստանից եկածների ժառանգներ արիացիներ: Եվ մեր տարածաշրջանում Արիական արաբների ու նաև ասորիների հարցերը նույնպես կարևոր քաղաքական գործոններ են:

- Թուրքիայի հետ հարաբերությունները կարևոր նշանակություն ունեն ԶՀ-ի արտաքին քաղաքականության մեջ: Թուրքերը պատմականորեն ամենաբացասական ազգն են հայերիս համար, եթե չասենք՝ թշնամական: Վերջին հարյուրամյակների մեր գրեթե բոլոր անհաջողությունները (նաև՝ հայրենիքի մեծ մասի կորուստը) կապված են թուրքերի հետ, որոնք բարբարոսաբար ներխուժեցին տարածաշրջան՝ վնաս պատճառելով բոլոր բնիկներին: Սա լուրջ արգելք է հայ-թուրքական հարաբերությունները բարելավելու, առավել ևս՝ բարիդրացիական դարձնելու համար, թեև «մեծ հաշվով» դրա կարիքը չկա, քանի դեռ Հայկական հարցն ամբողջությամբ չի լուծվել: Երկուստեք հարաբերությունների ծիրում չի կարող երբևիցե հանդուրժվել հզոր Թուրքիայի գոյատևումը, թուրանականության (թուրքիզմ) քաղաքական առկայությունը, Հայկական Լեռնաշխարհում թուրքական պետության կառուցումը (ինչպես Ադրբեջանի պարագայում): Նման պետության գոյությունը լուրջ սպառնալիք է Հայոց պետականության համար (Հայ Դատի արդարացի լուծման համար): Թուրքական ներքաղաքական կյանքի ապակայունացումն ու Թուրքիայի հետագա մասնատման հարցերը պետք է մշտապես լինեն մեր պետական արտաքին քաղաքականության և ազգային անվտանգության օրակարգում: Հայոց Մեծ Եղեռնի (1915-1923թթ.) ճանաչմանն ու դատապարտմանն ուղղված քայլերին զուգահեռ՝ անհրաժեշտ է արծարծել հույների, կիպրացիների, կրետացիների, քրդերի, սերբերի, բոսնիացիների, մակեդոնացիների, ալբանացիների, բուլղարացիների ռումինացիների, հունգարացիների, վրացիների, սիրիացիների և այլոց ջարդերն ու տեղահանությունները, 1920թ. օգոստոսի 10-ի Սևրի դաշնագիրը, հայոց պահանջատիրությունը (օգտագործելով սփյուռքահայության հզոր լծակները), քրդական անջատողականությունը, թուրք-արաբական (Սիրիա, Իրաք), թուրք-իրանական, թուրք-հունական սուր հարաբերությունները, ռուս-թուրքական տարածաշրջանային հակամարտությունը և այլն: Թուրքիան ավելի շատ է շրջապատված թշնամիներով, քան մենք, և դա հնարավորություն է տալիս տարածաշրջանի երկրների հակասության

